ԱՐԱՐԱՏ

1907 ԱՄՍԱԹԻՒ ՒՅԾԶ

Տարի Ա. ՄԱՅԻՍ Համար Ե.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՅԻՍ 1907 Թ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

1. Քաղուածք Սինոդի օրագրութիւններից . . 305

ԿՐՕՆԱԿԱՆ

2. Վշտի և տառապանքի բովից. Գ. վ. Յովսէփեան . 400

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

3. Ռուսաց եկեղեցու արտաքին դիրքի կազմը. . 407
4. Հասարակաց երգեցողութիւնը. Ս. Յարութիւնեան . 409
5. † Կ. Պ. Պոբեդոնոսցև. Ս. Յարութիւնեան . . 412
6. Բողոքական եկեղեցի 321
7. Քրիստեան բանակի ընկերական (սոցիալական) դործունէութիւնը Անգլիայում. ազատ թարգմ. դերմ. Ա. Գալոտեան 415

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

8. Ժողովները եկեղ. կեանքում. Գ. վ. Յովսէփեան . 423

ՄԱՏԵՐ ԱՌՈՒ 431

ՏԱՃԿԱՀԱՅԵՐ 433

9. Կարգալուծութեան կոնդակ. Կ. Պօլսոյ Պատրիարքի. 434
10. † Ռեթէոս էֆ. Պերպերեան 436
11. Պատուիրակութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի Սանկտ Պետերբուրգ Հայոց դպրոցների մասին (1885 ամի) . 437

ԳՐԱԿԱՆ

12. Քրիստոսի հետքով. Թարգ. Մամբրէ վարդապետ . 449

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

13. Հայք ի Կ. Պոլիս XX. դարու սկիզբը. դրեց Արծրունի. Փարիզ 1906. 67 էջ. Երուանդ վ. . . . 460
14. Извѣстія Кавказскаго географическаго общества. Գ. 464
15. Կ. Պոլսի՝ 1907 թ. օրացոյցները. Էմմ. ք. Նազարեանց. 466

ԳԻՏԱԿԱՆ

16. Կրօնի և կրօնի գիտութեան էութիւնը. Երուանդ վ. 471

Ա Ր Ա Ր Ա Տ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1907—ՌՅԾԶ

Տարի Ե.	ՄԱՅԻՍ	Համար Ե.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

—**—

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Յ 9-ն ապրիլի Սինոդն ճանաչելով զՏ. Աբրահամ քահանայ Տ. Կարապետեան հսկող Սաղմոսավանից՝ հրաժայեաց սահմանել նմա ռոճիկ ուէթ լուբլիս առ ամիսն։ Հ. 344.

Ի 11-ն ապրիլի Սինոդն պատուիրեաց Վարչութեան տպարանի առաջի առնել Սինոդիս զմի հազար ուէթ հարիւր երեսուն և ինն լուբլիս և իննսուն կոպ. (1839 ը. 90 կ.) *և գանձապահի Սինոդիս դրել զայն ընդ յոդուածով աւանդի դրամոց վասն տպագրութեան Աստուածաշունչ Ս. Գրոց։* Հ. 348.

Ի 13-ն ապրիլի Սինոդն հրամայեաց չրջաբերական հրամանաւ պատուիրել ամենայն Կոնսիստորիայից Հայոց, զի վերստին առանձին տուրք ի նպաստ Ձեմարանի, որ ընդ պահպանմամբ։ Հ. 354.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային Երևանայ տալ ձեռնադրել զՍամսոնն Դաւթեան քահանայ ս. Ծով. եկեղ. Երևան քաղաքի։ Հ. 356.

Ի 16-ն ապ. Սինոդն մերժեաց զմիջնորդութիւն լուսաբ. բարեպ. Տ. Դաւնդ եպիս., որ վասն վարձելոյ երդիչս—

զընթացաւարտան Գրիգոր Քեսապալճեան և Արշակ Մի-
րիջանեան ի սպասաւորութիւն Մայր Տաճարի, զի կէս-
ժամն արդեանց Մ. Աթոռոյ ծախիւ ի պահպանութիւն
ձեմարանի, յորոյ ի խնամս վայելեն իբրև երեք հարիւր
ժառանգաւորք աշակերտք Մեծի տանս, որոց և պարտիք
են սպասաւորել ի տաճարի Մ. Աթոռոյ։

Զայսմանէ ամենախոնարհ յայտարարութեամբ զեկու-
ցանել Նորին Ս. Օծութեան՝ խնդրելով, զի Նորին Սրբու-
թիւնն հաճեսցի տալ պատուէր վարչութեան ձեմարանի
առաքել զերգիչս յաշակերտաց ի սպասաւորել յեկեղեցւոջ։
Հ. 359.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել Տ.
Մեսրոպ վարդապետի Տ. Մովսէսեան անյապաղ առաջի
առնել Սինոդիս զուրթ հարիւր (800) ռուբլիս տակաւին
հանդերձ առ ի գործադրել ըստ ցանկութեան նուիրա-
տուին. իսկ Լևոն վարդապետի առաջի առնել Սինոդիս
զգուշակ կողպատեալ եկեղեցեացդ վիճակին և թէ զորպիսի
անօթս և զարդս անհրաժեշտ հաւարի վասն եկեղեցեացդ։
Հ. 360.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային
Երևանայ տալ ձեռնադրել զՅարութիւն Յովհաննիսեանց
ի քահանայ Իլլի Ղարաքիլիսա գեղջ։ Հ. 363.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային
Երևանայ տալ ձեռնադրել զԱդամ Մելիք Ղուբաթեանց
ի քահ. Ջիքդամալ գեղջ։ Հ. 365.

Ի 18-ն ապրիլի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային
Վրաստանի յանձն առնել երդ. հաւատ. Նիկողայոսի Քա-
լանթարեան տալ վախճան գործոյ կալուածոցն վանուց
Հաղբատայ ընդունելով ի Միքայելէ Աբամեան ի վիճելի
կալուածոցն դես. 500. ի սեփականութիւն վանուցն Հաղ-
բատայ և կարճել զգործն. 366.

Ց 2-ն Մայիսի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային
Երևանայ տալ փոխանորդին Տ. Մատթէոս վարդապետի

ի վիճակային արդեանց ի ծախս ճանապարհի ի պաշտօնատեղի իւր ռուբլիս 25։ Հ. 363.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել Գանձասարի Սինոդիս տալ Իսահակ վարդ. Տ. Միքայելեան առ ամիսն 50 րուբլիս սկսեալ ի 1-էն մայիսի այսր ամի ցնոր տնօրինութիւն Սինոդիս։ Հ. 384.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց ազատ կացուցանել զԼոռեցւով վարդ. ի պաշտամանէ անդամութեան վանական կառավարութեան, ի տեղի նորա կարգել զԸնձակ վարդ. և ի նախագահ զԱնտոն վարդ. յանձն առնելով նմա և զպաշտօն դանձապահի կառավարութեան։ Հ. 385.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել վանահօրն Մոզնւոյ վանուց Ընձակ վարդապետի յանձն առնել Բառնաբաս վարդ. զամենայն հաշիւս և զգոյս վանուցն Մուշնւոյ։ Հ. 386.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց կարգել ի պաշտօն Նախագահի վարչութեան տպարանի Մ. Աթոռոյ զՏ. Երուանդ վարդապետեան՝ պատուիրելով ընդունել օրինաւոր արձանագրութեամբ ի նախկին նախագահէ վարչութեան տպարանի զամենայն դրամական և զայլ հաշիւս։ Հ. 387.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել Կոնսիստորիային Վրաստանի հատուցանել Տ. Իսահակ վարդապետի զերկկերիւր չիսուն րուբլիս և երկրորդ տալ հրաման Գանձասարի Սինոդին հատուցանել Տ. Իսահակ վարդապետի մի հարիւր ռուբլիս ի ծախս ճանապարհի։ Հ. 388.

Ց 7-ն մայիսի Սինոդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Ատրպատականի ընդունել զբնակիչն Նեղքին–Ագուլեաց գեղջ. զԱբրահէս Ռոստոմեանց, ի հոգևոր կոչումն առ ի ձեռնադրել զնա քահանայ Լոռւոյ, Կարապետի և Ուչդերէ գիւղից Ջերնոմորեան նահանգի, դարձուցանելով զվկայական ընծայացուին։ Վասն ձեռնադրութեան թոյլ

տալ Կոնսիստորիային առաքել զընծայացուն յո և պատշաճ համարեցին։ Հ. 398.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել Կոնսիստորիային Երևանայ պահանջել զպարտիս 621 ր. 90 կ. հանգուցեալ Գարեգին քահանայի Հախուերիս դեղջ ի ժառանգաց նորա։ Հ. 399.

Ց 8-ն մայիսի Սինոդն հրամայեաց պատուիրել Դանձապահի Սինոդիս տալ Տ. Մխիթար և Տ. Ներսէս վարդապետաց զմի մի հարիւր ռուբլիս ի ճանապարհածախս մինչ ցվանս ս. Խաչի Ն. Նախիջևանի, այլ և զմիաբանական ռոճիկս նոցին վասն այսր մայիս ամսոյ հանդերձ աննդադրամովք։ Հ. 405—406.

Ամուսնալուծութիւնք

Ց 9-ն ապրիլի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստ. Վրաստանի՝ հրամայեաց լուծանել զպսակ Ալեքսանի Ռևազեանց ընդ կնոջն Սոփիայի, միայն առնն տալով իրաւունս մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 343.

Ի 11-ն ապրիլի հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստ. Երևանայ՝ հրամայեաց լուծանել զպսակ Ալեքսանի Գասպարեան ընդ կնոջն Իսկուհւոյ, միայն առնն տալով իրաւունս մտանել յամուսնութիւն։ Հ. 345.

Ի նմին թուի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիս. Վրաստանի՝ հրամայեաց լուծանել զպսակ Յովհաննիսի Բիլոյեան Բիլհեանց ընդ կնոջն Վերայի Յովհաննիսեան, առնն և եթ տալով իրաւունս մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 346.

Ի նմին թուի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիս. Բեսարաբիոյ՝ հրամայեաց լուծանել զպսակ Մարեմայ Յարութիւնեան ընդ Կարապետի Տ. Գաբրիե-

Էլեան, կնոջն միայն տալով իրաւունս ժառանգել ի նոր ամուսնութիւն։ Հ. 373.

Ը 2-ն մայիսի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն կոնսիս. Բեսարաբիոյ՝ հրամայեաց լուծանել զպսակ Եղեայ Ա.նաճեան ընդ կնոջն Աննայի, կնոջն միայն տալով իրաւունս ժառանգել ի նոր ամուսնութիւն։ Հ. 380.

Ի 4-ն մայիսի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն կոնսիստորիային՝ լուծանել զպսակ Հայրապետի Նազարեանց ընդ կնոջն Վարդուհւոյ Մարտիրոսեան՝ կնոջն և եթէ տալով իրաւունս ժառանգել ի նոր ամուսնութիւն։ Հ. 390.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՎՇՏԻ ԵՒ ՏՈՒԱՊԱՆՔԻ ԲՈՎԻՑ

Ա.

Անցաք մի՛ք ընդ հուր և ընդ ջուր և հանի՛ր զմեզ ի հանգիստ. Սաղմոս

Սովորական հասկացողութեամբ վիշտը, տառապանքը չարիք է։ Մեր բարեկամներին ու սիրելիներին վիշտ, նեղութիւն չենք ցանկանում, որովհետև դրանք կեանքի բացասական կողմերն են, բաղդատութեան և երջանկութեան հակադիր երևոյթները։ Վիշտը, նեղութիւնը, տառապանքը իրենց յարակից երևոյթներով չարիք են. նոքա ընկճում են մեզ բարոյապէս և նիւթապէս, տխրութեան և հոգսի մռայլ քողով ծածկում մեր կեանքի ընթացքը, այն ինչ ապրել նշանակում է վայելել կեանքը իւր բոլոր բարիքներով, առողջ, զուարթ, անհոգ, շրջապատուած մարմնաւոր և հոգևոր հարազատներով։

Բայց այսպէս է կեանքի միայն մակերևութային, արտաքին ըմբռնումը։ Վիշտը, նեղութիւնը, տառապանքը միայն չարիք չէ։ Նոքա կարող են նաև բարձրագոյն բարեաց պատճառ լինել։ Վերցնենք մեր առօրեայ կեանքում կրկնուող երևոյթները, որոնք նեղութեան և վշտի աղբիւր են համարւում։ Աղքատութիւնը, օրինակ, մի չարիք է։ Նա մեզ անքուն գիշերներ է պատրաստում, հոգսերով լցնում մեր հոգին։ Ի՞նչպէս պէտք է խնամենք մեր ընտանիքը, ի՞նչպէս դաստիարակենք մեր զաւակներին... Բայց այդ նոյն աղքատութիւնը բարիք է, որովհետև մեր մէջ զօրացնում է տոկունութիւնն ու կամքի կորովը։ Մեր ընտանիքի, մեր սիրելի զաւակների սէրը մղում է մեզ դէպի աշխատանքը. մի ազնիւ զգացմունք

և գիտակցութիւն կրկնապատկում է մեր ուժերը, թէ այս նեղութիւնն ու աշխատանքը մի բարձրագոյն նպատակի համար է, մեզ համար թանգագին էակների կեանքի պահպանութեան համար։ Տառապանքով և նեղութեամբ է ձեռք բերւում այն մի կտոր չոր հացը, որ ուտում ենք մեր սիրելիների հետ, բայց աւելի քաղցր, քան այն ճոխ սեղանները, որոնց համար քրտինք չէ թափուած։ Սիրոյ և անձնուիրութեան զգացումը ոչ միայն թեթեւացնում է մեր աշխատանքի ծանր բեռը, այլ և հաճոյք պատճառում։ Վերջապէս ազնիւ աղբատը ազատ է այն մոլութիւններից, որ հարստութեամբ է պայմանաւորուած. հարստութիւնը մեզ հակամէտ է դարձնում դէպի շռայլութիւնն ու զեղխութիւնը, դէպի աշխարհի բազմատեսակ գայթակղութիւնները։ Հարստութիւնը յաճախ մեռցնում է մարդու մէջ ազնիւ աշխատանքի զգացումը և միայն վայելքի ստրուկ դարձնում։

Հիւանդութիւնը նոյնպէս մի չարիք է, նա ոչնչացնում է մեր ֆիզիքական ուժերը, յաւ և տանջանք պատճառում։ Բայց նոյն հիւանդութիւնը նրբացնում, մաքրում է մեր զգացումները։ Ծնողները նկատած կլինեն, թէ ինչպէս իրենց կոպիտ և վատ հակումներ ցոյց տուող երեխաները հիւանդութեան ժամանակ նկատելի քնքշութիւն են ցոյց տալիս, չոյում են իրենց մօրը, հարազատներին, խոստանում են այլ և այլ չարութիւն չանել, չնեղացնել։ Զարմանալ և երկարատև հիւանդութիւնների ժամանակ մարդիկ ևս ենթարկւում են այդպիսի փոփոխութեան, նրանց զգացմունքները նրբանում են, մաքրւում։ Սոյա մասին վկայում են նշանաւոր անձնաւորութիւնների խոստովանութիւնները։ Պօղոս առաքեալը իւր մարմնի տկարութեամբ և խայթով էր պարծենում, որովհետև այդ տկարութիւնը ոչնչացնում էր նորա մէջ ամբարտաւանութեան զգացմունքը, և «զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»։ Բայց թողնենք պատմութեան հեռաւոր վկաները. ուրախ նշանաւոր հեղինակ Գոգոլ իւր կեանքի վերջին օրերում չեշտում է հոգու այդ վիճակը, իսկ մեր ժա-

մանակի հանճարեղ վիպասանն ու փիլիսոփան՝ Լեւ Տոլստոյ՝ իւր ծանր հիւանդութեան առթիւ նկարագրում է, թէ ինչպէս մարմնական ուժերի թուլանալով՝ զօրանում էր իւր հոգին և ինչպէս կազդուրուելու հետ՝ կորցնում էր այս զգացումը։ Ֆիզիքապէս զօրեղ և առողջ մարդուն աւելի յատուկ է կոչտութիւնն ու կոպտութիւնը, յաճախ նրանք զուրկ են լինում քնքոյշ և նուրբ զգացումներից։

Վշտի ամենամուր զգացումն ու արտայայտութիւնը հարազատի կորուստն է, երբ ծնողները զրկւում են իրենց զաւակներից, քոյրերն իրենց եղբայրներից, զաւակներն իրենց ծնողներից։ Կկամենայինք մեր կեանքը նոյնան տալ, որ նա աչքերը բանար, կրկին ապրէր. կկամենայինք մեր սիրելու նշխարների հետ թաղել և մեր սիրտը, որ այնպէս գալարւում, կտոր կտոր է լինում մեր կրծքի մէջ։ Բայց անողոք մահը աչք չունի տեսնելու մեր տանջանքը, լսելու մեր հառաչանքը։ Ծանր է մերձաւորի, թանգագին անձի կորուստը։ Սակայն այս խորին վշտի մէջ կայ մի վսեմութիւն. սգաւորի հոգին, մանաւանդ առանձնութեան մէջ, վերանում է իւր սիրելու հետ երկնային եթերները, նորա հետ ապրում, նա ևս կարւում է այս աղցաւոր և եսական աշխարհից և խորասուզւում նորա թանգագին յիշողութիւնների մէջ։ Խորին վիշտը մաքրում, սրբում է մարդկային հոգին։ Եւ այս մաքրութիւնն ու վսեմութիւնն է, որ ինչպէս սրբազան լրջմտութեան և խազաղութեան մի շղարշ, նստում է որդեկորոյս մօր տխուր դէմքին և կարեկցութեան ու ակնածութեան զգացում շարժում շրջապատի մէջ։ Վիշտը մեզ ներքին փորձառութիւն է տալիս, բայց անում մեր հոգու վսկսած աչքերը տեսնելու և համակուելու ուրիշի ցաւերով։

Բ.

Պատմութիւնն ու կեանքը բազմաթիւ օրինակներ են տալիս թէ ինչպէս վշտի և տառապանքի բովից վերա-

ծընուում են ազգերն ու նոցա բարոյական մեծ հերոսները։ Եթէ անհատական դժբաղդութիւնները իրենց բազմատեսակ երևոյթներով կլթուում, բարձրացնում են նոյն անհատին և նոցա մօտիկ շրջապատին միայն, ընդհանուր ազգային դժբաղդութիւնները դաստիարակում են ամբողջ հասարակութիւններ և ազգեր։ Ցավրի արդարութիւնը վշտի, տառապանքի և անարգանքի մէջ փորձուեցաւ, Իսրայէլի կրած տառապանքներից ծնուեցաւ Մովսէս մեծ մարգարէն և հայրենասէրը։ Տառապանքի և վշտի բովից անցած ժողովրդի վերածնութիւնն է երգում սաղմոսերգուն և մեր ընտրած բնաբանի մէջ։ Կե. սաղմոսը դոհանական մի օրհներգութիւն է այն ազատութեան համար, որ Եհովան իւր ժողովրդին անարդ ստրկացումից, բաբելոնեան գերութիւնից դէպի հայրենիք և փրկութիւն առաջնորդեց։ Նա թարգման է հանդիսանում բարեպաշտների այն մաքուր զգացման, որ ծագել էր միայն տառապանքի վշտի բովից անցնելուց յետոյ։ Ժողովուրդը կորցրել էր ամեն ինչ, որ թանգագին էր. հայրենիք, ստացուածք, թագաւորութիւն, ազատութիւն, որովհետև չէր լսել կայծակնաշողութին մարգարէների քարոզները, և բարոյական անկման ճանապարհն էր ընտրել։ Օտար երկնքի տակ միայն, գերեվարների ծաղրին և անարգանքին ենթարկուելուց յետոյ՝ Բաբելացւոց գետերի ափին նստած, ողբում են իրենց կորուստը։ Որպիսի սրտառուչ խրատ արդարութեան և ճշմարտութեան ճանապարհից չեղուած ազգերի համար։ Դուցէ այնտեղ սրտաբուստ այնքան էլ անտանելի չէր. նիւթական հարստութեան հետամուտ տարբերի համար Բաբելոնը դուցէ մի նոր եգեմ էր, առաւել թանգագին մի հայրենիք, ուր իրենց վաճառականական և հարստանալու հակամէտ ձգտումների համար աւելի լայն ասպարէզ և դիւրութիւններ կային, քան աւազոտ և ժայռոտ Պաղեստինում։ Եւ յիրաւի ժողովրդի միայն մի փոքրիկ մասը վերադարձաւ հայրենիք, այն մասը, որ իրօք տառապում էր իւր հոգու խորքում թանգագին կորուստների համար, այն մասը, որ անյագ ցանկութիւն

էր զգում կրկին հայրենի հողի վերայ հանգչել և նորա աւերակները նորոգել։ Անցեալի այս օրհնեալ վիշտն ու տառապանքն է, որ սաղմոսերգուն «հոսր և ջուր» է անուանում, և որից անդադրում յետոյ Իսրայէլի վրկութիւնն ու Երուսաղէմի նորոգութեան գաղափարը ծագեց։

Գ.

Աւդարև խորին, իսկական վիշտը, դժբաղդութիւնը մի հնոց է, ուր զտւում են մարդկային լաւագոյն զգացմունքները։ Ամենամեծ դպրոցը բարոյական վերածնութեան համար գուցէ վշտի և տառապանքի դպրոցն է։ «Կարիքը աղօթել է սովորեցնում»։ Այն անձինք, որոնք իրենց օրերը անց են կացնում անհոգ, կեր ու խում մի, զւարճութեան մէջ, ժամանակ և փորձառութիւն չունեին իրենց շրջապատի վշտերով և տառապանքներով համակուելու։ Վիշտն ու տառապանքը կեանքի անհրաժեշտ մի կողմն է, որտեղից վշտակցութեան, կարեկցութեան, ուրիշ լաւագով գթութեան և սիրոյ աղնիւ զգացումն է ծագում։ Այդպիսի սէրն է մարդկային առաքինութեան արմատը։

Ուրիշների դժբաղդութիւնը, աղքատութիւնը, բարոյական և նիւթական թշուառութիւնը կարեկցութիւն է շարժում մեր մէջ, օգնում և խնամում ենք որբին ու անտանկին, հիմնում ենք որբանոցներ, անկելանոցներ, ապաստանոցներ, կրթական և բարեգործական ամեն տեսակ հաստատութիւններ։ Օգնութեան ձեռք ենք մեկնում քաղցածներին, բարոյական ապականութեան և տիղմի մէջ ընկած մեր եղբայրներին և քոյրերին, կրթութիւն և լոյս ենք տարածում խաւարի ստուերների մէջ թափառող ժողովրդին . . . . ։ Աշխարհը վշտի և տառապանքի հովիտ է, բայց նորա մէջն են գղխում և հոսում նաև օրհնութեան ու կարեկցութեան աղբիւրներն ու զովարար վտակները։

Այս ցուցումներն արդէն մեզ առաջնորդում են դէպի վշտի և տանջանքի բարձրագոյն աստիճանը, որ մարդկային կատարելութեան պատկն է։ Ուրիշների կողմից եղած անիրաւ ղրկարտութիւնները, բամբասանքները, հալածանքները յաճախ բարձրացնում են մեր հոգին, որ չափ ևս առաւել այն վշտակրութիւնն ու չարչարանքը, նիւթական և բարոյական զոհողութիւնները, որ յանձն ենք առնում դիտակցաբար յանուն գաղափարի և ընկերոջ փրկութեան։ Այստեղ արդէն վիշտը դէպի բարձրագոյն առաքինութիւնն ու հերոսութիւնն է տանում. վիշտ կրել բարիք անելու պատճառով։ Եւ յիրաւի մեծ մարգասէրներն ու հայրենասէրները ոչ այլ ինչ են, եթէ ոչ իրենց շրջապատի, ազգի, մարդկութեան վշտակիրները. նրբա տառապում են մեր ձեռաւորի և ընկերոջ վշտերով ու ցաւերով։ Այս զգացումն է, որ մղում է նրանց դէպի անձնուիրութիւն, թեթևացնելու ընդհանուրի տառապանքը։

Ահա այս բարձրագոյն վիշտն է, որ քրիստոնէութեան մէջ նուիրագործուել է և հոգևոր փրկութեան, և դրական կեանքի հիմք ընդունուել։ Որտեղ կարող ենք աւելի մեծ վշտակիր, անմեղ դատապարտեալ որոնել, քան Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան մէջ։ Նա, որ միայն բարիք էր գործել իւր շրջապատի և ժողովրդի համար, որ բժշկել էր հիւանդներին, կաղերին, կոյրերին, սրբել էր բորոտներին, Նա, որ կորուսեալների հովիւն էր, մեղաւորների սրտացաւ բարեկամը, արդարութեան, սրբութեան, ճշմարտութեան և սիրոյ մարմնացումը, մահուան է դատապարտւում իբրև մի աւազակ։ Բայց ճիշտ է իւր անձնաւորութեան բոլոր մեծութեամբ երևում, քան Գեթսեմանի պարտիզի տեսարանում, թուքի և անարգանքի ենթարկուած ժամանակ, խաչի ծանրութեան տակ Golgothայի ճանապարհին և մահուան տագնապների մէջ իւր թշնամիների համար թողութիւն խնդրելիս։ Այս անլսւր վշտակրութիւնն ու դատապարտութիւնը նորա երկ-

բաւոր կեանքի ամենաբարձր րոպէն էր, այդ այն գիտակցութիւնն էր, թէ խաչի ճանապարհով պիտի մարդկութեան Փրկիչը հանդիսանար։

Խաչակիր Քիստոսի պատկերը կեանքի առաջնորդ, տառապանքների և վշտերի բովից անցնող մարդկանց խրախոյան ու մխիթարութիւնը պէտք է լինի։ Վիշտն ու տառապանքը ոչ անհատների, ոչ ազգերի համար չարիք չէ, եթէ նոքա կրում են մի աւելի բարձր նպատակի համար։ Ոչ միայն հարստութիւնը, երկրաւոր բարիքը, այլ և վիշտն ու տառապանքը, սոփն ու հալածանքը, ամեն ինչ միջոց պիտի լինի մեր և մեր շրջապատի բարոյական դաստիարակութեան և հոգևոր վերածնութեան համար։ Ա՛խ, եթէ մենք էլ վշտի և տառապանքի բովից անցնելուց յետոյ՝ սաղմոսերգուի նման Աստուծոյ անունը օրհնել կարողանայինք և ասել. «Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ ի հանգիստ»։

Գ. վ. Ծովսէփեան

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՀՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Բարձրագոյնս հաստատուած են ռուսաց եկեղեցու առաջնակայ արտակարգ ժողովի կազմն և գործավարութեան կարգն վերաբերեալ հետևեալ օրէնքները։

1. Ժողովը կազմուում է եպիսկոպոսներից, կղերիկոսներից և աշխարհականներից։

2. Թեմակալ եպիսկոպոսները անպայման մասնակցում են ժողովին, իսկ փոխանորդ և անպաշտօն եպիսկոպոսները մասնակցում են ժողովին ս. Սինոդի հրաւերանօք։

3. Այն թեմակալ եպիսկոպոսները, որոնք չեն կարող ներկայ գտնուել ժողովին յարգելի պատճառով, ուղարկում են իրենց տեղապահներին, հոգևորական անձերից, ձայնի իրաւունքով։

4. Ժողովի հրաւիրուած կղերիկոսներն ու աշխարհականները մասնակցում են ժողովի բոլոր գործերի ու խնդիրների քննութեանը, սակայն ժողովի որոշումներն ու վճիռները կազմում ու ստորագրում են, մի միայն եպիսկոպոսները կամ նրանց տեղապահները։

5. Խնդիրները նախապէս մշակելու համար կազմուում են, ինչպէս եպիսկոպոսներից, նոյնպէս և կղերիկոսներից և աշխարհականներից, առանձին քննիչ յանձնաժողովներ, եթէ ժողովը կարևոր կը համարի, որոնք և իրենց եզրակացութիւնները առաջարկում են ժողովի քննութեանը։

6. Իւրաքանչիւր թեմից եպիսկոպոսի հետ միասին ժողովի են գալիս երկու անդամ. մէկը կղերականներից, միւսը աշխարհականներից։

7. Պալատական և զինուորական հոգևորականութիւնից աւագ քահանաների հետ ժողովի են գալիս երկուական անդամ, մէկը քահանաներից և միւսը եկեղեցու երեսփոխաններից՝ աւագ քահանայի ընտրութեամբ։

8. Թեմական ընտրութիւնները ժողովի համար կատարուում են ծխական, գործակալական շրջանի և թեմական ժողովներում: Ծխական ժողովներում իւրաքանչիւր հոգևորականի դէմը ընտրուում է մի աշխարհական ներկայացուցիչ: Գործակալութեան հոգևորականները ծխական ներկայացուցիչների հետ գործակալական ժողովում ընտրում են իրենց միջից մի քահանայ և մի աշխարհական թեմական ընտրական ժողովի համար: Վերջինս իւր կազմի միջից ընտրում է երեք հոգևորական և երեք աշխարհական, որոնցից թեմական առաջնորդը հաստատում է մի քահանայի և աշխարհականի ժողովին մասնակցելու համար: Այդ ընտրութեանց կարգը որոշուում է ս. Սինոդից մշակած յատուկ կանոններով:

9. Ժողովին մասնակցում են անդամի իրաւունքներով և Սինոդի հայեցողութեամբ ներկայացուցիչները վանքերից, հոգևոր ճեմարաններից և այլ եկեղեցական հաստատութիւններից, նոյնպէս և մասնաւոր անձինք, որոնք յայտնի են աստուածաբանական հմտութեամբ կամ պէտք եկեղեցու լուսաւորութիւն ունեցած սիրով և առ հասարակ իրենց ունեցած ջերմեռանդութեամբ պէտք եկեղեցին:

10. Ժողովին նախագահում է ս. Սինոդի նախագահը, իսկ մեռս երկու մեարոպոլիանները ներկայանում են իրրև տեղապահներ:

11. Ժողովի գործավարութեան համար ս. Սինոդի կողմից կազմուում է ատենագպրութիւն սինոդական ծառայողներից, որ ենթարկուում է ժողովի նախագահին. և գործակցութիւն կարող են հրաւիրուել գիտնական աստուածաբաններ և կանոնիկոններ:

12. Ժողովի նիստերը պէտք է բաց լինեն, սակայն մի քանիսը կարող են լինել նաև գաղտնի, եթէ այդ անհրաժեշտ է համարուում ժողովը. ըստ որում կողմնակի անձանց թոյլատուութեան կարգը որոշուում է ս. Սինոդից հաստատուած կանոններով:

13. Ժողովի աշխատանքները հրատարակուում են գիւտանագպրութեան կողմից կամ համաւօտ տեղեկութեանց կամ ատենագրաֆիական հաշիւների ձևով:

14. Ժողովի տեղ նշանակուում է Մոսկուան:

Մոսկուայում Սինոդի տպարանից լոյս կտեսնէ Յովհաննու աւետարանը Ուկրայնի բարբառով, ապա կվերջանան Մատթէոսի և Մարկոսի աւետարանները սլաւոն բնագրով միասին. ապա կսկսուի լոյս աւետարանիչների տպագրութիւնը միասին միայն Ուկրայնի բարբառով։

Յայտարարելով այս լուրը „Церк. вѣст.“ նկատում է, որ ընդհանրապէս սուրբ և աստուածպաշտութեան գրքեր զանազան լեզուներով և բարբառներով, ինչպէս և թարգմանականները, չափազանց քիչ են տպագրուում։

Ռուսաց Սինոդի որոշումը. Մայիսի 12-ին Սինոդը քննութեան նիւթ դարձնելով այն հանգամանքը, որ պետական Դուման՝ յեղափոխական կուսակցական պատկանող մի քանի անդամ քահանաները բացակայում էին մայիսի 7-ի Դումայի նստից, ուր քննուում էր Կայսեր կենաց դէմ դաւադրութեան առթիւ արուած հայտարարութիւնը և գրանով յայտնի կերպով խուսափում էին կայսերատրան մատգրութիւնը պահպանելուց՝ հրամայեցին յանձնարարել Անտոն Մեծոպոլիտին՝ հրաւիրել յիշեալ քահանաներին և յայտնել, որ պարտաւոր են բացատրութիւն տալ Դումայի նիստից բացակայելուն առթիւ և անյապաղ թողնել այն կուսակցութիւնները, որոց պատկանում են՝ հրաժարուելիս պէտս այն մասին յայտարարելով. նախ պահանջը կատարել չուշացնելու դէպքում, պարտաւոր են կոմսին հրաժարուիլ քահանայական կոչումից, որ անյարիր է յեղափոխական հայեացքների և կառավարութեան դէմ աւելիչ գործունէութեան հետ։

Այս առաջարկութիւնը մերժելու դէպքում՝ նոցա արարքի վերաբերեալ քննութիւնը կուղարուի իրենց թեմական առաջնորդներին։

Հասարակաց երգեցողութիւնը.

Ռուսաց տաճարներում եկեղեցական կեանքը կրկին նորոգելու միջոցներից մինը համարում է Ի. Ս.-ին հասարակաց երգեցողութիւն մտցնել եկեղեցիներում։ Այս նոր հարց չէ, սակայն հոգևոր մամուլը անտարբեր է վերաբերուել. մանաւանդ հոգևոր գասը կարծես տրամադիր չէ այս խնդրով զբաղուելու, գլխացաւութիւնից փախչելով։

Բայց հեղինակը շատ կարևոր և շատ ժամանակակից է հա-

մարում այս հարցի զարթեցնելը և լուծումը դրական մտքով և թէ հոգևորականութեան, թէ եկեղեց. մամուլի և թէ ամէն բարեպաշտ անձի պարտքն է համարում հոգալ այս գաղափարի իրականացման համար:

Նկատուած է, որ ժողովրդի մէջ կրօնը գնալով ընկնում է, որի հետ և բարոյականութիւնը, նկատուում է սառնութիւն դէպի հաւատը, եկեղեցին, նորա ծիսակատարութիւնը և կարգերը:

Տօները քիչ են յարգուում, աստուածպաշտութիւնը գաղարում է գրաւել աղօթաւորներին: Ուստի քաշել ժողովուրդը դէպի եկեղեցին, զարթեցնել նորա մէջ կենդանի հետաքրքրութիւն՝ ամէն մի հովուի պարտքն է, և ժողովրդին մասնակից անել եկեղեցական երգեցողութեան ամենից նպատակայարմար միջոցն է դորա համար:

Հասարակաց երգեցողութիւնը առիթ տալով մասնակցելու ժամապաշտութեան՝ անպատճառ կըարձրացնէ մարդկանց աղօթելու տրամադրութիւնը, հաւատը կըերմացնէ, մերձաւորութիւն և սէր կներշնչէ հաւատացեալներին և կծառայէ իբր կենդանի և ներգործող ոյժ նոցա միացման: Կվերանայ ձանձրոյթը և տաղտկութիւնը՝ երկար կրաւորական դերում մնալուց. իսկ միւս կողմից էլ՝ արտորանքով և կիսատ ու թերի ժամապաշտութիւնը:

Քաղաքներում՝ մասամբ և գիւղերում եկեղեցիները ունին երգիչների խումբ, երբեմն բաւականի մեծ և ծխի համար էլ ծանրութիւն: Այդ երգիչները բոլոր երգեցողութիւնը կատարում են մենակ և աչքից վրիպցնելով այն էական պահանջը աղօթաւորի՝ տալ աղօթքի կամ շարականի իմաստը և զգայմունքները ու մտքեր զարթեցնել՝ նորա միայն եղանակներն են լսեցնում, շատ անգամ բոլորովին օտար ընագրին և նորա իմաստին:

Այսպիսի ձգտումը հարկաւ ունի իւր այն նպատակը, իբր թէ լաւ երգեցողութեամբ և երաժշտութեամբ ունկնդիրներին բաւականութիւն կմատուցանեն. այլ այս սխալ մոլորութիւն է, որ բղխում է եկեղեցական երգեցողութեան սխալ հասկացողութիւնից:

Եկեղեցական երգեցողութիւնը չի կարելի երաժշտութեան նպատակին ծառայացնել, չէ կարելի ձգտել գեղարուեստական լոկ բաւականութիւն յառաջ բերել, այլ աղօթաւորներին ի խրատ և բարոյական ու սուրբ գաղափարների ներշնչումն: Եկեղեցական երգեցողութեան մէջ մեղեդին (мелодія) ինքն ըստ ինքեան նպատակ չէ, այլ միջոց պարզելու և տպաւորելու լը-

ողի սրտում այս կամ այն բառերը, ուրեմն երգեցողութեան դերը եկեղեցում զուտ ծառայական է, պիտի նպաստէ սրբոտանց ուշադրութեան։

Աստուածպաշտութեան երգի բառերը՝ լրենց անմիջական ոյժն է։ Զարգացած ճաշակի տէր անձինք գեղարուեստական բաւականութիւն են ստանում եկեղեցական գեղեցիկ երգերից։ Նոքա հետևում են ամէն մի ելևէջի գեղեցկութեան, ընդհանուր ներդաշնակութեան, նոցա նրբութեան և անցումներին, բայց հասարակ մարդիկ բաւականութիւն չեն ստանալ երգեցողութեան երաժշտական գործից և չհասկանալով նոյն իսկ երգած խտրները՝ անտարբեր վիճակի մէջ են ընկնում։ Ի՞նչ կշահուէր եթէ մէկը լսէր անհասկանալի լեզուով մի քարոզ, այդպիսի մի քարոզ կլինէր երաժշտական մի մեղեդի։

Այն երաժշտագէտը, որ նպատակ է դրել եղանակները յօրինել ժամասացութեան համար, մի անգամ ձեռք պէտք է վեր առնի երաժշտագէտ հեղինակութիւններից։ երբ խօսքը ժամասացութեան մասին է, նոքա այնտեղ ձեռնհաս չեն։ Անհրաժեշտ է նախ ուսումնասիրել պատարագի արարողութիւնը լրիւ՝ այն էլ նոյն եկեղեցու ձեռներեցութեամբ և նոքա ամենայաւ ներկայացուցիչների յուշմամբ։ այն ժամանակ նա կը տեսնէ, որ երաժշտութիւնը այստեղ դործ չունի։ որովհետև երաժշտութիւնը պահանջում է մարդուած անձինք, իսկ պատարագի արարողութիւնը պահանջում է ընդհանուրի փառաբանութիւնը և դոհացողութիւնը։

Երաժշտութիւնը ամենին մատչելի չէ և ըստ ճաշակի տարբեր տպաւորութիւն է թողնում։ իսկ պատ։ արարողութեան մէջ ամէն ոք միապէս պէտք է ըմբռնի։ Երաժշտութիւնը չի կարող արտայայտել պատարագի արարողութեան ամբողջ բովանդակութիւնը, այլ միայն՝ ինչ որ կարող է վերարտադրել, իսկ պատարագի արարողութիւնը մի ամբողջութիւն է։ Ուրեմն պատարագի արարողութիւնը պիտի լինի վայելուչ, պարզ և կարատիչ, մեղեդին չպիտի մթնացնէ բառերը, այլ նպաստի անոնց ըմբռնմանը։

Անհրաժեշտ է կազմակերպել եկեղեցական երգեցողութիւնը, դարձնելով այն հասարակաց սեփականութիւն։ պէտք է ձգտել, որ բոլորն էլ երգեն եկեղեցում։

Գալով գործադրութեան, անհրաժեշտ չէ, որ հէնց սկզբից բոլոր ժամասացութեան մասնակցի ազօթաւոր հօտը, այլ ըստ կրզբում հեշտերը միայն երգեն միասին, ապա հետզհետէ անցնել դժուարներին ու բարդերին։ Մասնակցութիւնը կլսրթե-

ցնէ սէր և հեռաքրքրութիւն, իսկ երբ ամբողջ եկեղեցին կը ներկայացնէ մի հզօր երգեցիկ խումբ (хоръ), այն ժամանակ կվերանայ ձանձրոյթը, կը սփռուի, կբարձրացնէ կրօնական ոգին, կվեհդանացնէ եկեղեցական կեանքը և հնարաւոր կդարձնէ «ի մի սիրտ և ի մի բերան փառաբանել Աստուածն»։

Церк. Вѣст. № 17.

Ս. Յարութիւնեան.

---

† Կ. Պ. ՊՈԲԵԴՈՆՈՍՑԵՒ

Եկեղեցական գործերից հեռի (1905-ի հոկտեմբերի 19-ից յետոյ), մոռացուած իւր նախկին երկրպագուներից, արհամարհուած իւր բարերարուածներից, ծաղրուած լրագրութեան կողմից, ամբոխի կողմից հայհոյուած՝ խաղաղ մեռաւ մարտի 10-ին 80 տարեկան հասակում Կոստանդին Պետրովիչ Պոբեդոնոսցեւը. հմուտ իրաւագէտ, տաղանդաւոր գրիչ, առաջնակարգ պետական և յայտնի եկեղեցապետական գործիչ։

Կ. Պ. Պոբեդոնոսցեւը Աղեքսանդր Գ. կայսեր ամենից աչքի ընկնող գործակիցն էր, որ ներքին քաղաքականութեան մէջ մացրեց «հաստատուն ռուս ուղղութիւն» և իւր կնիքը դրել էր պետական կեանքի զանազան կողմերի վերայ։ Իբրև եկեղեցական գործիչ՝ բարձրացուց արտաքին եկեղեցականութեան նշանակութիւնը, նուիրապետութեան և կեդրոնական հոգևոր վարչութեան հեղինակութիւնը մեծացուց, զօրեղացուց պետական վանականութեան նշանակութիւնը, եկեղեցական գաւին յանձնեց սկզբնական կրթութեան գործը, հոգևորականութեան վիճակը բարելաւեց և աստուածաբանական գիտութեան մշակումը կենդանացուց։

Ծննդեամբ Մոսկովցի, կրթութեամբ Նիկոլայի շրջանի, ոլաւեանաֆիլ (ռուսասէր) հակումներով՝ Պոբեդոնոսցեւը շատ վաղ լուծուց նեղ Մոսկուացու քաղաքական սկզբունքները, հիմնուած մայրենի երկրի հայրենասիրական գերակայացման վերայ։

Նորա սկզբունքն էր՝ «հին ազգային եկեղեցին մնացեալ ընդ նախնի ռուս պետութեան»։

Արհամարհանքով վերաբերուում էր պատմական պետութեան ճիշտ հետևութիւններին, որ վերաբերում են հանրամարդկային զարգացման օրէնքներին. նա ադոնց տեղ իւրն էր դնում, որ ստեղծել էր հայրենասիրական յատկութեամբ։

նա համոզուած էր, որ Ռուսաստանի բարօրութեան համար պիտի կենդանացնել «Մոսկուայի Ռուսը», ուստի չէր հաւատում, թէ Ռուսաստանը քաղաքական կլինի՝ առանց անսահման ինքնակալութեան, առանց Մոսկուեան ուղղափառութեան՝ դասակարգի, տպագրութեան, լօզքի և անձի ազատութեամբ և երեսփոխանական կառավարութեամբ: Մոլեռանդութեամբ նա ձըգտում էր դարձնել Ռուսաստանը ծէ դարու Մոսկուայի կառավարութեան եղանակին:

Բազդի բերմամբ եկեղեցական վարչութեան գլուխ հաստատուած՝ նա երազում էր եկեղեցու ձեռքով վերակրթել ռուս ժողովուրդը գիտակից պահպանողականութեան մէջ. Պոբեդոնոսցևի ծրագրով եկեղեցական դպրոցները աստիճան առ աստիճան պիտի վերածուէին աշխարհական դպրոցները՝ պիտի պահպանէին և աճեցնէին ժողովրդի մէջ հին կրօնա-քաղաքական հայեացքը: Հոգևոր դիտութիւնը պիտի թողնէր արևմուտքի հետ ունեցած կապերը և պիտի ծառայէր վարչական հաւատամքներին: Եկեղեցական դրաքննութիւնը պիտի հսկէր, որ հասարակութեան դիտութեան մէջ չթափանցէր ոչինչ, որ կարող է խանգարել վերոյիշեալ հաւատամքները և մոլեռնել ազատ մտածողութեան նշոյլն անգամ: Այս ծրագրին պիտի օգնէր նաև բռնապետական իշխանութեան կեդրոնացումը, շաղկապուած պետութեան հետ և ջոկուած ժողովրդից: Հոգևորականութեան զօրանալը համարում էր պետական ուժի աղբիւր:

Գոնևհինգամեայ նրա դատախազութիւնը մի յամառ փորձ էր, և ուզում էր եկեղեցա-պետական այս հայեացքը կրականացնել, որով ապահով կենդանի եկեղեցու դաշտիարը և ճշմարիտ քրիստոնէական բարեպաշտութիւնը:

Ծանր էր պետական խնամարկութիւնը և հակողութիւնը եկեղեցու վերայ, քանի ատատկանում էր եկեղեցա-պետական շահերի կեդրոնացումը, այնքան ժողովրդի հոգու խորքում էլ յարութիւն էր առնում եկեղեցու ինքնավարութիւնը: Անողոք ճակատագիրը վերջ ի վերջոյ ստիպեց Կ. Պ. Պոբեդոնոսցևին ականատես լինել այն հետևանքներին, որ նա չէր նկատում և որոց դէմ նա այնպէս երկար և յամառ կռիւ էր մղում:

Պետական կեդրոնացման ջերմ երկրպագու, ոյժը և իշխանութիւնը ատատածացնող՝ նա հարկադրուած էր իւր կեանքի արևմուտքին նկատել անոնց տկարանալը և տեղի տալը գանազան ինքնավարութեան և ժողովրդի ներկայացուցչութեան:

Կրօնաւորների և առաջնորդների հովանաւորող՝ Կ. Պ. ստիպուած էր տեսնել անհեատաոտ ջանքի ապաշնորհ հետևանքնե-

ըը: Կրօնական համբերատարութեան թշնամի՝ որը համարում էր անտարբերութեան հատատար, Կ. Պ. ատիպուած էր տեսնել դաւանանքի ազատութեանց հաւանութիւն նուիրապետութեան ներկայացուցիչների կողմից: Պետական կրօնի տեսութեան երկրպագու և պետութեան ու եկեղեցու հակառակութիւնից վախեցող՝ նա ապրեց մինչև այդ հակառակութեանց սկիզբը: Կատաղի հակառակորդ տպագրութեան և խօսքի ազատութեան՝ ականատես եղաւ գրաքննութեան ոչնչացմանը, պաշտպան եկեղեցական դպրոցների՝ նա լինքը նկատեց ընդհանուր ժողովրդական կրթութեան ծրագրի մերձենալը:

Վերջապէս նրան բաժին ընկաւ լուռ վկայ լինել եկեղեցական կեանքի վերափոխութեան, որ կարծում էր թէ ոսրը է և հարազատ ժողովրդի հոգուն իւր ամէն մի հնչիւնով, ամէն մի բառով և գոյութեան ամէն մի աննշան գծով:

Ս. Ցարուբիւնեան.

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթոլիկական համալսարան Տոկիոյում. Մխիթարեան Հայրը տուել Տոկիոյում կաթոլիկական մի համալսարան հիմնել եզուիտների հակողութեան տակ, ակադեմիական առանձին արտօնութիւններով: Համալսարանի ուսուցչապետները Անգլիացի, Իրլանդացի և Ամերիկացի եզուիտներ են: Բացի համալսարանից Մխիթարեան Հայրը տուել իւր մայրաքաղաքում նաև կաթոլիկական եկեղեցի շինել:

Կաթոլիկ եկեղեցին երեք տարի առաջ տօնեց արևմտեան մեծ եպիսկոպոսի՝ Գրիգոր Ա. Պապի 1300–ամեայ յոբելեանը, այժմ էլ պատրաստուում է տօնել արևելեան եկեղեցու մեծ լուսաւորչի ս. Յովհան Ոսկեբերանի (մեռած 400-ի սեպ. 14-ին):

Տօնակատարութիւնը կկատարուի նոյեմբերի 13-ին: Այդ օրը հանդիսաւոր պատարագ կմատուցուի ս. Պօղոս Պետրոսի տաճարի ս. Պետրոսի սեղանի վերայ և պատիւ սրբին: Կարծում են, որ Պիոս Ը-րդ պապը այդ առթիւ շրջաբերական կուղարկէ արևելեան եկեղեցիներին:

Հռոմում կազմակերպուում է մի կարգ ընթերցմունքներ ս. Յովհան Ոսկեբերանի կեանքի և գործունէութեան վերաբերեալ: Մտածում են մեծ ուխտագնացութիւն սարքել դէպի Հռոմ յոյն մխիթարները:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

Լոնդոնում՝ Ալիսորիա փողոցի վրայ կանգնած է մի հրապարակային շինութիւն. «Փրկութեան բանակի միջազգային գլխաւոր շէնքը» մակագրութեամբ: Մարդ զարմանալով է անցնում պաշտօնեաների սենեակների անվերջ շարքի մէջով, որտեղից կառավարւում է Փրկութեան բանակը:

Հեռուն դարսը, քաղաքի որ և է արուարձանի փողոցի անկիւնում, յաճախ դարեջրատների դիմաց, պատահում էք Փրկութեան բանակի գլխաւորների տարազով մարդկանց, որոնք կանգնած մի սրկրի վրայ, ճառում են: Ճառողի ներտաստանութիւնը ցոյց է տալիս, որ բանուոր դասակարգից է: Նրա մօտ կանգնած են մի քանի այր և կին գլխաւորները, որոնք իրենց երգանման ազաղակով, որին ձայնակցում են և երաժշտական գործիքները, ճաո ախօսին հանգստանալու միջոց են տալիս: Ծաղրուդրդը հաւաքւում է այդ խմբի շուրջը, նորակոչ գլխաւորները են հաւաքում բանակի համար, որ հոգևներին դէպի փրկութիւնն է առաջնորդում:

Քաղաքի որ և է մասում, գիշեր ժամանակ, մէկ էլ տեսար երկու հոգի են նկատուում, որոնք մի ցանցաճև պատգարակի վրայ մի ծանր մարմին են տանում: Դոքա դարձեալ Փրկութեան բանակի գլխաւորներ են, որոնք «արբեցողների փրկող վաշխն» են պատկանում: Նոցա գործն է որոնել արբեցողներին և տանել Փրկութեան բանակի՝ արբեցողների համար շինուած ապաստարանը: Փրկութեան բանակը երկու այդպիսի բաւականին մեծ հաստատութիւն ունի, մէկը տղամարդկանց, իսկ միւսը կանանց համար:

Փրկութեան բանակը իւր ընկերական գործունէութեան մէջն է: Նա կեղտոտութեան մէջ որոնում է ամենաթշուառ մարդկանց, բանտի դռների մօտ՝ արձակուող յանցաւորներին, փողոցում անտուն կանանց խնդճն է գործերնում, երբ նոքա իրենց որսի արշաւանքն են ունել, պատսպարում է անտուն և անտէր մարդկանց, քաղցածներին կերակրում է:

Մի անգամ Լոնդոնի արևելեան մասում մի երկար և նեղ փողոց տեսայ լիքը լեցուած մարդկանցով. շատերի շորերը վկայում՝ էլին նոցա նախկին շքեղութեան մասին, դէմքերից երևում էր, որ այնտեղ ամեն տեսակի և ամեն հասակի մարդիկ են հաւաքուել: Բոլորի դէմքին անհանգստութիւն և տամ-

բերութիւն էր նկատւում, բայց և այնպէս այնտեղ տիրում էր օրինակելի կարգ ու խաղաղութիւն։ Փողոցի վերջում գտնւում էր Փրկութեան բանակի շինութիւններից մէկը, ուր ամեն մի մարդ երկու պենսով ընդունելութիւն էր գտնում, քանի դեռ տեղ կար։ Իսկ նաքա, որոնք այդ բաղդին չէին արժանանում, հեռանում էին կամ թէ նստում էին փողոցում շինութեան դրան առջև այն յուսով՝ թերևս էլի նեղս կընդունուեն։ Նման տեսարանները տեղի էին ունենում անտուն, անյարկ կանանց համար յատկացած հաստատութիւնների առաջ։ Ներսը՝ մարդկի պատկում են ուղղանկիւն արկղների մէջ, որ մօտ երկու մետր երկարութիւն և մի մետր լայնութիւն ունի և 20—30 սանտիմետր բարձրութիւն դեսանից։ Այդ արկղների մէջ՝ յատակին ձգուած է մի բարակ հաշեայ նեղքնոց, մի կաշեայ բարձ և մի բամբակէ վերմակ։

Այդ տեղերում կանոնաւոր կերպով բաշխում է և կերակուր։ Սովաշները երկար չսպրդում անցնում են կերակուր բաժանելու տեղի մօտով։ որտեղից ստանում են ամանով մի լիտր սուպ և մի կտոր հաց ու այդ բոլորին վճարում են մի պենի։ Ունևորները կարող են մի կամ երկու աւելի վճարուած պենիներով մին և կանոնէի ոտանալ։ Կերակուրը և խմիչքը բաժանելու համար կան և առանձին տեղեր՝ բաժանուած այդպիսի սպասաւորներից և մեծ հաստատութիւններից։ Ոգելից խմիչքը արգելուած է։ Մի բաժակ թէյ, մի փոքր հաց ու կարագի հետ արժէ կէս պենի։ Կերակուրները ընդհանրապէս համեղ են լինում։ 1904 թուին Փրկութեան բանակի տուած տեղեկութեան համաձայն՝ միացեալ Թագաւորութեան մէջ (Անգլիայում) $3\frac{1}{2}$ մլն. այդպիսի ճաշ է բաժանուել։ Այդպիսի հիմնարկութիւնների արժէքը գնահատելու համար, պէտք է տեսնել, թէ այդ մարդկի ինչպիսի ապահովութեամբ են կերակուրը կուլ տալիս։ 1901 թուին հիւրերը կերակրի, խմիչքի և պիշեքելու տեղի համար 40,000 ֆունտ ստերլինգ կամ 800,000 (մօտ 400,000 մանէ) մարկ են վճարել։ Այս գումարը՝ ամբողջ ծախսի $\frac{1}{5}$ մասը հասկ է կազմում, մնացածը կազմում է ազատ նուիրատուութեամբ։

Բացի այս մեծ ապաստարաններից՝ Փրկութեան բանակը նաև իշխանութեան տակը ունի և այնպիսի շինութիւններ, որ առհիշ ընկերութիւններ, հասարակական մարմիններ կամ անհատներն են շինել։ Այդ տեղերում ամեն մի գիշերուայ համար անկողինն արժէ 4—5 պենի։ Ընդհանրապէս այդ տեղերում՝ ամեն մի սենեակում 2—4 անկողին է լինում, շատ անգամ էլ

մի հատ, որի համապատասխան էլ որոշւում է գինեքարայ վճարը: Կան և այնպիսի հիմնարկութիւններ, որտեղ անկողինը արժէ երեք պենսի. արկղները շարուած են միմեանց կողքին հակատական դահլիճներում, յաճախ երեք կամ չորս շարքեր իրար եռանիւ: Եւ այդ տեղ շարքով պատւում են ամենից աղքատ մարդիկը. և այս միակ տեղն է, ուր նոքա կարող են հանգիստ դանել: 1904 թուին Փրկութեան բանակի տուած վճռակապութեան համաձայն, ամբողջ Անգլիայում երկու տեղի 1,447,893 հոգի ապաստան են դտել: 1901 թուին ամբողջ աշխարհում 4,398,854 հոգի են ընդունուել այդպիսի հաստատութիւնների մէջ:

Այդ հիմնարկութիւնների մէջ ընականաբար հոգ է տարուած և՛ բաղնիքների և՛ լուացարանների վրայ: Լուացարանների մուտքը ձրի է. լուացքի մեծ տաշտերը տաք և սառն ջրի ծորակներով և երկար շարքերով պատրաստուած են իրար կողքի, առանձնապէս տաքեր մաքրելու վաննաները: Բաղնիքներում մի անգամ տաք ջրով լողանալը արժէ մի պենսի. ուրիշ ծախսմունքներ էլ կան, ուր շորերն ու լաթերն են մաքրում ու լուանում: Կան և ախտահան թոնիկներ, որոնց մէջ շոր են թափ տալիս՝ ոջիլներից մաքրելու համար: Այս հաստատութիւնների վրայ հսկող պաշտօնեան պատմում են, որ այդ տեսակ մաքրութիւնը շատ տակաւ դէպքում է իրենց ոտիպմամբ կատարուում, որովհետև, երբ մի հիւրի անմաքրութիւնը կամ ոջիլները հասկանալի անդուրեկան են, հէնց նրանք ոտիպում են ուշք դարձնել մաքրութեան վրայ: Ասպա թէ ոչ Փրկութեան բանակի բազմաթիւ հսկայ պինուորները հոգ են տանում այդ մասին և իրենց դիտողութեամբ հսկում են ներքին կարգ ու կանոնի վրայ, որ թէ և շատ չեն, բայց եղածները խիստ կերպով են հատարում:

Անկողնի տաքն է. մի երկաթեայ մահճակալ, պատանիով ներքնակ, ձիու մազից լցրած բարձ, որ ընդհանրապէս անդլիայում առւորական է: Շորերի համար կան առանձին արկղ-պահարաններ, որոնց բանալիները, եթէ հիւրը երկար ժամանակ է մնում, իւր մօտն է պահում: Բացի ննջարաններից կան և ընդհանրական սենեակներ ու ճաշարաններ: Այդ տեղերում լինում է հատարակաց ազօթք, սակայն մասնակցութիւնը ոտիպողական չէ:

Փրկութեան բանակը առանձին նշանակութիւն է տալիս կանանց մէջ սկսած ընկերական գործունէութեան: Այդպիսի առանձին հաստատութիւնների գլխաւորը դանւում է Լոնդոնի

հիւսիս-արևելեան կողմը Հաքնեյում՝ կանանց համար, որ ունի 46 մեծ ապատարան և ուրիշ ընկերական հաստատութիւններ, որոնք կառավարուում են մօտ 500 ոպանեներով և պաշտօնեանե-րով։ դլխաւոր խումբը կամ շտաբը կազմուած է 30 ոպանեներից։ 1904 թուին 2165 կին են ընդունուել Փրկութեան տներում։ այդպիսի տների թիւը Մեծ Բրիտանիայում 25 է, իսկ ամբողջ աշխարհում 116։

Լոնդոնում ծննդկանների բաղմաթիւ հաստատութիւններ կան, որ տեղից ուտեալ մանկաբարձուհիներ են դուրս դալիս և տներն են գնում օգնութիւն հասցնելու համար։ Նոցա դործունէութեան ասպարէզը քաղաքի ամենից աղքատ և խառնա-մաոերն են կազմում։ Մի առանձին հիմնարկութեան մէջ էլ կանայք առանձնապէս ընկերական աշխատանքի համար են պատրաստուում։ Տարուայ մէջ երկու անգամ յիսուն-յիսուն հոգի այնպիսի կանանցից, որոնք այդ դործի համար առանձին ընդունակութիւն են ցոյց տալիս՝ ընդունուում են այդպիսի հիմ-նարկութիւնների մէջ և ուսումն ստանալուց յետոյ՝ ուղար-կուում են զանազան քաղաքները լքուած տղաները անտուննե-րի, արբեցողների հաստատութիւնների և փրկութեան տների մէջ ծառայելու։ Առանձնապէս ուշադրութիւն են դարձնում անա-ռակ կանանց վրայ և աշխատում են նրանց իրենց ընթացքից յետ կացնել։ Չինուոր կանանց տեսակցութիւնները ընկած կա-նանց հետ տարեկան հաղարից անցնում է։ Իսկ այդ բանի հե-տևանքը շատ անդամ ապշեցնող է։ Առանձնապէս մեծ է նրանց դործը բանտարգելութիւնից և պատժից ազատուած կանանց համար, այդպիսիներին մասամբ բանակի դռներից են առաջնոր-դում, մասամբ էլ Փրկութեան բանակի լանդիներով՝ վար-չութիւնները ազատ են թողնում։ Բանտերի վերակացուները թոյլ են տալիս Փրկութեան բանակի պաշտօնեա ներին բան-դարկուածներին այցելել։ Փրկութեան բանակին՝ նրա կրօնական առանձնայատկութիւնների համար՝ նոյն իսկ թշնամաբար վե-րաբերուող, բայց դործին տեղեակ անձնաւորութիւնները, խոս-տովանում են, որ Փրկութեան բանակը իւր պատմարակու-թեամբ ազատուած բանտարկեալների համար հիմնած հաս-տատութիւնների մէջ՝ բարոյական շատ գործի հետևանքների է հասել։ 1904 թուին 700-ի չափ բանտից արձակուած յանցա-ւորներ ընդունուել են այդ հաստատութիւնների մէջ. դոցանից 400 հոգի Փրկութեան բանակի միջնորդութեամբ իրենց համար պաշտօն են դտել կամ վստահելի բարեկամների յանձնուել։ 1904 թուին 200-ի չափ ապրնկներ փրկութեան տներից դեպի

քաղաքացիական կեանքն են առաջնորդուել և Փրկութեան բանակը չնորհիւ, առանձնապէս երբև աղախինները՝ վատահելի ընտանիքներում տեղաւորուել:

Մեծ գործ է կատարում Փրկութեան բանակը ընտանիքներին արած այցելութեամբը: Փրկութեան բանակը ծանրակշիռ նշանակութիւն է տալիս ընտանիքների վրայ գործ դրած ազդեցութեան: 1904 թուին 130,000 չափ ընտանիքներ են այցելած քաղաքի աղքատ մասերում. բացի այդ այցելել են 8,000 հիւանդների և խնամել: 72,000 ոգելից ըմպելիների խանութներ են մտել՝ մարդկանց իրենց ամենամեծ թշնամուց, ոգելից ըմպելիքից՝ հեռու պահելու համար. 2600 այցելութիւններ են արել բանուորների հասարակաց բնակարաններում, և 676 ժողովներ են գումարել այդ տեղերում քարոզչութեան համար: Այս թուերը բաւարար կերպով՝ բարձրաձայն վկայում են նորա գործունէութեան ծաւալի մասին:

Փրկութեան բանակը այլ և այլ եղանակներով անխնամ երեխաներին իր հովանու տակն է առնում: Երեխաների համար մի առանձին ապաստանարան ունի, ուր ամեն կիւրակի ձրի նախաճաշ է բաժանում կամ երբեմն էլ շատ չնչին դնով վաճառում—երկու ֆարթինգով (մօտ 1 կոպ.). ծավի կամ ցամաքի վրայ զբօսանքներ է ձեռնարկում երեխաների համար, որպէս զի նոքա գոնէ մի անգամ ուրիշ օդ շնչեն, քան իրենց ցած և նեղ սենեակների, ուրկից բակերի կամ քաղաքամասի գարշահոտ փողոցների օդն է:

Շատ լաւ յայտնի է, որ Փրկութեան բանակը մեծ չափերով մուտք է գործում մեծ քաղաքների կեանքի ամենից թագուն խորքերը: Իրրև ապացոյց կարող է լինել այն դէպքը, որ 1904 թուին մի կորուսածի գտնելու համար 2200 դիմումներ և խնդիրներ ուղղուեցան Փրկութեան բանակին: Դժուար է երևակայել, թէ Լոնդոնում ոստիկանութեանը տարեկան քանի՞ հազար կորուսած մարդկանց համար ծանուցում է տրում: «Կորուսածները»ը բոլորը բնական է մեռած չեն լինում: Շատերը որևիցէ պատճառով իրենց անուններն են փոխում, շատերը ուրիշ քաղաք են գնում գաղտնի կերպով, շատերը գաղութներ կամ օտար երկիրներ են վաճառում առանց յայտնելու իրենց ծանօթներին կամ բարեկամներին: Անշուշտ Փրկութեան բանակը, որ գիշեր ցերեկ անգլոսաքսոնական ազգի ամենաստորին խաւերն է մտնում և որի կապերը ամբողջ երկրի վրայ տարածուած են, ամենայարմարն է՝ այդպիսի կորածներին գտնելու և նոցա իրենց ազգականներին ետ գարձնելու համար. 1904 թուին մօտ 450 կորածներ գտնուեցան:

Բոլորների կարծիք յետոյ՝ գործազուրկների թիւը աճում է հազարներով և ձմեռները առանձնապէս պետութեան, քաղաքների և անհատների պարտականութիւնն է այս քաղմութիւնը սովամահից ազատել: Ոմ մի անգամ այս աշխատանքից զուրկ բազմութեան ցոյցերին՝ Վեստենդում և Հայդեպարկում ներկայ է եղել, կհատկանայ այս խնդրի մեծութիւնը: Դեռ ևս բոլորի յիշողութեան մէջն է այն ազմկալից տեսարանը, որ գործազուրկները առաջացրին Լոնդոնի ս. Պօղոս մայր եկեղեցու մէջ և նորա շուրջը:

Քրկութեան բանակը աշխատանք պտնելու միջնորդ պրօսենեակներ է հաստատել. 1904 թուին 12,765 հոգուց ոչ պակաս աշխատանք փնտրող մարդիկ են ցուցակագրուած և 15,531 մարդու համար տեւական կամ ժամանակաւոր աշխատանք գտնուած: Գործազուրկները աշխատանք են ստանում նաև Քրկութեան բանակի սեպհական գործարաններում և ֆաբրիկաներում: Այդ տեղ աշխատում են լամպերի, չարպագործների և բանակից ազատուածների համար հիմնուած հաստատութիւններում պատսպարուածները, որոնք հակողութեան կարիք ունեն կամ նոցա համար ուրիշ գործարանները մանել անհնարին է կամ կորստաբեր: Այդ տեղ սովորեցնում են զանազան տեսակի արհեստներ, սակայն գլխաւոր նպատակն է աշխատելուց ձանձրացած կամ անսովոր մարդկանց աշխատանքի վարժեցնել և այդպիսով պարձեալ հասարակութեան պիտանի անդամներ դարձնել:

1902 թուին Քրկութեան բանակը այդպիսի 64 մեծ գործարան ունէր. կահկարասիք, թուղթ, տոպրակներ, ոտ մաքրելու խոխլներ, գորգեր, խոզանակներ, անկողին, հագուստներ, կաշիներ և կառքեր պատրաստող գործարաններ ու արհեստանոցներ. վուռեր, թուղթ պատրաստող և ցնցոտիներ ջոկջկող հիմնարկութիւնները, ջրաղացներ. այդ տեղերում 5,000 չափ մարդիկ էին աշխատում: Պատրաստում են այն տեսակ իրեր, որ Քրկութեան բանակն է գործածում. օրինակ թուղթ՝ անհամար թուղթիկների համար, որոնցով ամբողջ աշխարհն են ողողում, այնպէս որ տարեկան ոչ պակաս քան 6000 տն նոր թուղթ է պատրաստուում այդ գործարաններում հնացած թղթերից: Բանուորները մեծ մասամբ անուս մարդիկ են, ձեռնարկութիւնից, քաղցից, աղքատութիւնից և ոգելից խմիչքներից թուլացած, այնպէս որ դոքա ուրիշ աշխատանքների համար ընդհանրապէս անպէտք են: Քրկութեան բանակի այս բանուորները մեծ մասամբ ուտում և ապրում են նոյն շինութիւնների

մէջ. սակայն վարձը գրեթէ նոյնքան է, ինչքան ուրիշ գործատուններում, սակայն վճարը կանխիկ փողով չեն սահմանում, այլ արժեթղթեր, որով գիշերելու տեղն և ուտելու վճարն են դուրս գալիս, իսկ մնացորդը տոկոսով պահում են հարկաւոր ժամանակ ստիպողը յանձնելու համար: Կանայք աշխատում են սեղնատպագործի և սակայնանկի գործատուններում, կոմմատուններում, լուացարաններում և ճերմակեղէնները պատրաստելու տեղերում: Մեծ հոգս է տարուում անպէտք ծառաներ պատրաստելու համար, որովհետև մի կողմից Անգլիայում այգպիսիների կարիքը շատ է զգացուում, միւս կողմից էլ այդպիսով յոյս ունեն այն տէրերի հաճութիւնը գրաւել դէպի Փրկութեան բանակը, որոնց տներում իրենց պատրաստածներն են ծառայում:

Անգլիայում հրատապ մի խնդիր է, թէ ինչպէս պէտք է անել, որ երիտը թափառաշրջիկներից ազատ լինի, որոնք հասարակութեան համար անպէտք են կամ վնասակար: Սկսա այսպիսիների մէջ Փրկութեան բանակը աշխատում է տարածել իւր բարոյական ազդեցութիւնը: Վիճակագրութեան համաձայն Մեծ Բրիտանիայում 60,000-ից ոչ պակաս թափառաշրջիկներ կան: Ո՛չ միայն նրանց օգտի, այլ գլխաւորապէս այն չարիշարանց վնասակար ազդեցութեան պատճառով, որ իրենց օրինակով անում են իրենց անցած տեղերի մատաղ սերնդի վրայ, ըստ ըստվին չհաշուելով նրանց հասցրած գումար վնասը, աշխատանք են դրծ դնում թէ՛ հասարակական և թէ՛ մասնաւոր ընկերութիւնները այդ չարիքը վերացնելու: Այս գործի մէջ ևս խառնուեց եռանդով Փրկութեան բանակը. նոսեքսում, Թնդմղի տիրի վրայ մի ըանուորական գաղթավայր հիմնելով՝ Հադլայքի գեղեցիկն մօտ՝ որի անունով և գաղութն է կոչուում: Հադլայքի գաղութը ընդունում է 3000 ակր (Acres) տարածութիւն. մօտ 100 ակրի վրայ պղպատուռ ծառեր են անկուած, մշակում են կանաչեղէն և ուրիշ ծախու բոյսեր ևս: Առանձին ուշադրութեան արժանի է այդ տեղի հաւարուծութիւնը: Նրա պակաս ամենամեծ շահը աղիւսագործութիւն է տալիս: 1904 թուին գաղութի մուտքը եղել է 660,000 մարկ: Սակայն պէտք է նկատենք, որ գիւղատնտեսութիւնը, չնայած, որ ամենախելօք կերպով է կատարուում, չի կարող գաղութի ծախսերը հանել. պակասը ծածկուում է գլխաւորապէս արուեստագործական ձեռնարկութիւններով:

Եւ այսպէս Փրկութեան բանակը անգլիական աղքի ամենից աւելի կեղտի և թշուառութեան մէջ ընտրած տարրերին

ձեռք է մեկնում և աղքատութեան յաւէն ծայրը ընկածներին օգնութեան հասնում: Զարմանալի չի լինի, եթէ պնդենք, որ Փրկութեան բանակն է միայն, որը մեծ չափով անգլիական մեծ քաղաքների խորքերն է թափանցում, և նոցա բարոյական ու տնտեսական պահանջներին վրդը ի շահ բաւարարութիւն տալիս:

Անուշադրութեան չափազանց է մատնել և այն ինքն ըստ ինքեան հասկանալի բանը, որ Փրկութեան բանակի տնտեսական օգնութիւնը միշտ էլ միայն միջոց է նպատակի համար,— այսինքն հոգու փրկութեան համար: Սակայն այս բանը չի կարող ոչ մի կերպ նրա նշանակութիւնը նսեմացնել, որովհետև այն բոլոր աշխատութիւնները, որ հասարակական և անհատական ընկերութիւնները թափում են այդ բազմութեան համար տնտեսական հողի վրայ, դարձեալ նոցա հոգևոր քաղաքակրթական մակերևոյթը բարձրացնելու համար է:

Անգլիական աղքատախնամ և բանդային վարչութիւնները Փրկութեան բանակի արժէքը ճանաչել են. քաջալերում են նրան և թողնում են, որ իրենց վրայ դրուած բարոյական պատասխանութեան մի աչքի ընկնող մասը նոքա կատարեն:

Փրկութեան բանակը հիմնուած է կրօնական սկզբունքների վրայ, նորա կրօնական ըմբռնումներն ու արտայայտութիւնները ձևերը շատերի համար կարող է անդուրեկան լինել, բայց չպէտք է մոռանանք և այն, որ ամբոխի համար անշուշտ կրօնի այդ տեսակ ըմբռնումը աւելի լաւ է, քան կոպիտ նեւթապաշտութիւնը, կամ այն մեռած անհաւատութիւնը, որ քարոզւում է կիսակիրթ, պատմական մտածողութիւնից դուրկ ազնուատոմների բերանով:

Մեծ քաղաքներում արդիւնագործական աշխատաւորներին պատկանող ստորին շերտը պաշտօնական եկեղեցուց պաղած է և հեռացած. Փրկութեան բանակը մատամբ դռնէ լրացնում է այդ պակասը, որ կրօնի բերած բարիքներից խոպան չդիւրէն:

Դր. իրաւաբ. և քնագիտ. P. F. Walli. Beilage der Allg. Zeit. տետր. 14—15. 1907:

Ազատ թարգմ. դերմ. **Ս.. Գալսեանց.**

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԺՈՂՈՎՆԵՐԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Ս.

Ժողովները եկեղեցու պատմութեան մէջ շատ կարեւոր նշանակութիւն են ունեցել. ամեն անգամ, երբ այս կամ այն պատճառով աղմկել է եկեղեցու կեանքը, խանգարուել է ներքին խաղաղութիւնը, դուժաբեր է եկեղեցական ժողով։ Այդ երեւոյթը բնական հետեւանք էր աւետարանական սիրոյ և եղբայրութեան գաղափարի։ Հաւատացեալների միութիւնն էր եկեղեցին կազմում, ուրեմն և այդ միութիւնն էլ որպէս համայնքի ամբողջութիւն կամ համայնքների ներկայացուցչութիւն յանձին իւր եպիսկոպոսների պէտք է ղեկավար հանգիսանար եկեղեցական կեանքին։ Մինչդեռ հռովմէական պետութեան մէջ բռնակալական ձգտումները հետզհետէ զարգանում էին և գերիշխող դառնում հեթանոսական կեանքի բոլոր խաւերում, քրիստոնէական եկեղեցին իւր ծագման առաջին օրերից ղեկավարւում է համայնական սկզբունքներով։ Եւ այս դաղափարի ամենալաւ արտայայտութիւնը եկեղեցական ժողովն էր՝ համայնականից սկսած մինչև տիեզերականը։ Եկեղեցական ժողովն էր միացնում միմեանցից բոլորովին անկախ համայնքները, եկեղեցական ժողովն էր մաքառում այս կամ այն համայնքին կամ եկեղեցուն սպառնացող վտանգի դէմ, հերձուածների և հերետիկոսութեան դէմ, եկեղեցու մէջ մտած անկարգութեան դէմ, բարեփոխութիւն և կարգաւորութիւն մտցնում ժամանակի պահանջների համեմատ, ճշդում և որոշում հաւատոյ և կրօնական կեանքի վերաբերեալ թիւրիմացութիւնները ու սխալները։ Եկեղեցական ժողովները զերծ

չէին պակասութիւններից, մարդկային կիրքը, փառասիրական ձգտումները, պետական քաղաքականութիւնը երբեմն խանգարում էին նրանց գաղափարական պատկերը, բայց ընդհանուր առմամբ մի օրհնութիւն էին եկեղեցու լրութեան և նորա նուիրապետութեան կազմակերպութեան համար։

Առաջին ժողովը համարւում է 52 թուին Երուսաղէմում գումարուածն՝ այսպէս կոչուած առաքելական ժողովը։ Այնուհետև եկեղեցական պատմութեան մէջ ժողովների մասին խօսք է լինում Բ. դարու վերջերից՝ զատական և մանտանական վէճերի պատճառով։ Իսկ Գ. դարը, յատկապէս Դ. և մասամբ Ե. դարերը ժողովների գոյութեան ժամանակներն են։ Հիացման արժանի է այն բազմայարկ և գեղեցիկ շէնքը, որ կանգնում է եկեղեցին համայնական, գաւառական, կեդրոնական և տիեզերական ժողովների գումարումներով և նրանց փոխադարձ յարաբերութեամբ։ Այստեղ է կարգաւորւում և վերջնական ձևակերպութիւն ստանում և եկեղեցու նուիրապետութիւնը իւր աստիճանաւորութիւններով։ Եպիսկոպոսները միապետական հեղինակութիւն վայելելով հանդերձ՝ են թարկւում են ժողովի որոշումներին և ցուցումներին։ Եկեղեցական ժողովն է բարձրագոյն կանոնադիրը մարմինը և եկեղեցու յաւակնադիմութեան և մեծութեան ուղեցոյցը։

Ժողովներն իրենց նշանակութիւնը չեն կորցրել և այժմ արևմտեան եկեղեցիների մէջ։ 1870 թուին էր, որ գումարուեցաւ Վատիկանի ժողովը։ Բայց նրանք առանձին նշանակութիւն են ստացել բողոքական եկեղեցիների համար։ Տարաբաղդաբար հին եկեղեցիները այդ կողմից չատ բան ունին ուսանելու իրենց քոյր նորագոյն եկեղեցիներից։ Այնտեղ ժողովի գաղափարը եկեղեցու յաւակնադիմութեան և կարգաւորութեան էական պայմաններից մէկն է։ Գերմանական իւրաքանչիւր պետութեան եկեղեցի ունի իւր գաւառական և կեդրոնական ժողովները։ Դեռ չենք հաշւում այն ոչ պաշտօնական ժո-

ղովները, որ այնքան յաճախ գումարուում են մեծ քաղաքներում եկեղեցու նշանաւոր պաշտօնեաների, գիտնականների և աշխարհիկ քրիստոնեաների մասնակցութեամբ, ուր ժամանակի պահանջների համեմատ եկեղեցական և կրօնական կեանքին վերաբերեալ խնդիրներ են արծարծւում և լուսաբանւում։ Նոյնը կարող ենք ասել անգլիքան և երիցական եկեղեցիների համար։

Բ.

Մեր եկեղեցու մէջ ևս ժողովն է եղել ընդհանուր կանոնադիր և բարեկարգող հաստատութիւնը, ներքին երկպառակութիւնների, աղանդաւորների և արտաքին ոտնձգութիւնների դէմ ցանկ գնող մարմինը։ Հայոց պատուական և անձնուէր կաթուղիկոսները իրենց բարոյական և իշխանական բարձր հեղինակութիւնը հաստատել են միշտ եկեղեցական ազգային ժողովների վերայ և նոցա նուիրագործած կանոնների և որոշումների չքմեղանակի մէջ են պահպանել եկեղեցու լրութիւնն ու կարգաւորութիւնը։ Պատմութեան մէջ առաքելական յաջորդականութեան և աւանդապահութեան այս գաղափարը եկեղեցու յարատև և անասլիճաք զարգացման պայմաններից մէկն է նկատուած։ Քրիստոնէութիւնը յաւիտենական կրօն է, ուրեմն և նորա ներկայացուցիչ եկեղեցին ևս սկզբունքով բարեփոխութեան և կատարելութեան կողմնակից, բայց այդ բարեփոխութիւնների աղբիւրը եկեղեցական ժողովն է։ Հայոց եկեղեցու համար դժբաղդութիւն էր, որ դարերի ընթացքում զրկուած է եղել ժողովներ գումարելու հնարաւորութիւնից, և մասամբ այդ է պատճառը, որ մեր եկեղեցական կեանքի և ժամանակաշրջանի միութիւնը խանգարուած է շատ տեղերում։

Պատմութեան տուած այս ցուցումները մեզ համար ուղեցոյց պիտի լինին և մեր եկեղեցու վարչական և կրօնական կեանքի քայքայման առաջն առնելու։ Հարկ չկայ երկար կանգ առնել այս տխուր իրողութիւնը հաս-

տատելու համար. վերջին տասնեակ տարիների երևոյթները ակներև փաստեր են և ծանօթ փաքր ի շատէ հայ կեանքով հետաքրքրուող և բանիմաց անձանց համար։ Անցեալ անգամ յիշեցինք արդէն ընդհանուր ակնարկներով այն վտանգների մասին, որ սպառնում են մեր եկեղեցու քայքայման. այդ հօտի մի մասի, այն էլ կրթուած դասի, անտարբերութիւնն էր դէպի եկեղեցին և կրօնական կեանքը, հայ հոգևորականութեան բարոյական հեղինակութեան և վարչական կառավարութեան ու կարգապահութեան թուլութիւնը։ Հէնց այս պատճառներն այնքան լուրջ են, որ եկեղեցու ներկայացուցիչներն անտարբեր մնալ չեն կարող, այն ինչ սրանցից զատ մեր առաջն են դրուած մի շարք հրատապ բնաւորութիւն ստացած խնդիրներ, որոնք անհրաժեշտաբար լուծումն են պահանջում։

Ի՞նչպէս պէտք է անել, որ եկեղեցու բաժան բաժան մասերի մէջ աւելի կենդանի և սերտ միութիւն ստեղծուի։ Մեր եկեղեցու հօտը ոչ միայն բաժանուած է երեք պետութիւնների մէջ, այլ և բազմաթիւ գաղթականութիւններ ունինք երկրի զանազան կողմերում բուն ժողովրդից բոլորովին կտրուած։ Ի՞նչպէս պէտք է անել, որ մեր եկեղեցու արտաքին ինքնուրոյնութիւնը օտար ազդեցութիւններով չխաթարուի, ծէսերի պարզութիւն և միութիւն ստեղծուի։ Ի՞նչպէս պէտք է անել, որ բարեկարգուին վանքերն ու վանականութիւնը և մի գեղեցիկ նպատակի ծառայեն, որ բարեկարգուին եկեղեցական կալուածների կառավարութիւնն ու դպրոցական գործը, վարչական հաստատութիւնների փոխադարձ յարաբերութիւնները ու գործողութիւնները, հոգևոր և ժողովրդական խնդիրները։ Ի՞նչպէս պէտք է կարգաւորել կրօնի դասաւանդութեան չատ փափուկ, բայց կարևոր խնդիրը մեր և պետական դպրոցներում, եկեղեցական երգեցողութիւնը, քարոզչական գործը։ Ի՞նչու աղքատ է մեր եկեղեցին աստուածահաճոյ և բարեգործական հաստատութիւններով և ի՞նչ պէտք է անենք, որ նա իւր հի-

ւանդանոցները, անկելանոցները, որբանոցները, աղքատախնամ հաստատութիւնները ունենայ։ Ինչպէս պէտք է կոչման բարձրութեան համապատասխան և եկեղեցականութիւն պատրաստենք, ծաղկեցնենք կրօնական եկեղեցական դիտութիւնները, առանց որին միշտ խաւարի մէջ կխարխափենք, ապահովենք քահանաների նիւթական դրութիւնը։ Ինչպէս պէտք է մաքառենք օտար միսիոնարութեան կամ կրօնական անտարբերութեան դէմ, ինչ լուծումն պէտք է տալ քահանաների կրկնամուսնութեան, կանանց հոգևոր գործերի մէջ մասնակցութիւն ունենալու հարցերին...։ Այս և սոցա նման բազմաթիւ հարցեր կան, որոնց կարգաւորութիւնից է կախուած եկեղեցու պայծառութիւնն ու յառաջադիմութիւնը, իսկ նոցանից շատերի վերջնական անօրինութիւնը բացառապէս ընդհանուր եկեղեցական ժողովի գործն է։ Պէտք է շատ լուրջ կերպով նախապատրաստուել այդպիսի մի ժողովի գումարման համար։ Իւրաքանչիւր օրուայ կորուստը մի քար է պակսում մեր եկեղեցու բարոյական շէնքից և դժուարացնում նորա ապագայ վերաշինութեան խնդիրը։ Իսկ մեր եկեղեցին պէտք է բարոյապէս վերաստեղծուի. կենդանի քրիստոնէութեան և հոգևոր, առողջ քաղաքակրթութեան օրօրան դառնայ, եթէ ապրել ենք կամենում և մեղ չլռլապատող ալդեների մէջ պատուաւոր տեղ բռնել։ Օգտելին ամրոցների կառուցման տեղով բռնուած, չմոռանանք հայ ժողովրդի ոգի տակի որբազան և պատմական հողը՝ մեր հոգևոր հայրենիքը։

Գ.

Մեղ առարկողներ կլինեն, թէ օդտելին ամրոցների կառուցման դէմ լռսելով, մի նորն ենք առաջարկում չինել։ Ներկայ պայմաններն մէջ դժուար է եկեղեցական համաղգային ժողով գումարել։ Ձենք մերժում, թէ դժուարութիւններ կան, բայց անիրագործելի չէ այդ. եթէ 1892 թուին հնարաւոր եղաւ կաթուղիկոսական ընտրու-

թեան համար այդպիսի մի ժողով գումարել, անհնարին չէ այժմ ևս յաջողեցնել։ Պէտք է միայն բարի կամք ունենալ և աշխարհի առաջ պարզ դնել, որ այդ ժողովի հետ քաղաքական միտումներ չեն կապուած։ Կաւելացնենք և այն, որ կարճ ժամանակի մէջ ինքներս էլ օգտակար չենք համարում այդպիսի մի ժողովի գումարումը. պէտք է նախ կանոնաւոր ծրագիր կազմել, ձեռնել խնդիրները, բոլոր եկեղեցական դժուարութիւնների և անհեղութիւնների առաջն առնել և ապա ժողով հրաւիրել։ Կան և ուրիշ ներքին դժուարութիւններ, որ այստեղ անյարմար է բացատրել։ Կկամենայինք միայն, որ եկեղեցական ժողովի գումարումը առաջնորդող մի գաղափար դառնար մեր եկեղեցու վերաշինութեան համար և հէնց այժմեականից աւելի նպատակաւոր կերպով նախապատրաստուէինք այդ օրուայ համար։ Այդ նախապատրաստութիւնը շատ օգտակար կլինէր թմրած մտքերը շարժելու և գուցէ ինքնին վերանայինն մեր թերութիւններից շատերը, եկեղեցական ժողովների կրկնութիւնը կրճատ և եկեղեցու կենդանութեան և միութեան լաւագոյն խթանը կլինէր։

Մինչ այն կեանքի աւերիչ հոսանքները իրենց անելիքն են անում։ Պէտք է թոյլ կապել նրանց դէմ մինչև եկեղեցու լրութիւնը միջոց և հնարաւորութիւն կունենայ չարիքի առաջը վերջնականապէս առնելու։ Այդ նպատակի համար մենք շատ յարմար ենք համարում Ռուսահայոց եկեղեցական դասի համագումարը Ս. Էջմիածնում *։ Այդ ժողովն անշուշտ պաշտօնական կանոններ հրատարակել չէր կարող, բայց գործնական ահագին նշանակութիւն կունենար։ Մեր թերութիւնների մի ստուար մասը վարչական թուլութեան, անփութութեան, հակաօրական կարգադրութիւնների արդիւնք են, լինի այն ստորագրեալ, թէ աւելի բարձր իշխանութեան կողմից։ Սրբազան առաջնորդների, Սինոդի անդամների, փոխանորդների, Էջմիածնի

* Տ. Հովիւ № 11 Պ. Ս-ի «Հոգևոր դասի համագումար» վերնագրով յօդուածը։

միաբանութեան, փորձառու և բանիմաց քահանաների, գուցէ և եկեղեցական և դպրոցական կեանքին ծանօթ աշխարհիկ անձանց, միահամուռ խորհրդակցութիւնը մեր եկեղեցական կեանքի ներկայ ճգնաժամի համար, հաւատում ենք, շատ խելացի դեղատոմսեր կարող էր նշանակել և դործադրել։ Մեր ուժերը որքան թոյլ լինեն և ըստ երևութին աննշան, բայց մի տեղ հաւաքուելուց, օրէնքի և աւանդութեան սահմանների մէջ կառավարութեան և գործունէութեան որոշ սկզբունքներ որոշելուց յետոյ, շատ էական գործեր կարող ենք կատարել։ Այդպիսի մի ժողով կարէր մեր գիտակցութիւնը դէպի մեր պատասխանատուութիւնները, այդպիսի մի ժողով կզգուշացնէր շատերին իրենց զանցառութիւնների և սխալների համար, որոշ գաղափար կկազմէր այն պայմանների մասին, որոնք մեր ներկայ կազմակերպման հիմքն են կազմում, միջոցներ կմեքենադրէր կրօնական անտարբերութեան դէմ մաքառելու, աւելի սերտ և ճիշդ յարաբերութիւն կստեղծէր կեդրոնական և նորա ստորադրեալ վարչութիւնների մէջ։ Այս ժողովի մէջ կարող էին ծրագրուել և այն խնդիրները, որոնք ապագայ եկեղեցական ժողովի խորհրդածութեան նիւթ պիտի կազմեն։ Գուցէ հնարաւոր կլինէր այդ ժողովը նոյն իսկ պարբերական դարձնել։ Հարկ չկայ ամբաստանել, թէ ռուսահայոց եկեղեցական դաշի համագումարը որևէ գործնական հետևանքներ կունենար. մեր պարտքն է եկեղեցու այսպիսի ճգնաժամի ժամանակ բոլոր հնարաւոր միջոցները գործադրել, եթէ նոյն իսկ փոքր հետևանքի էլ հասնելու լինէինք, որպէս զի Տիրոջ խօսքի համաձայն առել կարողանանք. «Եթէ ծառայք անպիտան եմք, զոր պարտէաքն առնել, արարաք»։

Դ.

Բայց ուշադրութիւն պէտք է դարձնենք կազմել և փոքրիկ խմբակցութիւններ կամ ընկերակցութիւններ։ Այդպիսի մի բնական խմբակցութիւն է Մ. Աթոռի միա-

բանութիւնը։ Տարաբաղդաբար Պոլոժենիայի հաստատուութիւնից յետոյ մեր միաբանութիւնը իսպառ զրկուել է իրաւական որ և է նշանակութիւնից վանական դործերի վերաբերութեամբ։ Մինչդեռ երուսաղեմի, Սևանի միաբանութիւնները, մինչդեռ հասարակ վանքերի միաբաններն ու վանահայրերն իրենց վանական դործերի տնօրէնն են, Մայր Աթոռի միաբանութիւնն իսպառ զրկուած որ և է իրաւունքից։ Վանական կառավարութեան և մուս հաստատութիւնների դեկավարներն ու պաշտօնեաները նշանակւում են միայն բարձր իշխանութեան կողմից։ Հազիւ անցեալ աշնան միաբանութիւնն իրաւունք էր ստացել իւր ժողովներն ունենալ, վանական հաստատութիւնների համար պաշտօնեաներ ընտրել, յանձնաժողով էր ընտրուած կանոնադրութիւն մշակելու, գործը սպասի մէջ խեղդուեցաւ։ Բարեբաղդաբար ժողովները փակուած են միայն ժամանակաւորապէս և յոյս ունինք, թէ Ն. Մրբութիւնը կարճանէ նորից միաբանութեան իւր ժողովներն ունենալ։ Այս ժողովները բացի վանական ներքին գործերի կառավարութիւնից, նշանակութիւն կունենան նաև մեր եկեղեցական կեանքը յուզող ամեն տեսակ խնդիրների վերաբերութեամբ և մենք կաղաչենք վերջապէս այն թմրութիւնից և անտարբերութիւնից, որ բռնում է անպատասխանատու և իրաւազուրկ կեանքից։

Ընկերութիւններ են կազմուում և քաղաքների քահանաներից։ Տփխիսի քահանաներն ունին իրենց Ապահովութեան արկղը, նման ընկերութիւն կազմել են և Երևանի քահանաները։ Ցանկալի է, որ նոյն օրինակին հետևէր և մեր մուս քաղաքների քահանայութիւնը։ Փիւղաքաղաքները կեդրոն կարող են լինել իրենց շրջապատի քահանայութեան համար։ Այսպիսով հետդհետէ քահանայական ընկերութիւնների մի ցանց կկազմուէր ամեն տեղ։ Նիւթական ապահովութեան նպատակի հետ այժմ կառավարութեան կողմից այլ ևս դժուարութիւններ չկան բարոյական, հոգևոր կոչման հետ կապուած նպատակներ աւելացնել։ Քահանայական ժողովներին կարող են նախա-

դահել նոյն իսկ առաջնորդներն ու վոխանորդները, կոնսիստորիաների նախանդամ վարդապետները և այդտեղ լսորհրդածութեան և քննութեան նիւթ դարձնել կեանքի այն բոլոր երևոյթները, որոնք կապ ունին եկեղեցու պայծառութեան և իրենց հովուական պաշտօնի հետ։ Ներկայական պաշտօնը դարձել է միայն արտաքին, ձիւսական. պէտք է ընդարձակել նորա հոգևոր բովանդակութիւնը։ Մի անգամ որ մեր քահանաների մէջ զարթնեց պաշտօնակցութեան և կոչման բարձրութեան զգացումն ու նախանձախնդրութիւնը, ինքնըստինքեան նրանցից մի, հոգևոր, կենդանի զինուորութիւն կկազմուի, որին մեր դժբաղդ եկեղեցին այնքան կարիք ունի։ Անհատական գործունէութիւնը, որքան և մեծ լինի, մի ծաղկով գարուն չի գալիս։ Պէտք է միացնենք մեր սրտերը, աղբիւրներից վտակներ, վտակներից գետակներ և գետեր կազմելու համար, որպէս զի մեր դարաւոր եկեղեցու պատքած անդերին կենդանութեան ջուր մատակարարել կարողանանք։

Գ. վ. Ծովսէփեան

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Մայիսի 26-ին Տփղիսից իբր Ամիոռը դարձաւ Ն. Սրբութիւնը։ Մինոդի և վանական միւս հաստատութիւնների ներկայացուցիչներն ընդ առաջ դնացին երկաթուղու կայարանը և առաջնորդեցին Ն. Սրբութեան վիհարան։ Իսկ 27-ին ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ «բարի գալուստ» մաղթելու և օրհնութիւնն առանալու։

Մայիսի 10-ին Մայր Աթոռ վերադարձաւ մեր միաբանութեան ատենապետն անդամ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեան, որ երկար տարիներէ ի վեր կատարում էր Երուսաղէմ ս. Կարապետ վանքի վանահայրութիւնը։ Նորա փոխարէն նշանակուած է Տ. Կիւրեղ վարդապետ, որ արդէն մեկնել է իւր պաշտօնատեղին։

Մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում «Օտար եկեղեցիներ»-ի բաժնի վերայ։ Այդ տեղ աշխատում ենք դաղափար տալ, որքան ներում են Արարատի սուղ էջերը, թէ ինչ չարժանիքներ և դործեր են կատարում օտար եկեղեցիների մէջ, որ մեզ համար էլ կարող են խրատական լինել։ Այս համարում հետաքրքրական է «Փրկութեան բանակի ընկերական դործունէութիւնը Անգլիայում» վերնագրով յօդուածը։ Այս չարժման հիմնադիրն էր «գեներալ» Բութ, որ հոգևոր մի զինուորութիւն կազմակերպեց մեղքի, թշուառութեան և անկրօնութեան դէմ մաքառելու համար և կարճ ժամանակի մէջ այնպիսի մի յաջողութիւն ունեցաւ աշխարհի ամեն մասերում, որ ոչ մի նորագոյն չարժում չէ ունեցել։ Գեներալ Բութի և նորա գործի մասին գրել է Կարապետ վարդ. 1895 թ. «Արարատի» մէջ։

«Տաճկահայքի» բաժնի մէջ Պոլսոյ թերթերից արտատպում ենք Տ. Մաղաքիա պատրիարքի կոնդակը, որով ժողովրդի բողոքի հիման վերայ՝ լուծում է երկու քահանայի եկեղեցու սպասաւորութիւնից։ Այդ քահանաները այրիանալով՝ թոյլ են տուել իրենց նորից ամուսնանալ՝ փոխադարձաբար իրար պսակելով։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Ջէյթունի կաթող. վոխանորդ Տ. Վաղարշակ վարդ. Պատրիարքարան կը տեղեկագրէ թէ քաղաքին և շրջակայ հռոմէական ազգայիններէն, որոնք 265 անձ կը հաշուին, 97 անձ վերադարձած են իրենց Մայրենի Եկեղեցւոյ գիրկը, ինչպէս նաև Հաճի–Տերէէ ազգայինք, որ ասկէ առաջ նոյն դաւանութեան դիմած էին, հարկ եղած ձևակերպութեամբ դարձած են իրենց Եկեղեցին։

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին քարտուղարութեան կողմէ խմբագրութեանս ուղղուած է հետևեալ պաշտօնական նամակը, որ կուղղէ քանի մը կէտերը Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին կողմէ վերջը. 20 ամսաթուով Ս. Պատրիարք Հօր ուղղած ծանօթ պաշտօնագրին, զոր հրատարակեցինք ասկէ առաջ։

Տէր Խմբագրապետ,

Ներկայ եօթնեկին մէջ ատացուած Պոլսոյ թերթերուն մէջ Ն. Ս. Օծութեան վերջը. 20 ամսաթուով ի Պատրիարքարան ղրկած պաշտօնագրի առաջարկութեանց մասը խեղաթիւրուած տեսնուելով՝ հրամայուած է մեզ ուղղել։

1. Կիլիկիոյ կաթողիկոսները պէտք է յիշեն ի Պատարագի ընդհ. կաթողիկոսի անունը։ Եթէ նոյնը պահանջուի վիճակային բոլոր եկեղեցականներէն, վոխադարձ պէտք է Պատրիարքարանի Վիճակաց մէջ Կիլիկիոյ Կաթողիկոսաց անունը յիշատակել՝ յետ էջմիածնայ Կաթողիկոսին։

2. Կիլիկիոյ կաթողիկոսները ի կրօնականս անկախ են Պոլսոյ Պատրիարքարանէն, իսկ հաւատոյ վերաբերեալ ծանրակշիռ խնդրոյ առթիւ խորհրդակցութեան կը մտնեն, կամ հարցեաց վոխանակութիւն մը կը կատարեն Մայր Աթոռոյ Կաթողիկոսին հետ։

3. Եթէ ի Կիլիկիա ձեռնադրուած եպիսկոպոսունք, ըլլան վիճակաւոր կամ առանց վանական, իրաւունք ունենան էջմիածնայ Վիճակաց մէջ պաշտօնավարելու և հոգևոր բարձրագոյն պաշտօններու համար ընտրելի ըլլալու, առանց կերպ. վարչութեան հաւանութեան կամ ընծայագրին՝ չափսի կրնան ձեռնադրուիլ։

4. Կիլիկիոյ Կաթողիկոսաց տրուած Ամենապատիւ սիտղոսը շատ անիմաստ է, քանի որ կրօնական բարձր հեղինակութեան դաղափարը չամփոփիր յինքն: Ամենապատիւ Պատրիարքներէն նշանակելի իրաւասութիւն եւ իշխանութիւն ունին Կաթողիկոսները, քանի որ եպիսկոպոս ձեռնադրելու և Ս. Միւռոն օրհնելու իշխանութենէն զուրկ են Պատրիարքունք:

5. Կիլիկիոյ Կաթողիկոսները Օսմ. Կայս. Կառավարութեան հետ իրենց յարաբերութիւնը ըստ ժողովուրդեան Պատրիարքարանի միջոցաւ կը կատարեն: Ուղղակի դիմումներ ալ կրնան ընել:

6. Կիլիկեան Վիճակաց Առաջնորդներու հաստատութիւնը ուղղակի Կաթողիկոսաց իրաւունքն է. վերահաստատութիւն Վարչութեան կողմէն, բացարձակապէս պէացումն մի է այդ իրաւանց:

7. Առաջնորդաց Պերաթները Պատրիարքարանի միջոցաւ կը խնդրուին և Կաթողիկոսաց կնդակով կը յանձնուին Առաջնորդաց:

8. Կիլիկեան Վիճակներէն Պատրիարքարանի պահանջած մուգաթաան Կաթողիկոսարանի միջոցաւ կը հատուցուի կնոջ չափ և մնացեալ կէսը Կաթողիկոսարանի յարաբերական դիւանները կը յատկացուի:

Քարտուղարութիւն

1907 Մարտ 26 ի Մայրավանս Սսոյ

Մանզումէի Էֆքեար:

ԿԱՐԳԱԼՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿ

ՄԱՂԱՔԻԱ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ողորմութեամբ Աստուծոյ եւ շնորհիւ Սուրբ Հոգւոյն եւ կամօք ազգին Արեւելեան-կոպոս Կոստանդնուպոլսոյ եւ Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Ամենեցուն որոց անկ ծգէ յայտ առնենք թէ՝

Բաղձալի Առաջնորդարանիս պաշտօնական տեղեկութեան համաձայն է որ Վիճակին Տատիկ գաւառակի Ղուլթիկ գիւղի Ղազար Տէր Ղազարեան և Պաս գիւղի Յովհաննէս Տէր Յովհաննէսեան քահանաները այրի մնացած լինելով՝ յանդգնած են վերստին ամուսնութիւն կնքել. միտադարձաբար իրարու վրայ պսակի արարողութիւն կատարելով:

Աղդ. կեդր. Վարչութեան կրօն. ժողովն նկատելով, որ յիշեալ երկու քահանաները հակառակ եկեղեցական իշխանութեան դործ մը կատարած են իւրովի և դաղտագողի ղիրար պատակելով, և դիտելով որ եկեղեցական կանոնաց հակառակ է այսպիսիներու երբ քահանայ ճանչցուիլը, հետևաբար որոշեց խոպան ղրկել և լուծել զանոնք քահանայական կոչումէն և պաշտօնէն և քահանայական առաքինանի իրաւունքներէն ու պատիւներէն, և կարդալոյծ հռչակել, որով ոչ ևս կրնան երբ քահանայ ներկայանալ և դործել, և ոչ երբ քահանայ ընդունելու և ճանչցուիլ Հայ Ս. եկեղեցւոյս բոլոր պաշտօնեաներէն և հաւատացեալներէն:

Սոյն որոշումն հաստատելով և մեք, սովին Կոնդակաւս կարդալոյծ կհռչակենք Ղուկիթեկի Ղազար Տ. Ղազարեան և Պասի Յովհաննէս Տ. Յովհաննէսեան երբեմն քահանաները, և կծանուցանենք բոլոր մեր եկեղեցւոյն Առաջնորդաց և Փոխանորդաց, վարդապետաց և քահանայից, ժողովոց և Խորհրդոց, և առ հասարակ ամենայն եկեղեցականաց և աշխարհականաց, որ այսուհետև ոչ ի սահմանս Պատրիարքութեանս մերոյ և ոչ արտաքոյ նորին չկալ երկիցս և ի դաւառս, վերոյիշեալ Ղազար Տ. Ղազարեանը և Յովհաննէս Տ. Յովհաննէսեանը երբ քահանայ չճանչնան և երբ քահանայ չընդունին, և աղօթեն առ Աստուած, որ Ս. եկեղեցւոյ բոլոր պաշտօնեաները իր հնարաց մէջ պահէ, և օրհնէ և պայծառացնէ Ս. եկեղեցին:

Տէր Յիսուս Քրիստոս, երկնային Հիմնադիրն Սրբոյ և Ընդհանրական եկեղեցւոյ, որ և իւր լուսաստիւռ ջմամբ ամրացուց Հայոց Ուղղափառ և Առաքելական եկեղեցին, նա ինքն հովանի լինի մեշտ իւր վերջին հօտին, և պահէ զայն յուղղափառութեան և ի սրբութեան, բոլոր նորա պաշտօնեաները զօրացնէ ի գործս բարիս, և յանբասիր պաշտօնավարութեան, և բոլոր հաւատացելոց հնարհէ զպէտս նոցա և զկարիս, Ինքն որ դիտէ զամենայն առաւել քան զոր խնդրեմք և իմանամք:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին. ամէն:

Մնամք աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱԿԻԱ ՍԱՐԳՍԻՍԵԱՆ

Տուեալ ի Պատրիարքարանիս
Ի 4 Ապրիլի 1907
Ընդ 500 համարաւ Կոնդակաց.

Մանդուկէի էֆեքեար.

† ՌԵԹԷՈՍ Է. Ֆ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ապրիլի 8-ին Կ. Պոլսում իւր մահկանացուն կնքեց Տաճկահայոց նշանաւոր գործիչներից մէկը՝ մանկավարժ և հեղինակ՝ Ռեթէոս Էֆենդի Պերպերեան: Պոլսոյ հայ թերթերը անխտիր ողբում են նորա կորուստը. հասարակութեան ամեն խաւերի ցոյց տուած կենդանի մասնակցութիւնը յուղարկաւորութեան ախուր հանդիսին՝ ապացոյց է, որ հանգեալը մեծ համակրութիւն էր վայելում: Յուղարկաւորութեան նախագահել է Ս. Պատրիարք Օրմանեանը և դեղեցիկ դամբանական լսուել նորա յիշատակին:

Հանգուցեալը ծնուած էր Պոլսոյ թաղերից մէկում՝ Խասգիւղում 1850 թ. երևելի տոհմից իւր ուժերը նուիրել է մատաղ սերնդի դաստիարակութեան գործին, 1876 թ. հիմնեց նա իւր նշանաւոր Պերպերեան վարժարանը նախ Գատը գիւղում, որ ապա փոխադրեց Իւսկիւտար, վեց տարի առաջ նա տօնեց այդ դպրոցի 25 ամեակը, որ բազմաթիւ կրթուած երիտասարդներ է հասցրել հասարակութեանը:

Բացի մանկավարժական գործունէութիւնից՝ նշանաւոր է հանդիսացել նաև իբրև գրագէտ՝ իւր թարգմանական և ինքնուրոյն գրուածներով: Յատկապէս լմաոտասիրական մանկավարժական խնդիրները նորա ուսումնասիրութեան սիրելի նիւթերն էին, ինչպէս «Դաստիարակի մը խօսքերը», «Խոհ և Ցուշք», «Գեղեցիկն ու Գեղարուեստ» աշխատութիւններն են ցոյց տալիս:

Պերպերեան էֆենդին մասնակցել է նաև պատրիարքարանի վարչական գործերին: Յատկապէս չեշտուում է նորա առեն պետութիւնը Ուսումնական խորհրդին, երբ պատրաստուեցաւ Տաճկահայոց դպրոցների ներկայ ուսումնական ծրագիրը:

Ս. Պատրիարքը յանձն է առել Պերպերեան վարժարանի բարձր հսկողութիւնը, խոստանալով ըստ առաջնոյն ապահովել այդ օգտակար հաստատութեան գոյութիւնը: Վարժարանի ժամանակաւոր կառավարիչ է նշանակուած Պետրոս Էֆենդի Կարապետեան:

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Սուխիաս Եպիսկոպոսի ի Սանկտ–Պետերբուրգ Հայոց դպրոցների մասին (1885 ամի).

Դ.

Հետևեալ օրը, յունուարի 2-ին առաւօտեան ժամը 11-ին այցելութեան են գալիս մեզ մայրաքաղաքի Հայ հոգևորականք. յայտնում են՝ որ եկեղեցւոյ գաւթում յարմարաւոր կայարաններ չկային Ձեզ համար պատրաստելու, քանի որում եկեղեցական կառավարութեան խորհրդոյ անօրինութեամբ սենեակների տաբեվճար վարձեր բարձրացած լինելով՝ դեռ աշնան օրերից դատարկացած են նորանք և ամբողջ ձմեռ վառուած չլինելով՝ բոլորովին անյարմար են բնակութեան համար, մանաւանդ որ և վայելուչ կահաւորութիւն չկայ նոցա մէջ։ Յայտնում են դարձեալ՝ որ պայծառափայլ Իշխան Աբամելիք–Լազարեվն արդէն Սրբազան Սինոդից ստացած է յանձնարարական՝ Ձեր մասին պատշաճաւոր կացարան պատրաստելու և յանձնած է խորհրդի անդամներին կարգադրելու, իսկ նոքա տակաւին նիւթ չեն ունեցած, որպէս զի մի անօրէնութիւն արած լինէին։ Թէ և մեր կողմանէ ոչինչ հարց չէր տրուում բարեկրօն քահանայից մեր վերաբերութեամբ նզամների համար պատմել, բայց ձերունի Տէր Յովհաննէսի սիրելութիւնը բարեհաճում էր մեզ օտարութեան մէջ կարեկցութիւն ցոյց տալ։ Յայտնում են նոյնպէս՝ որ Սրբազան Մակար Արքեպիսկոպոսից մեզ վերայ յատուկ դրութիւն կայ Հոգևոր Կառավարութեան մէջ, բայց դրան բանալին պարոն գործավարի մօտ լինելով՝ չկարողացան բերել և յանձնել։ Ուր ուրեմն երեկոյեան 10 ժամին ձեռքերնիս հասաւ այդ նամակն, որ գրուած է դեկտեմբերի 28-ին և ունի այսպիսի բովանդակութիւն։

«Գերապատիւ Սուքիաս Եպիսկոպոսի Քրիստոսական

«ողջոյն։ Յետ իրաղեկ լինելոյ ի հեռագրոյդ զյանձնարա-
«րութենէ Սինոդին Սրբոյ Էջմիածնի, արժան դատեցաք
«գրութեամբս այսոսիկ հաղորդել Սրբազնութեան Ձերում
«զինչ ինչ պարագայս կարևորս գործողութեանց Ձերոց։
«Նախ ի խօսակցութիւնս Ձեր ընդ մեծաց և փոքունց, պար-
«տիք ընաւ ամենևին չցուցանել զդժկամակութիւն ինչ ընդ
«պետական կարգադրութիւնն, այլ զուն գործեսջիք ողջ-
«քական բանիւք և համոզողական խօսակցութեամբ ցուցա-
«նել թէ՝ որովհետև ի սկզբանէ անտի գրագրութիւնն ի
«մասին հոգևոր և ծիսական դպրոցաց եկեղեցեաց Հայոց
«եղեալք են ընդ մէջ հանգուցեալ Հայրապետին և զխաւսս
«կառավարութեան նախկին փոխարքայութեան Կովկասու,
«վասն որոյ Սինոդն չվստահանայ միջամտել ի գործն վերա-
«պահեալ մի միայն Պատրիարք Կաթողիկոսի, այլ խնդրեալ
«է և այժմ ևս խնդրէ՝ թողուլ զայս խնդիր ցհաստատու-
«թիւն նորոյ Հայրապետի։ Երկրորդ՝ Անէնիք, առ որս խնդրեք
«տալ գիր յանձնարարութեան, զուցէ առ երկիւղի չյօժա-
«րեսցին յատնասէս տեսաւորիլ ընդ Ձեզ. սակայն Ձեր
«հաւատն մեծ է և կենդանի, յայդպիսի դէպս ամենևին
«մի վհատիք, այլ գործեցէք հաստատամտութեամբ և յու-
«սով առ Աստուած։ Երրորդ՝ ջանացէք նախ ընդ իշխան
«Դոնդուկովին տեսակցել և ապա ընդ Նախարարին Ներ-
«քին գործոց, որոյ Հոգևոր գործոց Դեպարտամենտի Դի-
«րեկտորն է կենդակուղէն, այր բարի և խոնարհա-
«միտ։ Իսկ ընդ մերոց ազգայնոց պարտք են ի հարկէ տես-
«սակցիլ և խօսակցել, ծանօթանալ և մտերմանալ։ Չոր-
«րորդ՝ եթէ դէպ լիցի քարոզել յեկեղեցւոջ, բաւիք լինի
«յառաջնում նուագդի ձեռնարկել ի բանն Առաքելոյն
«Աստուծոյ երկերիւք, զթագաւորս պատուեցէք», և ի
«վերայ հաւատարմութեան Հայոց պարծանօք խօսելով՝
«չարունակել զբանն ըստ աստուածատուր ձիրցդ։ Եւ հին-
«գերորդ՝ գրեցի գիր յանձնարարութեան առ գերազանց
«Կարապետեան եղեռանց, զի առաքինի և ազգասէր անձն այն
«օժանդակեսցէ Ձեզ ի խորհուրդս, ի բանս և ի գործս, այլ
«գիր ի վերոյ քան զամէն Աստուած է՝ որոյ օժանդակու-

«Թեան, օգականութեան և հովանաւորութեան յանձն առարեալ զՁեզ և զյայլազգութիւն գործոյդ միամբ աղօթարար»։

Յունուար ամսոյ 3-ին սկսանք այցելութիւններ, տեսնուեցանք Պայծառափայլ Իշխան Սիմէոն Դաւթեան Աբաս Մելիք–Լազարեանցին, Բարձր գերազանց Յովհաննէս Դաւթեան Դելիանեանցին, Պայծառափայլ Միխայէլ Ռոգիոնովիչ կնեազ Կանդակուզէն, գրաֆ Սպերանսկիին, որին յայտնեցինք Ներքին Գործոց Նախարարէն տեսակցութիւն խնդրել մեզ համար, տեսնուեցանք նախարարաց օգնական Իւան Նիկոլայեվիչ Դուբնովին, Անիչկինին, Վալկոնսկիին։ Հետևեալ օրն, վաղքաջ ընդ առաւօտ կնեազ Կանդակուզէն այցելեց մեզ և ասաց, Նախարարը հիւանդութեան պատճառով Ձեզ չէ կարող ընդունել։ Այս ժամանակ յանձնեցինք Նորին Պայծառափայլութեան՝ որ սրբազան Սինոդի յանձնարարութեամբ եկած լինելով՝ Նորին Վսեմութեան անուամբ ծրար ունինք. պէտք է տեսակցինք և յանձնենք։ Նա պատշաճ տեսաւ այցելութեան դնալ Նախարարին ծրարը ձեռքն ունենալով՝ եթէ միջոց լինչ կազդուրուած կլինի և կընդունի, բարի. իսկ եթէ ոչ՝ գրուեթեան պահարանը հանդերձ այցառաջով կարելի է թողնել սենեկապետի մօտ և խնդրել յանձնելու հմմ պէտք էր։ Այցելուի դուրս գնալուց անմիջապէս յետոյ՝ փութացինք Ներքին Գործոց Նախարարի տուն. բարեպատեհ ընդունելին նախասենեակ, յայտնեցին մեր գալստեան համար, պատասխան բերին հիւանդ է, չէ կարող ընդունել. թողինք այն տեղ Սինոդի գրութիւն մեր այցառաջի հետ և վերադարձանք։ Նոյն օրն մեզ այցելութիւն տուինք մեր բազդի պարոններին՝ Գերազանց Կարապետ Յարութիւնեանն Եղեանցին, Մեծարգոյ Մկրտիչ Սարգսեան Սանասարեանցին, Գրաֆեասը Բերովբէ Տէր Պետրոսեան Պատկանեանցին, Լեոնիդէս Մազերովին և այլոց։ Սորա միւս օրն էր կարծեմ, գնացինք Պետրոս–Պօղոս ամրոցն և ջերմեռանդագին յարգանաց հաւաստեօք դրինք ծաղկեայ պսակ Նահատակ Թադեւսոսի դամբարանի վերայ, ժառվ յիշա-

տակելով աչխարհի որդւոց սխրագործ բարերարներիւ երախտեացն ի տրիտուր չափած վարձատրութիւն և բնրա-
նով կարդալ համառօտ հոգեհանգստեան արարողութիւնն,
որոյ մասին նոյնօտի լրագիր յետագայ տողերս տպագրեց
իւր 6-րդ համարուհին։ «Հաղորդում են մեզ, որ յունուարի
«2-ին ժամանեց մայրաքաղաքս, ըստ յանձնարարութեան
«Աստուածապսակեալ Հայոց սուրբ Էջմիածնի Սինոդին Ատրա-
«բիանայ վիճակի Հայոց Կառավարիչ Սրբազան Սուքիաս
«Եպիսկոպոսն նոյն թեմի վիճակային Կոնսիստորիայի ան-
«դամ Մելքիսեդեկ քահանայ Թալանթարեանցի ուղեկ-
«ցութեամբ։ Երեկեան օրը, յունուարի 5-ին սրբազան
«Հովսեպեան իւր պաշտօնակցի հետ՝ ամենահպատակօրէն
«հատատարմութեան և խորին երախտագիտութեան զգաց-
«մունքներով լցուած առ նահատակ արքայի յիշատակը,
«դրին արուեստական ծաղիկներով հիւսուած մի շքեղ
«պսակ Աղատարար Թագաւորի և Հայաստանեայց եկե-
«ղեցւոյ յատկական խնամակալի գերեզմանի վերայ, և
«ծունկ խոնարհելով իրենց անմոռաց բարերարի շիրմին
«յառաջ՝ իւրեանց ջերմեռանդ աղօթքն, ըստ ծխի հայ-
«րենի եկեղեցւոյ, վերադարձին առ Աստուած՝ ի լոյս
«երեսաց հանգուցանել յաւերժացեալ Արքայի սիրելի
«հոգին»։

Ինչպէս սրբազան Սինոդի պատուիրանագրութենէն և Մակար Սրբազան Արքեպիսկոպոսի հրահանգիչ թղթէն կտեսնուին՝ մեք պարտաւորուած էինք նախապէս ներ-
կայանալ Կովկասեան կառավարչապետ Իշխան Դոնդուկով-
Կորսակովին, նոյնպիսի պարտականութիւն դրաւ մեզ վե-
րայ և Նորին Գերազանցութիւն կարգեալ եզեռանց։
Փութացինք Նորին պայծառափայլութեան կացարան, բայց
նա բացակայած էր իւր կալուածք, այս պատճառաւ այ-
ցելեցինք նորա դէխաւոր կառավարութեան կառավարիչ
գեներալ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Շեպելեվին. սորան
չկարողանալով պատահել՝ տանը չգտնուելուն առթիւ,
վերադարձանք մեր հանգիստ և մի քանի օր ապասեցինք
մինչև ծննդեան և մկրտութեան տօնի հանդիսադրու-

թիւնք աւարտուին և ապա չարունակենք մեր այցելու-
թիւնք։ Եթէ չենք սխալուիր՝ այս հանդիսական տօներէն
յետոյ էին՝ որ իւրեանց առանձին գործերով յայտնուե-
ցան Պետերբուրգում գերազնիւ պարոնայք՝ Գէորգ Եւան-
գուլեանց, Յովհաննէս Մտեփաննոսեան Խատիսեանց և
Մխայել Սարգսեան Շահպարոնեանց, որոնք թէ փոխա-
դարձ տեսակցութեամբ սիրաշահում էին մեր պանդխտու-
թիւն, և թէ հետաքրքրութեամբ ոգևորում էին մեզ եր-
բեք չվհատել, ամենակերպ ձեռքէ գալիք աշխատութիւնք
յանձն առնել չխնայելով՝ որ ամէն ոք՝ որոյ կարողացել
էինք հանդիպել՝ անհնարին էր համարած մեր խնդրանաց
յարգութիւն գտնելն։

Մկրտութեան տօնի չնորհաւորութեամբ՝ երբ գեներ-
ալ Շեպելև կգտնուի լուսաւորութեան Նախարարի տան՝
մեր մասին խօսք կբացուի և ինք գժուարութիւն կյայտնէ
մեր հետ տեսակցելուն՝ թարգման չունենալու պատճառու.
իսկ այցելութիւն չվերադարձնելն անքաղաքավարութիւն
կհամարի. այս վարանումէն նորան կազատէ բարձր գե-
րատաղնց Դելիանով՝ ասելով՝ որ մեք ունինք գերարժան
թարգման։ Տակաւին նա մեզ այցելութիւն չտուած
յունուարի 9-ին արժանապատիւ Տէր Մելքիսեդեկ քա-
հանային ուղարկեցինք նորա մօտ խնդրելու՝ երբ ժամա-
նակ կունենայ մեզ ընդունելու և երբ կվերադառնայ իշ-
խան կառավարչապետ Սիրալիր ընդունելութիւն գտնելով
քահանայն՝ պատասխան բերաւ, որ վաղիւն ուղիղ ժամ
10-ին առաւօտուն մեզ կսպասէ տանը և իշխանի վերա-
դարձի մասին կխօսի մեզ հետ տեսակցութեան ժամանակ։
Միւս օրն, որոշուած միջոցին ներկայացանք Նորին Գերա-
զնցութեան, որոյ հետ ունեցանք ընդ երկար տեսակ-
ցութիւն։ Բարեկամք արդէն մեզ զգուշացրած էին՝ որքան
կարելին է նորա հետ խօսիլ համարձակ և ամենայն նա-
խանկատ կարծիքներ չմատուցանելով նորահաստատ գըպ-
րոցական հրահանգի գործադրութեան դժուարութեանց
մասին։ Նախ և առաջ խօսեցանք սրբազան Սինոդի դժուա-
րին կացութեան համար ապագայ Հայրապետին տալիք

պատասխանի մասին, ըստ որում ուսումնարանական կառավարութեան գործ և հրահանգ ի սկզբանէ անտի և այսր գտնուում է Հայոց Կաթողիկոսաց ձեռքում, և ոչ ոք չունի վստահութիւն մտնել նոցա իրաւանց սահմանի մէջ։ Ապա խօսեցանք այն անհրաժեշտ վտանգների մասին՝ որոնք այդ հրահանգի գործադրութենէն պէտք էր յառաջանային. ըստ որում պարտ ու պատշաճ դպրոցներ չլինելով բոլոր թեմական քաղաքներում, եկեղեցական իշխանութեան միակ յոյսն է իւր միջնակարգ, գաւառային յաջորդական քաղաքներում գտնուած դպրոցներով եկեղեցական պաշտօնեաներ պատրաստել։ Այլ որովհետև նոր օրէնսդրութիւն այդ ուսումնարանները, իբրև ժողովրդական հաստատութիւնք, արքունի տեսչաց կառավարութեան է յանձնում, որով զրկուում է հոգևոր տեսչութիւն իւր պարտք առ ազգ և եկեղեցի կատարելէն, ուրեմն կմնայ նորան միայն ամենախանարհ խնդիր, յետաձգել այս հրահանգի կատարումն ցհաստատուութիւն ազգընտիր Հայրապետի, որոյ իրաւունք են միայն դառնալ առ իւր ընտրող ժողովուրդ հնար և դումար պահանջելու Ռուսաստանում գտնուած ամէն մի Հայոց վիճակում Սեմինարիայ բանալու և դորանց կանոնադրութիւնք կազմելու և առաջարկելու ի հաստատութիւն Թագաւոր Կայսեր, որպիսի գործ ծողութեանց Սինոդ չէ կարող ձեռնաձիգ լինել։

Նորին գերազանցութիւն առաջին առարկութեան պատասխանելով՝ դպրոցական կառավարութիւն Սինոդի վարչական շրջանակէն դուրս չհամարեց, որովհետև այն սոսկ կրօնական խնդիր չէ, որ Հայաստանեայց եկեղեցւոյ Քահանայապետի եղական տնօրէնութեան պատկանի, և ոչ մի ժամանակ Կաթողիկոսի մտնում է յետոյ ուսումնական ընթացք չեն կատած մինչև նորոյն ընտրութիւն, մանաւանդ որ Սինոդ ոմանց դպրոցաց հոգաբարձութիւնք հաստատած ևս է։ Առ երկրորդ առարկութիւն ասաց. որ քաղաքական իշխանութիւն միահատատար պարտք ունի առ իւր ենթադրուած բոլոր ազգութիւնք ժամանակայարմար կրթութիւն տալով նոցա և հատատարիմ հպատա-

կութեան զգացմունք զարթուցանելով նոցա սրտից մէջ։ Հայոց ժողովուրդ այլ հպատակ հասարակութիւններէն դուրս չէր կարող առանձնութիւն կազմել իւր դաստիարակութիւնը ինք մատակարարելով։ Այդ հրամանին ենթարկուած է նոյն իսկ ռուս ժողովրդեան մատուր հրահանգութեան գործ։

Միմեանց պատճառաբերութեանց փոփոխակի պատահանելով՝ հոսկ ուրեմն խօսք այն տեղ հասաւ, որ ասացի. «Ձերդ Վերազանցութիւն անտարակոյս քաջագէտ է և մերձաւորապէս վերահասու կովկասեան ուսումնականն չրջանի տարեկան հաշուետուութեանց, նոցա մէջ որքան և մթին գոյներով նկարագրուած լինին հայկական ծխական վարժարանաց կրթութեան գործոմբ յառաջ բերած արդիւնք, սակայն և այնպէս բացերևակի կլսուտուվանին ամէն մինչնակարգ ուսումնական հաստատութեանց վարչութիւնք թէ՝ ուսման և վարուց համար բաշխուած բարձր թուանշաններ միշտ բաժին կլինին այն հայազգի ուսանողաց, որունք աղգային ծխական վարժարաններէն ածանցուած են ի գիմնազիայ։ Կխոստովանին նոյնպէս՝ որ ներքի կարգապահութիւն, յիշխանաւորաց ակնածութիւն, առ բարերարս երախտագիտութիւն ի նիստ ու կացս համեստութիւն՝ առաւելապէս հայ հոգևորականութեան հովանաւորութեան ներքոյ կրթուած և աղգայնութիւնին անցուցած աշակերտաց կպատականին։ Ուրեմն՝ Հայոց Եկեղեցական տեսչութիւն որքան արժանն է իւր ուսուցանելու յիսուսաւանդ իրաւունք յառաջին դարուց քրիստոնէութեան ցայսօր անվթար պահպանելու մասին, նոյնքան բարեխիղճ է և երկրաւոր թագաւորին հատատարիմ հպատակութեան ներշնչութիւնն աւանդելուն մէջ։ Թողունք մէկ կողմ ընկերհաշուական կենցաղավարութեան համար ունեցած ամենօրեական խիստ հսկողութիւնք, մանկանց վերայ ի գպրոցս, զարդացելոց վերայ յեկեղեցիս։ Այս իսկ է գլխաւոր առիթն, որ Ռուսաց օրհնաբանեալ Պետութեան ինքնակալք՝ յօրէ անտի Էջմիածնի Մայր Աթոռոյ նոցա հովանաւորութեան ներքոյ

անկանելոյն, ազատ ի ձեռս Հայրապետաց թողած են իւր եկեղեցւոյ սրբոյ հրահանգութիւնն։ Ի թիւս այդ կայսերաց և յաւերժական օրհնաբանութեան արժանի նահատակ Աղեքսանդր երկրորդ Վեհապետն դեռ 1874 թուականին իւր հրովարտակաւ յանուն Նախարարի Ներքին Գործոց ընդ մէջ հանգուցեալ Գէորգ Կաթողիկոսի և Կովկասեան փոխարքայութեան տեղի ունեցած տարաձայնութիւնք, ժողովրդական ուսումնարանաց վերատեսչաց հսկողութեան վերաբերութեամբ Հայոց ուսումնարանաց մէջ—վերացոյց, բոլորովին ի ձեռս հոգևոր իշխանութեան յանձնելով կրթութիւնը, ինչպէս և մինչև դարերում՝ անդամ եղած են»։

«Դուք հոգևոր վարժարաններ մերձաւոր հսկողութիւնից մեկուսացնելով՝ ասաց Նորին գերազանցութիւն, առաւել կասկածանք եք յարուցանում Ձեր ընթացից վերայ։ Օրէնք միշտ փոփոխութեան ենթակայ է, 1874 թուականի ժողովրդական տեսչաց համար եղած հսկողութեան պարտուց բացատրութիւն է անցեալ տարուան փետրուարի 16-ին Բարձրագոյն հաճութեամբ դրուած հրահանգն, զոր եկեղեցական վարչութիւն պարտի սրբութեամբ կատարել»։

«Եկեղեցական ուսումնարաններ, ասացինք երբեք չենք ցանկացած, որ ամենակերպ հսկողութիւններէ դուրս լինեն. մեր պարծանքն է հաւատարիմ հպատակութեան և համարձակ քրիստոնէական վարդապետութիւն ուսուցանելն. «Աստուծոյ երկրպագութիւն, թագաւորի պատուա-դրութիւն», սակայն եթէ կան անձնաւորութիւնք՝ որոնք արգելք եղած են հսկողութեան, արդարութիւն կպահանջէ պատժել այն մանաւանդ և ոչ թէ նոցա յանցանաց պատիժ հասարակութեան վերայ տարածել։ Այո, օրէնք միշտ փոփոխական են և այն այսպիսի ժամանակ. բայց հոգևոր տեսչութեան համար վիշտ է, ինչու 1836 թուականի օրէնք, Հայաստանեայց եկեղեցւոյն վարչութեան վերաբերութեամբ իւր շատ փոփոխութեան կարօտ թերութիւններով ցայսօր անդեղափոխ մնայ. իսկ 1874 տարւոյն

ծրագիր, առաւել մեր ժամանակի գործ, նորոգութեան կկարօտի։ Որովհետև հայկական դպրոցաց մէջ գործող ուսուցչաց և ուսանողաց ձեռք չէ տեսնուած, և հաւատով ենք չտեսնուի ևս, ոչ պայթող ռումբ, ոչ ընտրական քաղաքական վարդապետութիւնք և ոչ արդար օրինաց դիմադրութիւնք, այս պատճառաւ չատ դժուարին է համարումս դաստիարակութեան գործի հոգևոր վարչութեան ձեռքից առնուիլն միջին դպրոցաց մէջ»։

Ամբողջ ժամ տևեց մեր վիճաբանական տեսակցութիւն. քաղաքավարութեան պարտք զմեզ հարկադրեց այս առաջին անգամ բաւականանալ եղած խօսակցութեամբ. ոտք ելանք, խնդրեցինք Նորին բարեսրտութիւն առ իշխառավարչապետ այս գործոյ մասին միջնորդ լինել և մեզ տեսակցութեան ժամանակ որոշել։ Ասաց՝ Նորին Պայծառափայլութիւն ամսոյս 13-ին իւր կալուածքից քաղաքս կվերադառնայ, Դուք ուղղակի երկուշաբաթի օր, յունուարի 14-ին առաւօտեան ժամ 11-ին, եկէք նորա կայարանն, սենեկապետ աստիճանաւոր Ձեզ կընդունի և կներկայացնէ. միայն խնդրեմ, առանց ակնածութեան, միևնոյն կերպով խօսիք և իշխան կառավարչապետի մօտ։

Վերադիր խօսակցութիւներ՝ իբրև հաւատարիմ հաշուառու մի առ մի պատմեցինք մերազգի պարոններին, մանաւանդ Գերապանց Եղեռնցին, որք խրախուսեցին չկասել այդ ուղիղ ճանապարհէից։ Հասաւ ժամադիր օրն և բաղդատօրութիւն ունեցանք ներկայանալ Պայծառափայլ իշխան Կորսակով—Դոնդուկովին՝ որոյ մօտ էր և պարան Շեպելև։ Առանց թաղլոյ մեզ առաջարկութիւնք առնել՝ սովորական ընդունելութեան ողջունից յետոյ, սկսաւ սպառնագին եղանակաւ խօսիլ. «Էջմիածնի Սինոդի դիտաւորութիւնն լինչ է, որ Պետական հրաման չէ կատարում։ Քանիցս անգամ ես առաջադրեցի կատարել՝ մնոտի պատճառաբանութիւններ մէջ բերելով յետաձգեց. իսկ այժմ վեր է առել և Ձեզ արտաքոյ կարգի դեսպանութեամբ նախարարի և կայսեր մօտ է ուղարկել։ Մխիթ կարծումս է, որ կայսերական հրամաններ չկատարելն իրաւունք են

Հայոց հոգևոր տեսչութեան համար։ Մինչեւ ամբողջ Հայ ժողովրդեան դաստիարակութեան գործ պէտք է դանուի եկեղեցական վարչութեան ձեռք, ինչ է ուրեմն քաղաքական իշխանութեան կոչումն և պարտք իւր հպատակաց վերաբերութեամբ։ Եկեղեցւոյ համար պաշտօնեայք պատրաստելու բաւական են էջմիածնի ճեմարանն և բոլոր վիճակներում դանուած դպրոցներն, իսկ լեզու և կրօն ուսուցանելու համար Հայոց մանկանց՝ գեռ շատ են երկդասեան և մի դասեան վարժարաններն։ Դուք առաւել էք կամենում արտօնաւորուիլ դպրոցական գործում քան զնոյն իսկ ուղղափառ հոգևորականութիւն։ Ասացէք խընդրեմ, ինչ իրաւունքով Հայոց եկեղեցական իշխանութիւն արքունի միջնակարգ ուսումնարաններին հաւասար դասընթացքով օրիորդական դպրոցներ է պահպանում, վանուհի և կուսանք է կամենում պատրաստել նորանցից։ Այս բաւական չէ, այլ հոգևոր վարչութիւն կամենում է՝ որ իւր ուսումնական շրջանն բոլորովին անթափանցելի մնայ լուսաւորութեան նախարարի վերահսկեցող աստիճանաւորաց և քաղաքական հսկող պաշտօնատարաց համար։ Այսպիսի կամայականութիւնները վերջ ի վերջոյ բանն այն տեղը կհասցնեն, որ կառավարութիւնը բոլոր հոգևոր դպրոցներ կփակէ, ինչ պէտք է անել այն ժամանակ։ Դիտեմ, պէտք է Կոստանդնուպոլսոյ ազգային լրագիրների մէջ տպագրուին բողոքներ, տպագրուին և քանի մի եւրոպական քաղաքների պարբերական թերթերում տրտունջներ։ Թերևս գտնուին և Ռուսաստանի մէջ լամբագրութիւններ, որոնք յանձն առնեն հիւրընկալել իւրեանց հրատարակութեանց մէջ քանի մի յօդուածներ այդ մասին։ Սակայն ինչ օգուտ դարանցից, այդ առ առաւելն կաւել քանի մի ամիս, այնուհետև Հայ ժողովուրդ՝ որ այնքան ուսման և դաստիարակութեան պէտք իւր որդւոց համար զգացած է, դունդ-դունդ պէտք է դիմէ քաղաքական իշխանութեան և թախանձէ՝ իւր հաշուով ուսումնարաններ բանալ և ժողովրդական արքունի տեսուչների հսկողութեան ներքոյ կառավարել։ Իսկ հոգևոր

իշխանութիւն պէտք է կորցնէ իւր այն վսեմ նշանակութիւնը ժողովրդեան աչքում՝ զոր ունէր կրթելով նորա երկաեաի զաւակունքը»։

«Ձերդ Պայծառափայլութիւն, ասացինք, սրբազան Սինոդ ուրիշ ոչ այլ ինչ դիտումն չունի կայսերական հանութեամբ հրատարակուած հրահանգի գործադրութիւն ցայս վայր յետաձգելով՝ քան զայն ազերանները, զորս կրկնած է առ Ձեզ և այժմս մեզնով կթախանձէ, այսինքն ապագայ պատասխանատուութիւնից ազատել իւր անդամներս, ըստ որում Կաթողիկոսին վերապահուած է ուսումնարանաց կառավարութիւն։ Ձիս ուղարկած է Հոգևոր իշխանութիւն յատկապէս Ձեր պայծառափայլութեան մօտ՝ դիտենալով որ Տփղիս չէք, այլ մայրաքաղաքումս, հարկադրուելոյ այստեղ գալ։ Եվթէ Դուք չնորհ կանէք քանիցս առ Ձեզ կրկնուած խնդիրն առաջարկել ի բարեհաճ անօրէնութիւն Նախարարին՝ ինչպէս Սինոդի սրբազան անդամոց սուրբ զգացմունքն է և խորին հաւատարիմ հպատակութեան վճռարանք, յայս ունիմ որ կյարգուի Ձեր միջնորդութիւն և հայ հոգևորականութիւն իւր ներկայ անելանելի դրութիւնից կազատուի։ Հայոց հոգևոր իշխանութիւն երբէք ամբաշխած չէ օրինաւոր իշխանութեանց, անդամ և լինին նոքա հեթանոս, կանոնաւոր հրամաններն անդրդած թողուլ. այդ իւր բարձր կոչման և նպատակաին պարտականութեանց՝ որ է հնազանդութիւն, հլիմովին հակառակ է։ Հայազգի հաստատակութեան կըրթութեան գործ ի սկզբանէ անտի քրիստոնէութեան յայսօր բացառապէս Հայ հոգևորականութեան ձեռքն է եղած, մինչև իսկ իւր քաղաքական անկախութիւն ունեցած ժամանակներս։ Սորանց վկայք են մեր ամբողջ դպրականութիւն՝ որ կրօնական–բարոյական ուղղութիւն ունի. վկայք են աստուածահաճոյ վանական հաստատութիւնք, որունք համանգամայն ուսումնարանք են եղած. վկայք են և վարդապարների աւուրց հետէ և այսր անկապտելի Հայոց Կաթողիկոսաց ձեռք եղած ամեն իշխող ազգերէ արուած արտօնութիւնք։ Հայոց սուրբ եկեղեցին ուրիշ

նպատակ չունի ժողովրդեան կրթութեան գործում, քան որ ունի նոյն ինքն կառավարութիւն, ինչպես լիովին խօսած եմ Նորին գերազանցութեան, (ակնարկելով Շիպելիևն)։ Արդարև, էջմիածնի ճեմարան և սեմինարիաներ բաւական կլինին եկեղեցականներ պատրաստելու։ Բայց ցաւալին այն է՝ որ ամբողջ Ռուսաստանի մէջ երկու սեմինարիայ միայն կայ. Տիխխոսում՝ Ներսիսեան դպրանոց. իսկ Նոր Նախիջևանում Բեսսարաբիոյ վիճակի սեմինարիան, որ նորերս բացուած լինելով՝ դեռ կազմակերպուած չէ. իսկ սոքա երկուսն հազարաւոր հոգևորականներ հասուցանել ազգի ներկայ պահանջին համաձայն կարող չեն։ Հայոց հոգևորականութիւն ոչ միայն ուղղափառ եկեղեցականութենէն առաւել պահանջ ունի՝ անկախ հոգևոր վարժարաններ ունենալու գործում, այլ շատ ուրախ կլինի՝ եթէ նորանոյ չնորհուած արտօնութիւն տարածուի և իւր դպրոցաց վերայ։ Արդար և, վանուհիք և կուսանք չէ պատրաստում հոգևոր իշխանութիւնը, բայց միանգամ երկնաւոր վարդապետից և երկրաւոր իշխանաւորներից ուսուցանելու իրաւասութիւն առանալով՝ չէր կարող կրթութեան և դաստիարակութեան չնորհաց սեղան մի միայն տղայոց առաջ բանալ և աղջկանց ղրկել. այս պատճառաւ է, որ օրիորդական դպրոցներ ևս բացած է ժողովրդեան կրթութեան գործում միահաւասար նշանակութիւն ունին հոր և մոր ազդեցութիւնք իւրեանց զաւակաց վերայ. միակողմանի կլինի եկեղեցական տեսչութեան հաստատիլ և քաղաքացիներ պատրաստելու աշխատութիւն, եթէ աղջկանց ուսում տալուց հրաժարուի։ Իրաւունք՝ զոր եկեղեցական իշխանութիւնն ունեցած է ութերորդ դարէն ի վեր, հաստացանելով անգամ կին հեղինակներ, եկեղեցական արտաշարժ բանաստեղծական երգերի և ընդօրինակողներ աստուածաշունչ սրբազան մատենից։ Երբէք և երբէք հակողութիւնից չէ խորշած Հայոց դպրոցական վարչութիւն և ամէն ժամանակ պահանջուած հաշիւներ ճշտութեամբ մատուցուած են հարկաւոր իշխանութենից։ Եթէ մանաւոր զանցառութիւնք կան, նոքա

ընդհանուր կերպարանք առանձել չեն կարող, այլ պատշաճ միջոցներով կուղղուին։ Ի վերջոյ՝ Հայոց եկեղեցական իշխանութեան բարոյական նշանակութիւն ժողովրդեան մօտ պահպանելով՝ քաղաքական իշխանութիւնն առաւել վտանգ չէ կարող ունենալ, քան որում նոյն է ազդեցութիւնն՝ բարոյական լինի այն կամ նիւթական. և սորա պատուղ ու արդիւնք սկսում է տեսանել ֆրանսիական հասարակութիւնն»։

Ամենայն առարկութեանց վախճան տուեցաւ, երբ խնդրեցինք Նորին Պայծառափայլութիւնից միջնորդել ուր հարկն է ռուսաց հոգևորականութեան տրուած ուսումնարանական հրահանգը տարածուի և հայոց վարժարանաց վերայ։ Թղթով դիմել առաջարկեց մեզ և արձակուեցանք։ Ժամանակ ասել, որ բոլոր իսօսակցութեան միջոցին Եպսկ. ներկայ գտնուելով և իւր հետ ունեցած խորհրդակցութիւնք ըստ դէպսաւոր մասանց կրկնուեցան։

(Շարունակելի)

ԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Գլ. Ժ.

Կիւրակի պատարագից յետոյ խմբի անդամները, ըստ սովորութեան, հաւաքուեցան ընթերցարան։ Ամենքը հետաքրքրուած էին «Փարոսում» հիմնած նոր գործի ակզբնաւորութեամբ և մեծ ուշադրութեամբ լսում էին առաջին ժողովի մասին սրած պատմութիւնը։ Ցաջողութիւնը սպասածից աւելի էր։ Ամենքը հաւատացած էին, որ գործը

կարող է յարատևել։ Շատերը ցանկութիւն էին յայտնում անձամբ մասնակցելու գործին։ Ոմանք յայտնեցին իրենց պատրաստակամութիւնը «Փարոսում» հոգևոր համերգների համար երգիչների խումբ պատրաստելու։ Բժիշկ Վեստը առաջարկեց իւր ծառայութիւնը ժողովի օրերին աղօթքից ու ըրուցատրութիւնից յետոյ ձրիաբար ընդունելու հիւանդներին։ Վիրջինիա Պէյջը յանձն առաւ բակում մի փոքրիկ դեղատուն հիմնել իւր ծախքով հիւանդներին ձրիապէս դեղեր բաժանելու համար։ Գործը ակնյայտնի կերպով աճում էր։

Չարեքշաբթի երեկոյեան Պրէյի բարակում տեղի ունեցած ժողովի մէջ, բացի Հռաքել Վինսլօուից, երգում էր արդէն մի մեծ և լաւ պատրաստուած խումբ նոյն ընկերութեան անդամներից կազմուած։ Այդ երգիչների ներկայութիւնն անգամ բաւական ազդեցութիւն էր անում հաւաքուած ամբոխի վրայ։ Նրանք հասկանում էին, որ այդ մարդիկ հազնուած մարդիկ եկել էին այդտեղ ոչ թէ իբրև ալարոններ, այլ իբրև եղբայրներ և այդ նրանց յուզում էր ու քաջալերում։

Ուզիլ Անկիւնի բնակիչներին ու շքեղ ապարանքների սեփականատէրերին բաժանող պատը յանկարծ բացուեցաւ և երևեցաւ, որ թէ այս և թէ այն կողմում ապրում են նոյնանման սիրտ ունեցող մարդիկ, որ նրանք կարող են հասկանալ իրար և նոյնիսկ սիրել միմեանց։ Խումբն ու Հռաքելը հրաշալի կերպով երգում էին։ Պարզ էր, որ մարդիկ երգում էին ոչ միայն ձայնով, այլև հոգով և այդ հոգին լի էր սիրով ու կարեկցութեամբ դէպի թշուառ ունկնդիրները։

Հինգհարիւրի չափ ամբոխի մէջ կատարեալ լռութիւն էր տիրում։ Երբեմն լսւում էին ծանր, խոր հառաչանքներ։ Ամբոխի մէջ, մի անկիւնում, կանգնած էր Ուոլլին Պէյջը։ Նա երբէք այսպիսի բան չէր տեսել և խորապէս յուզուած էր։ Արցունքները գլորւում էին նրա աչքերից և դրանք ուրախութեան, խաղաղութեան, հոգու անդորրութեան արցունքներ էին։

Ռօլլինի կողքին ծնկաչոք արտասուում էր մի ինչ որ ցնցոտիներով ծածկուած մարդ, թափառաշրջիկի արտաքինով։ Դա «Մխոտածն» էր։ Նա այսօր միանգամայն զգաստ էր և նոյն իսկ աւելի մաքուր էր երևում. կարդի էր բերել, որչափ այդ կարելի էր, իւր ցնցոտիները։ Նորա մէջ մի մեծ փոփոխութիւն էր կատարուել. երկուշաբթի օրուանից սկսած ոչ մի կաթիլ օղի բերանը չէր առել և այսօր եկել էր բարակ ամենքից վաղ. իսկ այժմ, մի անկիւն քաշուած և երեսը ձեռքերով ծածկած, լալիս էր, ինչպէս լալիս են դառնապէս վշտացած փոքրիկ երեխաները։

Ռօլլինին ու Մխոտածին ճանաչող կողմնակի դիտողի համար այդ երկու կողք կողքի լացող մարդիկ յուզիչ պատկեր էին ներկայացնում։ Մէկը՝ բարձր դասակարգի ներկայացուցիչ, միլիոնատէր, թատրոնների ու ակմբանոցների մշտական յաճախորդ. միւսը՝ ֆշուտա դասակարգի ներկայացուցիչ, ցնցոտիներով պատած թափառաշրջիկ, բանակ ու գինետան մշտական յաճախորդ։ Մարդկանց սովորական աչքարհահայեացքի տեսակէտից նրանք կանգնած էին մարդկային սանդուղքի երկու հակառակ ծայրերում. նրանց մէջ մի անանցանելի վիհ կար։ Իսկ այժմ, այստեղ՝ ժողովարանում, նրանք երկու հարազատ հոգեկից եղբայրներ էին ներկայանում. երկուքն էլ լալիս էին անցեալի, անդառնալի կորստի, անմտութեամբ անցրած կեանքի ամենալաւ տարիների համար. երկուքն էլ աղօթ կերպով հաւատում էին, որ դեռ ամեն ինչ կորած չէ իրանց համար։

Երբ երդեցողութիւնը վերջացաւ, ամբոխի առաջ քարոզելու դուրս եկաւ պաստօր Մէկսուէլ։

Այս անգամ ամբոխը իրան հանգիստ էր պահում. չէին լսում ոչ ոգևոկ, ոչ ծիծաղ և ոչ էլ կոպիտ հանաքներ։ Նրանք, ի հարկէ, հասկացել էին, որ Էսարադի վրայ հաւաքուած մարդիկը եկել էին իրենց մօտ անկեղծ սիրուց դրդուած, որ այդտեղ բարի գործ է կատարուում և որ «Փարոսը» չէր կարելի գինետուն դարձնել։

Երբ դուրս եկաւ Հռաքելը՝ ամենքը առանձնապէս

լարեցին իրենց ուշադրութիւնը։ Նա երգում էր, իսկ Վիրջինիա Պէյը ընկերակցում էր նրան դաշնամուրի վրայ նուագելով. նրա երգը ամբողջովին յափշտակել էր ամբոխին։ Հռաքէլը ինքը զգում էր, որ նա այստեղ երգում է այնպէս, ինչպէս երբէք դեռ չի երգել։

Ուղիղ Անկիւնի այդ թշուառ ու կեղտոտ բնակիչները յիշեցնում էին նրան վաղեմի մանկութեան մի տխուր պատկեր։ Յարնանային մի հրաշալի օր Հռաքէլը մօր հետ զբօսանքի էլած ժամանակ նստել էր քաղաքից դուրս հոսող գետի ափին։

Գետը նոր էր ազատուել սառուցի կապանքներից և յորդառատ ջրերով ծածկել էր ցածրիկ ափերը։

Երեկոյեան դէմ էր. մայր մանող արևը ներկել էր ամպերը պայծառ կարմիրով։ Մեղմ փչում էր գարնանային ախորժելի զեփիւռը։

Իրանցից մի վերստ հեռու, քաղաքային այգում զբօսանք կար։ Այնտեղ հնչում էր երաժշտութիւնը և նրա ձայները հասնելով գետի այս ափը հանդչում էին այնտեղ քնքշութեամբ դգուելով մարդու սիրտը։ Յանկարծ գետի միւս ափից լսուեցաւ մի սարսափելի սիրտ կտրատող աղաղակ. «Ազատեցէք, օգնեցէք»։

Խեղդուում էր մի հարբած մարդ։ Այն ափում ոչ ոք չկար, իսկ այս ափում միմիայն Հռաքէլն էր իւր մօր հետ։ Ոչ մի կերպ օգնելու հնար չկար։ Իրանք տեսնում էին, թէ ինչպէս խեղճը կռուում էր ալիքների հետ, լսում էին նրա աղաղակները, իսկ իրանք յուսահատ շարժուձեներ էին անում, սակայն ոչ մի հնարաւորութիւն չունէին օգնութեան հասնելու։

Վերջապէս խեղճ մարդը ցնցողաբար շարժեց ձեռքերը և ծածկուեցաւ ջրի տակ։

Գետը առաջուայ պէս գլորում էր իւր պղտոր ալիքները. մութը աւելի թանձր կերպով իջնում էր երկրի վերայ, իսկ քաղաքի այգուց լսուում էին պարերգի ուրախ հնչիւնները։

Այտեղ, Որէյի բարակում, Հռաքէլին թուում էր, որ

կեանքը նոյն պղտոր ջուրն է, որ ինքը նստած է գետի մի ափին։ Քաղաքի կետրոնում տիրում է ուրախութիւն, նուագում է երաժշտութիւնը, լսուում է երգեցողութիւն, իսկ մեւս ափին պղտոր ալիքների մէջ թըպրտում է ոչ թէ մի մարդ, այլ ամբողջ Ուղիղ Անկիւնը, հարիւրաւոր, հազարաւոր այդպիսի թաղեր։ Նրանք նոյնիսկ չեն աղաղակում կամ երբէք աղաղակում էլ են, նրանց ձայնը չի հասնում այստեղ. բայց Հռաքէլը տեսնում է, որ նրանք կորչում են, որ ոչ մի տեղից օգնութեան հասնող չկայ, և ինքը սարսափահար յուսահատական շարժուձեւեր է անում։ Նա ուզում է օգնել խեղդուողներին, կամենում է փրկել նրանց և դրա համար միմիայն մի միջոց ունի՝ իւր ձայնը, իւր երգը։ Ուստի և նրա երգի մէջ լսուում էին թէ կսրտեռան սարսափ, թէ կարեկցութիւն դէպի կորչողները, թէ աղերս առ Աստուած փրկութեան համար։

Երգեցողութեան կիսում նա յանկարծ կանգ առաւ։ Նրա ձայնը խեղդուեցաւ. սաստիկ յուզմունքից նրա կոկորդը ճնշուում էր և սկսեց բարձրաձայն հեկեկալ։ Նրա հետ միասին հեկեկալ սկսեցին նաև շատերը ամբոխից։ Առանձնապէս դառն կերպով լալիս էր մի երիտասարդ աղջիկ։ Նա հազիւ 18—19 տարեկան կը լինէր, սակայն Ուղիղ Անկիւնը կարողացել էր արդէն իւր անմաքուր կնիքը դնել նրա վրայ։

Երգեցողութեան ընթացքում նա իւր աչքերը չէր հեռացնում Հռաքէլից և Վիրջինիայից։ Նրան, կարծես, զարմացնում էր այդ մարդու, քնքոյշ աղջիկների տեսքը, որոնք սակայն զգուանքով չէին խուսափում Ուղիղ Անկիւնի անմաքրութիւնից, այլ գալիս են այդտեղ, կամենալով որ և է կերպ օգնել նրանց։

—Բայց մի՞թէ կարելի է մի բանով օգնել մեզ,—մտածում էր խեղճ աղջիկը։—Այ, օրինակ, ես. միթէ հնարաւոր է, որ ես փոխուեմ։ Կարելի՞ է մտածել, որ ես նորից մարդու կը դառնամ։ Չէ՞ որ ես կորած եմ։

—Եթէ այդպէս է, հապա ինչու՞ են եկել այստեղ այդ մարդիկը,—կրկին հարց էր տալիս իրեն Թշուառ աղջիկը։

—Նշանակում է, նրանք կարծում են, որ մենք դեռ բոլոր-վին կորած չենք, որ դեռ յոյս կայ փրկուելու։ Մի՛թե այդ ճշմարիտ է, մի՛թե ես կարող եմ դուրս գալ այն ցեխից, որի մեջ խրուած եմ։

Եւ Թշուառ աղջիկը ապօթում էր, ապօթում էր ջերմեռանդութեամբ, մաքրուելու, առաջուայ պէս մաքուր դառնալու սաստիկ ցանկով։ Վիշտը ճնշում էր նրա սիրտը, արտասուքը խեղդում էր նրան։ Մոռանալով իրեն, նա բռնեց Հռաքէլի ոտները և սկսեց հեկեկալ նրա հետ միասին։

Վիրջինիա Պէջը մօտեցաւ երկու լացող աղջիկներին, Թշուառ աղջկան բարձրացրեց գետնից և սկսեց հանդստացնել նրան ու Հռաքէլին։

Ունկնդիրների վրայ այս տեսարանը սաստիկ ազդեց։ Նրանք առաջին անգամն էին տեսնում, որ երկու մաքուր և լաւ հադնուած աղջիկներ բարձր դասակարգից համբուրում ու մխիթարում են մի Թշուառ աղջկայ, որպէս հարազատ քրոջ։

Պատօր Մէկսուէլը հասկացաւ ամբոխի տրամադրութիւնը և կրկին անգամ խօսքը ուղղեց ունկնդիրներին։

—Սիրելի բարեկամներ, մենք չենք եկել այստեղ ձեզ զուարճացնելու և ձեր լսելիքը երգեցողութեամբ ու ճառերով պարարելու։ Մենք եկել ենք այստեղ ձեզ գործ կոչելու։

Մի անգամ ականատես եմ եղել սարերի վրայ, թէ ինչպէս ամբոխը բարձրանում էր դէպի լերան գագաթը։ Ճանապարհը դժուարին էր, դարիվերը շատ թեք, մենակ հնար չկար բարձրանալու։ Ովքեր աւելի պինդ ոտներ և ուժեղ ձեռքեր ունէին, առջևից էին գնում։ Միւսները գնում էին նրանց յետևից։ Առջևից գնացողները յաջում էին յետևից եկողներին, իսկ սրանք պաշտպանում էին առջևից գնացողներին։ Այսպիսով փոխադարձ օգնութեամբ ամենքն էլ կամաց կամաց դէպի վեր էին բարձրանում, մինչև որ, վերջապէս, հասան լերան գագաթը։

Այստեղ մեր առջև այդ տեսակ մի ճանապարհ կայ անցնելու։ Մենք ամենքս էլ չափից դուրս ցած ենք իջել.

պէտք է դէպի վեր բարձրանալ, իսկ այդ աւելի լաւ կա-
րելի է անել ընդհանուր ուժով։ Պէտք է ամենքս էլ դիմենք
դէպի դարիվերը. մենք բարձրանանք և միւսներին էլ քա-
շենք մեր յետևից։

—Մենք այդ գործի համար չափազանց թոյլ ենք,—
գոչեց ասէք դուք ինձ։

—Անվիտ առարկութիւն,—կը պատասխանեմ ես ձեզ։
Մրջիւնը ձեղնից ուժեղ չէ, սակայն նա ևս հատիկ է տա-
նում դէպի իր բոյնը։ Մարդն ևս պարտական է դէպի
բարեաց մի հատիկ ձգելու մարդկային շինարարութեան մէջ։
Եւ Աստուծոյ արդարութեան այդ հատիկը երկրի վրայ
ձեռք բերելն ու մարդկանց տալը այնքան էլ դժուար չէ,
որքան այդ թուում է մեզ։

Վեր առէք կայծը. ինչ բան է դա. փայտի մի փոքրիկ
կտոր, որ կրակ դառնալով լոյս է տալիս և կարող է մեծ
խարոյկ վառել։

Ինչու՞ ձեղնից ամեն մէկը մի այդպիսի կայծ չվերի.
դուք կարող էք լինել. դեռ այդ քիչ է, դուք պէտք է լինէք
լուսատուս կայծեր։ Եթէ ես կամ մի ուրիշ քահանայ մտնենք
գինետուն կամ հարբած թուղթ խաղացողների մի ժողովա-
տեղի, գուցէ չվոխտուեն, քաշուին մեզնից, բայց այնքան էլ
չեն լսիլ մեզ։ Սակն ինչ իր տեղն ու ժամանակն ունի։ Իսկ
ձեր մուտքը այդպիսի տեղեր ոչ ոքի չի չվոխտիլ և չի զար-
մացնիլ։ Դուք հանդարտութեամբ մօտենալով մէկին, մի-
սին, երրորդին, կարող էք ասել։

—«Բարեկամ, ինչ ես կարծում, Աստուած մեզ նրա
համար է ստեղծել, աշխարհ ուղարկել, որ մենք չարու-
նակ գիշեր ցերեկ գինետներում ու խաղատեղերում ըն-
կած լինենք։ Մի՞թէ մենք ուրիշ գործ չունենք կատարելու։
Անշուշտ ունինք, չէ՞ որ տանը կինդ, երեխաներդ, կամ պա-
ռաւ մայրդ անհամբեր սպասում են, թէ երբ տուն կըգայ
իրենց խնամող—կերակրողը։ Կշռի՛ր քո այտեղի ուրախու-
թիւնը և նրանց այնտեղի վիշտը. կարծեմ տարբերութիւ-
նը չատ մեծ կըլինի»։

Անշուշտ չատերը կըծիծաղեն ձեր խօսքերի վրայ,

կըհայհոյեն ձեզ։ Բայց մի վրդովուիք. կըգտնուի մէկը, որ երթ սրտի վրայ կադդեն ձեր խօսքերը։ Երևակայեցէք, որ աշնան մի անձրևային ցուրտ գիշեր դուք գտնուում էք դիակներով ծածկուած պատերազմի դաշտում։ Շատերը նրանցից մեռած են, ննջում են յաւիտենական քնով. բայց նրանց մէջ կարող են գտնուել դեռ կեանքի նշոյլ ցոյց տուող քանի մի հոգի։ Եթէ նրանց ժողովող ու օգնութիւն ցոյց տուող լինի, նրանք կըկենդանանան։ Մի թէ չարժէ հէնց այդ մի քանի թշուառների, թէկուզ երկուսի—երեքի, համար չըլնել ամբողջ պատերազմի դաշտը։

Իսկ ինչ է ներկայացնում գինեաներով ու այլ կասկածելի նկուղներով լի Ուղիղ Անկիւնը, եթէ ոչ կեանքի կուռւ մէջ ընկած մարդկանցով ծածկուած պատերազմի մի դաշտ։ Մի՛թէ մենք անտարբեր սրտով պէտք է թողնենք անպարէ կորածների մէջ նաև նրանց, ովքեր դեռ կարողութիւն ունին ոտի կանգնելու։

Այդ տեսակ թշուառների համար մեր «Փարոսը» կըլինի բժշկական օգնութեան կենդրոն։ Ուր որ հարկաւոր է հոգևոր օգնութիւն, նեցուկ, եկէք այստեղ. միշտ կըգտնեք այստեղ ձեզ սիրող ու օգնելու պատրաստ եղբայրներ։ Բայց գլխաւորապէս ինքներդ եղէք օգնողներ, աշխատեցէք օգնել ուրիշներին։ Այստեղ Աստուածային կրակից պաշար առէք ձեզ համար և լուսատու կայծեր եղէք Ուղիղ Անկիւնի մութ խորշերում։

Մութ է այստեղ, Ուղիղ Անկիւնում, մութ է ընդհանրապէս նաև մեր կեանքում։ Շատ լոյս է հարկաւոր։ Ի մի հաւաքուենք ամենքս որպէս կայծեր և լուսատու մեծ խարոյկ կազմենք։

Անցեալ ժողովում ես հարցրի ձեզ. համաձա՞յն էք արդեօք «Փարոս» յաճախելու։ Դուք պատասխանեցիք. «այո»։ Այժմ ես հարցնում եմ։

—Չկա՞ն արդեօք ձեր մէջ այնպիսիները, որոնք կուզենային լուսատու կայծ լինել։ Ով որ ուզում է օգնական լինել մեզ, ժողովից յետոյ թող մնայ այստեղ։

Այստեղ Մէկսուէլը համառօտակի պատմեց ունկնդիր-

ներին իւր խմբի ծագման պատմութիւնը. թէ ինչպէս առաջ եկաւ այդ խումբը և թէ ինչպէս իրենք, այդ խմբի անդամները, այստեղ, Ուղիղ Անկիւն, եկան։

—Մեզ ուշքի բերից մեր կորած թշուառ եղբայրը, մի բանուոր։ Մենք եկանք ձեզ մօտ ղդասատացուցիչ խօսքերով։ Գնացէք և դուք սիրոյ և արդարութեան խօսքերով ձեզ շրջապատող կեանքի մէջ և ղդասատացրէք դէնուն սրտաններից թմրած մարդկանց։

Ժողովը փակուեցաւ ընդհանուր երգով, որից յետոյ ամենքը սկսեցին ցրուել և բարաքը հեռղհեռէ դատարկուեցաւ։ Երբ բոլորը դուրս եկան, Մխոտածը, որ կուչ էր եկել մի անկիւնում, յուզուած մօտեցաւ Մէկսուէլին։

—Գուցէ դուք ինձ յիշէք, պատասխան եմ Մխոտածն եմ։ Անցեալ անդամ ես ձեզ հետ խօսեցի այստեղ։ Այն ժամանակ ես լսած էի և ձեր խօսքերի ազդեցութիւնը ինձ վրայ շատ կարճատև եղաւ։ Հէնց նոյն երեկոյեան ես պղտութեան նոր ծրագիր կազմեցի։ Գնացի այն երիտասարդ օրիորդի մօտ, որ այստեղ երգում էր, և օգնութիւն խնդրեցի պատրուակով, կամենում էի դիտել, թէ դիշերը ինչ ճանապարհով յարմար էր մանել այդտեղ։

Ես կարծում էի, որ օրիորդ Վինսլօուն դուրս կը գար նախասենեակը, կամ գուցէ մի միայն ծառայի միջոցով կը պատասխանէր ինձ։ Բայց այդպէս չեղաւ։ Օրիորդը ինքը դուրս եկաւ, իսկոյն ճանաչեց ինձ և տարաւ հիւրասենեակը։ Այնտեղ նա ինձ նստեցրեց և սկսեց հարց ու փորձ անել, կարծես թէ ես նրա եղբայրն էի, որին նա վաղուց չէր տեսել։ Ես ամօթս կարմրեցի իմ չար դիտաւորութեան համար և չէի իմանում, թէ ինչ եմ խօսում։

—Դուք այն Ջօնն էք, որ այնպէս լաւ խօսում էր բարքում իւր մանկութեան մասին,—ասաց նա։ Ի՞նչ էք կամենում դուք. գործ. այդ հեշտութեամբ կարելի է գտնել։ Միայն ահա թէ ինչ խորհուրդ կը տայի ձեզ. ես կարծում եմ, լաւ կըլինեը ձեզ համար մի առժամանակ հեռանալ քաղաքից։ Դիտէք, թէ ինչպէս հիւանդ կուրծք ունեցողների համար օգտակար է գիւղական մաքուր օդը. նոյպէս և ձեզ

համար օգտակար կը լինի գիւղում ապրելը, մինչև որ հոգով միանգամային կազդուրուիք։ Ես այս րոպէիս մի նամակ կըտամ ձեզ հօրեղբօրս անունով. նա գիւղում մեծ կալուած ունի և ձեզ գործ կը տայ այնտեղ։ Ճանապարհածախք ևս կըտամ ձեզ և լաւ կը լինի որ հէնց այսօր և եթ գնաք։ Ես հաւատացած եմ, որ դուք լաւ բանուոր կըլինիք։

Նա հաւատացած էր, որ ես կարող եմ լաւ մարդ դառնալ։ Նա ինձ ճանապարհածախք էր առաջարկում... իսկ ես եկել էի նրա մօտ, որպէս գող։ Ես չդիմացայ, ծունկ չոքեցի նրա առաջ և արտասուքը աչքերիս ասացի։

—Ներեցէք ինձ, օրիորդ. ես գող եմ, եկել եմ այստեղ գողութեան նպատակով. դուրս քշեցէք ինձ։

Ես պատմեցի, թէ ինչի համար էի եկել նրա մօտ։ Նա բոլորը ուշադրութեամբ լսեց և ձեռքը ուսիս դնելով՝ ասաց։

—Խեղճ Ջօն, երևում է, թէ մրչաի ծանր է եղել ձեր կեանքը. և չնայած դրան դեռ ինչպէս լաւ հոգի ունիք։ Դուք կարող էք աւելի լաւ մարդ դառնալ, քան էք այժմ։

Օրիորդի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ՝ ես ինձ միագամային ուրիշ կերպ եմ զգում։ Ես այժմ զղուում եմ գինեհանից և օղուց, ուզում եմ լաւ բան անել։ Ես այժմ սարսափում եմ իմ անցեալից։

Այս վերջին օրերը չարունակ ներսս այրուում էր։ Ես անհամբեր սպասում էի այսօրուայ ժամերին, ուզում էի խօսել ձեզ հետ, խորհուրդ հարցնել, իսկ դուք հէնց ինքներդ խօսեցիք այսօր կայծի մասին։

Այն ժամանակ ես, անկիւնում կանգնած, ասացի ինքս ինձ։

Այլ ևս Մխոտած չկայ։ Մխոտածը մեռաւ. նրա վրայ խաչ է դրուած։ Այժմ կայ Ջօն Ֆօկս և այդ Ֆօկսը կայծ կըլինի։ Միայն թէ օգնեցէք ինձ, պատմիր. վառեցէք այդ կայծը Աստուածային կրակով։

—Ձեր մէջ կայ այդ կրակը. սիրելի Ջօն։ Աստուածայինն կրակը վառուել է ձեր հոգու մէջ և բորբոքուում է,— ուրախանալով ասաց Մէկսուէլը։—Պահպանեցէք միայն այդ

կրակը և մի թողէք, որ հանգչի։

Ապա Ֆօկան ու Մէկսուէլը մի ժամի չափ խօսեցին իրար հետ։ Բանից դուրս եկաւ, որ Ջօնը կարող էր լաւ առաղձագործ լինել, որ նա վաղուց սովորորել էր այդ արհեստը բանտերից մէկում։ Ուստի և նոքա որոշեցին, որ Ջօնը Մէկսուէլի և Դրէյի օգնութեամբ Ուղիղ Անկիւնում իւր համար դարձ կգլտնի և դրա հետ միասին օգնական կըլինի բարաքսում աշխատողների համար։

—Եկեղեցու զանգակատանը շատ զանգակներ կան,— ասաց Ջօն Ֆօկսը։—Կան մեծ զանգակներ, կան և փոքրերը։ Մեծերը շատ ուժգին ձայն ունին ու հեռուից ևս լսւում են. բայց չատ սակաւ են գործ ածուում, առանձնապէս կարևոր դէպքերում։ Իսկ փոքրերը զօրեղ ձայն չունին, բայց միշտ գործ են ածուում։

Դուք, պատուոյ Մէկսուէլ, և ձեր բարեկամները, որոնք գալիս են այստեղ, մեծ զանգակներն էք։ Ձեր խօսքն ու աղդեցութիւնը մեծ է, բայց դուք միշտ այստեղ, Ուղիղ Անկիւնում չէք. իսկ ես, Ջօն Ֆօկսս, նախկին թափառաշրջիկ հարբեցողս, փոքր զանգակն եմ, և ես, թէև անզօր, բայց շարունակ պէտք է հնչեմ և յիշեցնեմ մարդկանց Աստուծոյ արդարութեան, զգաստ և մաքուր կեանքի մասին։

—Եւ տայ Աստուած, որ ձեր ձայնը արձագանք գտնէր շատ մարդկանց մէջ,—ասաց Մէկսուէլ,—որ ձեր կայծի վրայ աւելանային նաև ուրիշները և որ այստեղ, Ուղիղ Անկիւնում վառուէր Աստուածային կրակի մի մեծ խարոյկ։

Ռուս. թարգմ. Մամբրէ վարդապետ.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՔ Ի Կ. ՊՕԼԻՍ XX. ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ. գրեց Աւծրունի. Փարիզ 1906. 67 էջ։

Ա.յս գրքոյկը արտատպութիւն է Դահիրէի «Լուսա-բեր» լրագրէն և նպատակն է «ներկայացնել Կ. Պոլսոյ Հա-յութեան ներկայ վիճակը»։ Յառաջաբանի մէջ արդէն հե-ղինակը աղդարարում է թէ «150,000 հայ բնակչութեամբ հայերուս ամենէն մեծ ու կարևոր կեդրոնն համարուած Վոսփորի ափերն այլևս հեռի են այն երբեմնի մխիթա-րական վիճակէն, ուր հայուն նիւթական և բարոյական զարգացման կեդրոն և հնոց կենսատուէին, և թէ հոն՝ պատրիարքական իշխանութիւնն իր այժը, ուսումնարանք իրենց փայլը, ազգային գործիչք իրենց եռանդը, կրօնակա-նութիւնն իր շուքը, մեծատուն իրենց արժանապատուու-թիւնը և ժողովուրդն իր կարևորութիւնը կորսնցուցած են»։

Գրքոյկը բաժանուած է ԺԹ. հատուածներու.

Ա. Սահմանադրութիւն և երեսփոխանական ժողով, որի իրաւունքը գրեթէ խլուած կհամարէ հեղինակը և կը-շեշտէ, որ վինչև անգամ արգելուած է Սահմանադրու-թեան տարեդարձի մեծաշուքս տօնը։

Բ. Վարչական ժողովք և խորհուրդք. նկարագրում է թէ ինչպէս կրօնական և քաղաքական ժողովները կազմա-լոյծ են եղել. անդամներից շատերը մեռել են, մնացորդներն էլ հրաժարուել են ուզում ամեն օր և միայն չքանչանների ու պատիւների ուժով են պահւում իրենց պաշտօններում։

Գ. Յանձնաժողովք, խնամակալութիւնք և ընկերու-թիւնք. հեղինակի նկարագրութեամբ բոլորն էլ ցաւալի վիճակի մէջ. եկեղեցական երգեցողութեան յանձնաժողովը միայն անուանական գոյութիւն ունի, ուսուցչաց հանդըս-տեան անդամը աչքատ, նպատակ յանձնաժողովի գանձը վերջերս դատարկացած, Իզմիրեանց մրցանակի յանձնա-

ժողովը «աւելի հակամիտութիւն ունի Արմաշականները և երբեմն ալ անկեալները նպաստաւորելու, քան թէ իրապէս արժանաւոր գործերը», ազգային ընկերութիւնները խափան լուծուած և արգելուած։ Միայն Սանասարեան վարժարանի խնամակալութիւնը «բաւական լաւ գործունէութիւն մ' ունի. ցաւալի է միայն որ վարժարանը դէպի արևմուտք (Խարբերդ կամ այլուր) փոխադրելու կարևոր ծրագիրը գործադրելու փոյթ չտարուիր»։

Դ. Գաւառաց ազգային գործերը. այստեղ էլ նոյն կազմալուծումն ու զեղծումները, թէև «գաւառաց մէջ սահմանադրութիւնը առերևոյթս աւելի կ'յարգուի»։

Ե. Թաղական խորհուրդք և հոգաբարձութիւնք վարժարանաց. «Թաղական խորհրդոց շատ քիչեր օրինական ընտրութեամբ կազմուած են». գործը մնացել է անկարող երիտասարդների ձեռքը. ժողովուրդը երկիւղից չի բողոքում և աւելի ու աւելի անտարբեր է դառնում դէպի ազգային գործերը։ Վարժարանների հոգաբարձուներից էլ շատ քչերն են յարմար իրենց պաշտօնին. օր. Կեդրոնական վարժարանի «գործօն անդամոց միայն մէն դպրոցի լեզուէ կհասկընայ ու այն ալ ուսնելիով բռնած է գործն»։

Զ. և է. Վարժարանք. Ուսուցիչք և Ուսուցչուհիք. Ազգային ազատ վարժարանաց դլխաւորն է Պէրպէրեանը. կան մանկապարտէզներ, թաղական նախակրթարաններ, որոնց ծրագիրը գիրանս. նախակրթարանների ծրագիրն է, վրան աւելացրած հայ և թուրք լեզուների ուսումը։ Կ. Պոլսոյ հայոց միակ բարձրագոյն վարժարանը կեդրոնականն է, որի ուսուցիչներն այժմ մեծ մասամբ անկարողներ են։ Հեղինակը ցաւ է յայտնում, որ իգական սեռի համար մի նոյնպիսի վարժարան գոյութիւն չունի Կ. Պոլսում։ «Պոլսոյ մէջ ուսուցչուհիները խնդալու վրայ է». կարողները յետ են քաշուած, իսկ «տափակներն ու միջակութիւնները» բարեկամների պաշտպանութեամբ և երբեմն անհրելի միջոցներով տեղ են բռնել հայոց դպրոցներում։

Ը. Ազգային մամուլ. խեղճ դրութեան մէջ. դովեստները բոլորը վճարովի են և «անոնց փոխարինութեան դու-

մասը՝ գործածուած ածականներու վայրկեան, թիւին և գրութեան տողերուն համեմատական են»։

Թ. Բարեգործական հաստատութիւնք. ընդամենը երկու հատ՝ Ս. Փրկչի ազգային հիւանդանոցը և Խաս գիւղի Գալֆայեան որբանոցը։ «Ս. Փրկչի հաստատութիւնը ոչ միայն հիւանդանոց մ'է, այլ և յիմարանոց, անկելանոց, ծերանոց, որբանոց» և ուսանողաց ապաստանարան։ Ունի 1000 պատսպարեալ (200 հիւանդ, 300 յիմար, 150 ծեր ու անկեալ, 50 ուսանող, 300 որբ) և աւելի քան 100 պաշտօնեայ։ Ազդին պատուաբեր այս հաստատութիւնը 3000 օսմ. ոսկի ծախք ունի տարեկան, որի «մեկ չորրորդէն աւելին կը ննէ հացի ու մսի ծախսն, զոր կայսերական կառավարութիւնը կուտայ»։

Գալֆայեան որբանոցում կան 70 որբ սանուհիներ. տարեկան պիւտճէն է 900 օսմ. ոսկի։ Կան նաև աղքատախնամ մարմիններ, որոնք բաւական լաւ գործունէութիւն ունին։

Ժ. Պատրիարքութիւն և պատրիարքական իշխանութիւն. ըստ հեղինակի անկեալ վիճակի մէջ, իրաւունքները բռնաբարուած, չնչուած եկեղեցականների անձեռնմխելիութեան դարաւոր իրաւատութիւնը։ Պատրիարքի առաջարկները չեն ընդունուիր, թաղրիրները անպատասխան կմնան, խնդիրները կմերժուին, բայց Պատրիարքը մնում է պաշտօնի մէջ, կամ եթէ հրաժարուում էլ է, որոշ ժամանակ անցնելուց յետոյ, խնդիրները դեռ անկատար, կրկին պաշտօնի մէջ է մնում։ Հասկանալի չէ պ. Արծրունու ցանկութեան միտքը. եթէ հրաժարուի Օրմանեան որբազանը՝ հետևանքը ինչ է լինելու։ Չէ որ ինքը պ. Արծրունին չեշտում է մի քանի անգամ, որ մեծ դժուարութիւններ կլինեն առաջիկայում նոր պատրիարք ընտրելու առթիւ թուրք կառավարութեան կողմից։

Ժ.Ա. Օրմանեան որբազանի գործունէութեան եղանակը վերնագրով հատուածում հեղինակն աշխատում է ամեն կերպ ձգել Ս. Պատրիարքի վարկը և պարզ երեւում է, որ ամբողջ գրուածքի իսկական նպատակն այդ է։

Ձենք ուզում կրկնել պ. Արծրունու վայր ի վերոյ ասէկոծ աչները Պատրիարքի անձնաւորութեան, նրա բարեկամնեբի, մտերմական յարաբերութիւնների և սովորութիւնների մասին. այդպիսի գրութիւնները սուր են ամեն քննադատութիւնից։ Այսքանը միայն յիշել կարևոր ենք համարում, որ պ. Հեղինակի կարծիքով շատ մեծ պակասութիւն է Օրմանեան սրբազանի համար Պոլսոյ բոլոր եկեղեցիներն այցելելը և տարեկան 50 անգամ պատարագ անելը կամ 100 անգամ քարոզ խօսելը, որովհետև նրա նախորդները միայն կարևոր թաղերու եկեղեցիները կերթային, միայն տաղաւարներուն պատարագ կմատուցանէին ու կքարոզէին։ Եթէ յիշենք նաև այն, որ պ. Արծրունու կարծիքով մեծ պակասութիւն է, որ կանայք ու օրիորդները էլ այցելութեան են գալիս Հայոց Պատրիարքին, այն ժամանակ ընթերցողը կարող է դաղափար կազմել պ. Արծրունու իրեն հասկացողութիւնների ու բնաւորութեան մասին։ Այդ տեսակէտից շատ ուշագրաւ են հետևեալ տողերը. «Քանի մը տարիներ առաջ ժողովրդեան զաւակ մը հանրութեան իղձն իրագործել ուզեց սպանման վտանգով, սակայն դժբախտաբար չյաջողեցաւ»։

Ժ.Բ. Եկեղեցական դասակարգն. Կ. Պոլսում կայ 10 եպիսկոպոս, որոնցից երեքը բաւական են Պոլսին հեղինակի վկայութեամբ իբր Պատրիարք, տաճնապետ կրօն. ժողովոյ և Երուսաղէմի պատր. փոխանորդ. իսկ եղած 15 վարդապետներից 3 բաւական կլինէին իբրև քարոզիչ. Ազգայիններին պէտք է ուղարկել վիճակները, որոնք թափուր են և առաջնորդների կարօտ։ Քահանայական դասն էս անկեալ վիճակի մէջ է պ. Հեղինակի կարծիքով։

Ժ.Գ. Վերջին հատուածի վերնագիրն է՝ Աշխարհական դասակարգն։ Հարուստ դասի մէջ լինչ է ազգային դպրոցներով զբաղուողների թիւը, նրանց մեծ մասը զբաղուած է թղթախաղով և կերուխումով։ Կառավարութեան հայ պաշտօնեաների թիւը գնալով նուազում է։ Միջին և խոնարհ դասակարգի հայն ընդհանրապէս աւելի լաւ է պահուած, ունի հայու սիրտ և զգացում, նախանձախնդիր է

ազգային սովորութեանց ու կրթութեան։ Ընտանեկան կեանքը անկման շրջանի մէջ է և կանայք խիստ օտարոտի են, ինչպէս հեղինակն ասում է «ի մի բան՝ եւրոպականացեալ կապիկներ են»։

Վաճառականութիւնը գեռ հայերի ձեռքն է՝ 70%, թէև օտարները արդէն մուտք են գործել և նպաստաւորում են։ Գնդարութեան և արհեստների ճիւղերի մէջն էլ հայերն յառաջադէմ են և մեծ տեղ ունին գրաւած։

Կ. Պոլսոյ հայ պանդուխտների թիւն էլ, որ առաջ 30,000-ից աւելի էր, այժմ շատ պակասել է։ Իսկ Թրքահայերի համար ընդհանրապէս խիստ դժուար, նոյն իսկ երբեմն անկարելի է դարձած թէկուզ վաճառականութեան համար օտար երկիրներ երթալը։

Երուանդ վարդապետ

Извѣстія Кавказскаго отдѣла императорскаго русск. географическаго общества т. XVII. 1905—1906 № 4, 1907 т. XIX. № 1–й.

Կովկասեան բաժնի կայսերական ռուսական աշխարհագրական ընկերութեան այս երկու տեղեկատու տետրակները հետաքրքրական յօդուածներ են բովանդակում Կովկասի ուսումնասիրութեան վերաբերեալ։ Առաջին տետրակի մէջ. ա) Краткій очеркъ растительности Гагринскаго массива, Ю. Н. Вороновъ-ի, բ) Нѣмцы—колонисты въ с. Георгіевскомъ Елисаветпольскаго уѣзда. И. Е. Петровъ-ի, գ) Развалины древняго гуузинскаго монастыря близъ сел. Ніакомъ и крѣпость Ванкъ, М. Н. Поповъ-ի, դ) 1904 և 1905 թ. տեղեկագրից երևում է, որ հայ կեանքի հետ կապ ունեցող դասախօսութիւններ են կարդացել 1) К. Н. Смирновъ – Հիւսիսային Բաղդատանում կատարած ճանապարհորդութեան մասին. ճանապարհորդութիւնը կատարած է Իգդիրից Բայազէտ, Ռնգրի—Կալա, Արճէշ, Բիթլիս, Մուշ, Խնուս, Մանազկերտ, Կարակլիս, Թոփրաք–Կա-

լէ, Հասան-կալէ, Էրզերում, Իգ և Օլթի։ Հետաքրքրական մասն է Բայազետի, Ռիթլիսի և Մուշի նկարագրութիւնը։ Առաջինը միայն 5—600 տուն բնակիչ ունի, երկրորդը 6000 տ., մօտ 25000 բնակիչներով, իսկ երրորդը 3000 տ. մօտ 15000 բն., որից $^2/_3$ մահմեդականներ են։ բ) Պ. Հ. Աւազբեկեան կարդացել է Պարսկաստանի քրդերի մասին՝ տպուած ասյն հրատարակութեան, XVII հատոր № 1 ում։ գ) պ. Ե. Լալայեան՝ Դանձակի նահանգի հայերի մէջ եղած աւանդութիւնների մասին կենդանիների վերաբերութեամբ, տպ. № 3, հատոր XVII. դ) Պ. Մեղաւորեան տպագրել է Տեղեկատուի № 5, հատոր XVII-ի մէջ մի յօդուած՝ Ճորսխի աւազանի ժողովուրդների՝ մահմեդականութիւն ընդունած Հայերի և Վրացիների՝ (Աճարացիք և Լազեր) ազգագրական պայմանների զարգացման մասին։

Երկրորդ տետրակի մէջ յիշելի են ա) Изъ путевыхъ наблюденій отъ Батума до Лимана, պատկերազարդ. Н. Н. Шавровъ-ի, և Гибель С. Ахуры іюнь, 1840 года։ Այս վերջին յօդուածը 1840 թ. Սարմալուի գաւառապետի յայտարարութիւնն է Ակոռի գիւղի կործանման մասին, որ հանուած է Երևանի նահանգի կառավարութեան դիւանից։ Այդ յայտարարութեան համաձայն երկրաշարժը սկսուել է յունիսի 20-ին, իսկ գաւառապետը Ակոռի գիւղի կործանման մասին տեղեկութիւն է ստացել նոյն ամսի 22-ին։ Յայտարարութեան հեղինակն անմիջապէս ճանապարհ է ընկնում այնտեղ և տեսնում է գիւղը ծածկուած քարակոյտերով և ահռելի ճեղքերով։ Ծածկուած էին նաև Ս. Յակոբի վանքն ու սարդարի տունը։ Փլուածքը 10 վերստ տարածութիւն էր բռնում և ծածկել էր ամբողջ գիւղն ու նրա շրջակայքը, այգինները։ Գաւառապետի ներկայութեամբ նոյն ամսի 24-ին կրկին անգամ սարից փլուածք է իջել ու ծածկել մնացած այգինները։ Գիւղի բնակիչներից ազատուել են 107 հոգի երկու տեսից, որոնցից 35-ը գիւղի մէջ են եղել. գիւղը 161 տուն է ունեցել. կորածների թիւը հաշուած է մօտ 500։

Գ.

Կ. ՊՈԼՍԻ՝ 1907 Թ. ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ

1) «*Ընդարձակ Համազգային Օրացոյց Հանրագիտական*», Բրուսայի Աբեղեան Որբանոցի սեփականութիւն, *յօրինեց Կ. Ա. Պարոնեան. Ց. Մատթէոսեանի տպարան*, 320 *երես, գինը՝ 3 ղրուշ։*

Սա զրպանի՝ պատկերազարդ օրացոյցն է, որ պարունակում է իր մէջ հետևեալ բաժինները՝ Աղիւսակ շարժական մասանց աւուրց, Օսմանեան կայսրութիւն, այն է՝ սուլթանների անուանացուցակը, որոնց թիւը, սկսած 1299 թուականից, 33 է, կայսերական պալատան, նախարարք Բարձրագոյն Դրան, Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքիս, Օսմ. կայսրութիւն, որի մէջ բնակիչների թիւը հաշուած է 37,971,560, վիլայէթների թիւը 30 է, անջատ սանջակներինը՝ 8. Երկաթուղի, Փոստ, Հեռագիր, Եկեղեցիներ, ա) Հայ եկեղեցի, կետրոնական վարչութիւն, կրօնական ու քաղաքական ժողովներ, բ) Հայ—Հռոմէական եկեղեցի՝ կրօնական ու վարչական ժողովներով, գ) Հայ բողոքական եկեղեցի՝ ազգապետներով, ազգապետարանի վարչական ժողովով և եկեղեցական հոգևոր ժողովներով, դ) Յոյն եկեղեցի, ե) Բուլգար եկ., զ) Ասորի եկ., է) Քաղդէական եկ., ը) Ղպտի եկ., թ) Հռոմէական Մարոնի եկ., ժ) Հռոմէակ.—Մելքիթ եկ., ժա) Հռոմէակ.—Ասորի եկ., ժբ) Հռոմ.—Քաղդէական եկ., ժգ) Հռոմ.—Ղպտի եկ., և Հրէայ հասարակութիւն։

Յաւելուածը, որ կազմել է Գ. Բաղդասարեանը, բռնում է մօտ 200 երես, բայց առանձին արժէք չունի։ Այդ մասում աչքի են ընկնում Հայ եկեղեցի, որ դրել է Կաթողիկոս Հայրիկը, Բեթլեհէմի Մանուկը՝ Ա. Պետիկեանի, Եկեղեցական բարեփոխում՝ Մաժանի, Առաջնապահական քերական, Առանին հիւանդապահութիւն, Բժշկական։ Սրանք միասին բռնում են հազիւ 30 երես։ Բայց այս սառաւ Օրացոյցի կէսից աւելին կարելի էր շահաւէտ կերպով կազմել, տեղաւորելով բարոյավէպերից ու խրատա-

ներից աւելի կարևոր նիւթեր։

Բերում եմ այստեղ Կաթողիկոս Հայրիկի երկտողը։—

«Հայ եկեղեցւոյ քաղաք բարձր է իւր ամէն իրաւունքներով։ Նորա հիմն Յիսուս է հաստատեր Սանդարամետին գլխուն վրայ։ Նորա դուռ բաց և ազատ է։ Ո՛վ որ մտնէ՝ կընդունի. ո՛վ որ ելանէ՝ չարգելուր։ Նորա չինուածոց քարերը սուրբ նահատակներն են։ Այս քաղաքն անպահապան չէ։ Անքուն կհսկեն նորա վրայ երկու առաքեալ և մէկ հայրապետ—Թադէոս և Բարթողիմէոս՝ Աւետարան ի ձեռին, իսկ Գրիգորի ձեռք՝ Նիկիոյ սուրբ Ժողովոյն Հանգանակ։

Ի՞նչ կկարծեն Արևմտեան եկեղեցիք։ Այս քաղաքին բանալին ուր ձեռք յանձնուած է։ Աւետարանի ճշմարտութիւն, և նախնի սուրբ հարց անսասերիւր աւանդութիւնը ցոյց կուտան, թէ Թադէոս առաքեալին ձեռք յանձնուած է։ Այդ, մեսրոպեանները դարէն մինչև ցայսօր աշխարհալուր վէճ մի յուզուած Աւետարանի գործակից երկու եղբարց, այն է՝ սուրբ Պետրոսի և Թադէոսի մէջ։ Մին կիսաստաբանէ, Աւետարանի խօսք յեղաշրջելով, թէ Յիսուս միմիայն ինձ տուաւ այն մեծ բանալին, որպէս զի ընդհանուր ազգաց և ազանց դէմ ես միայն կարողանամ բանալ երկնից արքայութեան դուռը։ Իսկ միւսը, հազար և մէկ ճշմարիտ վկայները իւ մէջ բերելով, կհաստատէ, թէ նոյն մեր վարդապետ Յիսուս ինձի ալ բանալի մը տուաւ, որ յայր և նման քո բանալիին պէս է մեծութեամբ, զօրութեամբ և իրաւասութեամբ, ես այս բանալին երուսաղէմէն առնելով եկի և երկնից արքայութեան դուռն բացի խաւարին մէջ նստող Անահիտ պաշտող ժողովրդոց դէմ»։

* *
*

2) *«Ընդարձակ Օրացոյց ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց»*, մեծ դիրքով՝ սեղանի օրացոյց, 400 երես, գինը՝ 10 ղրուշ։

Ութերորդ տարին է, ինչ հրատարակուում է այս

Օրացոյցը և ունի հետևեալ բաժինները՝ Տոմարական, Տեղեկագրական, Պետական, Պատրիարքարանի, Դործնական ու Դրական։

Բուն օրացոյցը բռնում է 37 երես, Հայոց Ցաւելուածն է, որ պարունակում է իր մէջ Անուանց տօնախմբութիւնք, որի մէջ, ամենայն մանրամասնութեամբ ու խնամքով, ցոյց են տրուած տօնակատարութեան օրերը, Ջանազան տոմարներ՝ Ցուլեան, Գրիգորեան, Արաբական, Հրէական. Ազարիայի, Նշանաւոր Թուականներ տիեզերական պատմութենէ, որ բռնում է 10 եր., Թուականներ՝ վերջին դարերու Հայ տարեգրութիւններէ քաղուած, բռնում է 18 երես. այս վերջինը բաւականին չահագրգիռ է։ Ոսկերչութիւնը Կ. Պոլսոյ մէջ, որի մէջ մտնում են և՛ Թանկագին քարեր Ծախողները, Ակնագործները, ու Մարգարտավաճառները, և բռնում է 31 եր., Աշխարհի վեհապետք, Օսմանեան կայսրութիւն, Թիւրքիա գանուղ օտար տէրութեանց դեսպանները, որոնց թիւը 19 է, Առևտրական սենեակներ՝ Օսմանեան, Ֆրանսական, Իտալական։ Հայ եկեղեցի (12 եր.), Հայրապետութիւն Հայոց, որի մէջ մտած են Հայ պատրիարքութիւնները ու ըոլոր Հայ եպիսկոպոսների ու վարդապետների անուանական ցուցակը (23 եր.), յետոյ էլ առանձնապէս ու մանրամասն տեղեկութիւններ Կ. Պոլսի ազգային հիմնարկութիւնների վերաբերմամբ, որոնցից լմայուում է, որ Պոլիսը, բացի պատրիարքից, ունի 10 եպիսկոպոս, 7 Ծայրագոյն վարդապետ[1]), 11 վարդապետ, 11 աւագ քահանայ, 79 քահանայ։

Թաղային վարժարանների ազիւսակից երևում է, որ Պոլիսն ունի 42 Հայ վարժարան, որոնց մէջ կրթուում են

1) Թուրքիայում Ծայրագոյնութիւնը լոկ անուանական չէ, ինչպէս Ռուսիայումն, և արուում է միմիայն ընտրովի արժանաւորներին, որոնք վարդապետելու շնորհք ունեն։ Վերջին օրերս, Գառնակերեան եպիսկոպոսը, երուսաղէմում, մի վարդապետի Ծայրագոյնութիւն տուեց, ու այդ լուրը Կ. Պոլսում սհագին ազմուկ բարձրացրեց։

5651 մանուկներ (3221 աղ., 2430 օր.), դաս են առած 316 անձեր (192 ուսուցիչ, 124 ուսուցչուհի. հանուր ծախսը ամիսը 85653 ղրուշ է։ Բացի սրանցից պետական և հայ ու օտար վարժարաններ յաճախում են մօտ 1500 մանուկներ։

Պատրիարքութիւն ս. Երուսաղէմի. կաթողիկոսութիւն Կիլիկիոյ, որ ունի 12 վիճակ, կաթողիկոսութիւն Աթթոռ մարայ, որ ունի 2 վիճակ։ Ս. Էջմիածնի Սինոդ, Առաջնորդարանք Ռուսիայի, Պարսկաստանի, Եւրոպիոյ և Ամերիկայի։ Այս ցանկից երևում է, որ Պարիզում ունինք ս. Մկրտիչ եկեղեցի, Մարսէյլում՝ ս. Յարութիւն մատուռ, Մանչեսթրում՝ ս. Յարութիւն եկեղեցի, Սուչվայում՝ ս. Խաչ ու ս. Սիմէոն եկեղեցիներ, այլ և՝ Հաճկատար ու ս. Օգսէնտ վանքեր։

Հայ–Հռոմէական հասարակութիւնն ունի 14 եկեղեցի, որոնցից մէկը՝ Գ. Լուսաւորչի անունով, և 18 վիճակ։ Հայ–բողոքական հասարակութիւնը, 4 տեղում, ունի եկեղեցական Միութիւններ։ Թուրքիոյ Աբեղեան քրիստոնեայ հասարակութիւնները։ Ծիսական Բառարան, որի մէջ մանրամասնօրէն նկարագրուած է մեր աստուածպաշտութիւնը։ բռնում է 22 եր., կազմել է Բենիամէրը։

Մնացած 142 երեսներում չահագրգիռ է Պատրիարքութիւն Կ. Պոլսոյ բաժինը, որտեղ թերուած են առաջնորդական վիճակները՝ պաշտօնական անձերի ցուցակով։ Օամանեան Տէրութեան հայ պաշտօնեաների բաժնից երեւում է, որ կայսերական անձնական գանձուց նախարարութեան մէջ պաշտօն ունեն 15 հայեր, Պետական խորհրդի մէջ՝ 4, Բաղաքային պաշտօնէից յանձնաժողովում՝ 1, Հաշուակալութեան ատեանում՝ 1, Ներքին գործոց նախարարութեան մէջ՝ 35, Ոստիկանութեան նախարարութեան մէջ՝ 3, Բաղաքապետութեան մէջ՝ 2, Արտաքին գործոց նախարարութեան՝ 32, Սպարապետութեան Դռան՝ 4, Դատական նախարարութեան՝ 21, Ելեմտական նախարարութեան՝ 12, Հանրային պարտուց վարչութեան՝ 76, Առևտրական և Հանրօգուտ շինութեանց՝ 44, Կրթական

նախարարութեան՝ 14, Բժշկական, զինուորական ու քաղաքային վարժարաններում՝ 6, Մաքսային վերատեսչութիւն՝ 12, Անտառաց, հանքաց և երկրագործական՝ 31, և Հեռագրական ու Թղթատարական նախարարութեան մէջ՝ 12. ընդ ամէնը՝ 325 հայ։

Այս օրացոյցը, առ հասարակ, շատ-շատերի համար կարող է շահագրգիռ լինել, իսկ կրօնականներիս՝ շատ մասամբ — պիտանի։

* * *

3) «*Ամէնուն Տարեցոյցը*» Թէոդիկի, ա. տարի, տպատան վ. և Հ. Տէր-Ներսէսեան, մեծ դիրքով, 300 երես, գինը՝ 10 ղրուշ։

Թուղթը և տիպը շատ մաքուր են։

Ուղիղ է, մարդիկ աշխատում են օգուտ քաղել Օրացոյցից, տարածելով ժողովրդի լայն խաւերի մէջ գիտութեան այլ և այլ ճիւղերին վերաբերող տեղեկութիւններ, և մասամբ հասնում են իրանց նպատակին։ Բայց ով էր կարող մտածել, որ կպատահեն այնպիսի Օրացոյց կազմողներ էլ, որոնք,—կամենալով ամէն կարգացողի քմքին յարմար նիւթեր տալ,—միմիայն աննկատաբար, սրախօսութիւններով ու դրանց նման ուրիշ կցկտուր տողերով կատուաթացնեն իրանց Տարեցոյցները։

Ես ընդունում եմ, որ կգտնվեն այնպիսիները, որոնք նոյն իսկ սիրով կտան 10 ղրուշ ու ձեռք կբերեն այդ ամենացոյցը։ Բայց մի՞թէ դա մեզ իրաւունք է տալիս՝ դնելու մեր թուրքահայ ժողովրդի ձեռքը մի սուտաղիրք, լի գրական թափթփուկներով, մինչդեռ նա այնքան մեծ կարիք ունի մատուցուր լոյսի։

Նոյնը չեմ կարող ասել, օրինակ, տիկ. Սիրանոյշի «Ձեռնարկ՝ Շէյքսպէրի մի գործին», Մեսրոպ վարդապետի (Արմաշու) «Ընթերցումը հոգեկան անհնդ է», Զաքեանի «Նկարի» և կազմողի «Զորս դոյլի» և մի—երկու այդպիսի յօդուածների վերաբերմամբ, որոնք, սակայն, հազուադիւտ բացառութիւն են այս ամենացոյցի մէջ։

Խմբ. Բահ. Նազարեանց.

ԳԻՏԱԿԱՆ

ԿՐՕՆԻ ԵՒ ԿՐՕՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ

Ըստ Տրէօլչի *.

Նեռածութիւն. Կրօնի գիտութիւնը միւս բոլոր քաղաքակրթական գիտութիւնների նման այն դժուարութիւնն ունի, որ նրա հիմնական նախադրեալները սկզբից և եթ պէտք է որոշել, որովհետև նրանցից է կախուած այդ գիտութեան ամբողջ կազմութիւնը։ Խնդիրն այն է, թէ ինչպէս պէտք է ըմբռնել մարդկային հոգու բոլոր խաչոր քաղաքակրթական ստեղծագործութիւնները. արդեօք նոքա հոգու ինքնատոյն, անկախ ունակութիւնների և այժերի զարգացման և ներքին անհրաժեշտութիւնից առաջ եկող վերատածմունքների ու արժէքների հետևանք են, թէ հոգին ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ֆորմալ կարողութիւն, որի շնորհիւ արտաքին իրական երևոյթները ըստ կարելոյն իրական կերպով ըմբռնուելուց յետոյ բնական կապակցութեան մէջ են դրւում և այդ բնական զուգորդութիւնը ծառայեցնում են ինքնապահպանութեան և ցեղական յառաջադիմութեան մարդկային նպատակներին։ Առաջին դէպքում մեր առաջ կլինին բանականութեան խորհրդաւոր, սկզբնական և միշտ յառաջադիմող ունակութիւններ և ձգտումներ, որոնց զարգացմամբ զբաղում են քաղաքակրթական մեծ ստեղծագործութիւնները՝ ընտանիք, պետութիւն, հասարակութիւն, իրաւունք, գեղարուեստ, գիտութիւն, կրօն և բարոյականութիւն։ Երկրորդ դէպքում մեր առաջ է միայն արտաքին աշխարհի առարկայական

*) Wesen der Religion und der Religionswissenschaft von Ernst Troeltsch=(Kultur der Gegenwart, Hrsg. von Paul Hinneberg; Teil I, Abteilung IV, Die Christliche Religion. Berlin und Leipzig, 1906. S. 461—491).

փաստերի կանոնաւոր և միատեսակ զուգորդութիւնը, իսկ ներքին աշխարհում չունենք մենք և ոչ մի գաղտնիք. այստեղ ամբողջ ձգտումն է այդ կանոնաւորութիւնը ճանաչել և մարդկային ցեղի պահպանութեան համար ծառայեցնել։ Առաջինը իդեալիստական ըմբռնումն է, որը հոգուն որակական առեղծագործող ոյժեր և առանձնայատուկ հոգևոր արժէքների յառաջացումն է վերագրում, իսկ վերջինը պոզիտիւիստական հասկացողութիւնն է, որը ամէնից առաջ միայն հաստատուն իրողութիւններ և նրանց օրինական զուգորդութիւնն է ճանաչում և ապա այս իրողութիւնները յանձնում է կամքին կարգաւորելու, որի ժամանակ սակայն միակ արժէքը դարձեալ մարդկային կեանքի պահպանութիւնն ու կատարելագործումն է։ Կան նաև ուրիշ ըմբռնումներ, որոնք կամենում են ազդեցութիւն ձեռք բերել դիտութեան մէջ, բայց նոքա արժէք չունեն և սկզբից և ևթ պէտք է որոշուի, թէ վերև յիշուած երկուսից ո՞ր հասկացողութեան նախադրեալներին է հետևում կրօնի դիտութեամբ զբաղուողը կամ կրօնի էութիւնը բացատրողը։ Այդպիսի որոշման համար նշանակութիւն ունի այն անձնական համոզումը, թէ հոգևոր կեանքի մէջ կան բոլորովին առանձնայատուկ, նոր իրողութիւններ առաջ բերող ոյժեր, կամ այն հիմնական դաւանանքը, թէ իսկական դիտութիւնը միայն հաստատուն իրողութիւնների օրինական կապակցութիւնն է, և հոգին միայն այն չափով անկախ է ու ինքնորոշման տէր, որչափ որ այդ չի հակասում վերևի հիմնական նախադրեալին. իսկ ինչ որ դրանից աւելի է, լոկ մարդկային երևակայութեան անարժէք ծնունդ է։

Մեր այս համառօտ ակնարկը հետևում է բացատձակապէս իդեալիստական աշխարհայեացքին և մերժում է պոզիտիւիստականը, որովհետև քաղաքակրթութեան իդեալական բովանդակութիւնների (Inhalt) իրական տարաւորութիւնը հակառակում է այդպիսի ըմբռնման, որովհետև նրա հիմնական դաւանանքը մի նատուրալիստական նախադրեալ է, առանց սոիալոգական հիմնաւորման, որը դեռ

արտաքին աշխարհի համար էլ միակ անվիճելին չէ, և վերջապես այսօրվանից պոզիտիվիզմը հակասում է իրեն, ընդունելով հոգու աստվածության և ինքնորոշման մի որոշ, թեկուզ չնչին չափ. դրանով նա միանգամայն ցույց է տալիս, որ անհնար է բոլորովին ուրանալ այն հոգևոր, չատ աւելի հարուստ իրականությունը, որ աշխատել է նա ամեն կերպ աչնչացնել և աննշանակ ցույց տալ։

Այդ պատճառով էլ պէտք է կրօնի պոզիտիվիստական տեսությունը մերժել, որը կրօնի մէջ էլ ուրիշ ոչինչ չէ տեսնում, բայց եթէ մարդկային մտածողության դադարեցնելու՝ արտաքին երևոյթները զուգորդելու և այդ պիսի ծանօթությունները մարդկային անհատական և տեղական նպատակների համար դործադրելու։ Այդ պիսով կրօնը դառնում է մարդկային նախնական մտածողության արդիւնք, երբ մարդկությունը զուրկ արտաքին իրականության իսկական գիտական մեկնութիւնից, ջանք է դործ դնում իւր նախնական պարզ մտածողության միջոցով այդ իրականությունը բացատրել, առեղծում է անձնատուրեալ աստուածներ (որովհետև ուրիշ կերպ մտածել դեռ չէ կարող) և այդ աստուածներին դարձնում է մարդկային նպատակներին ոյժ ու զօրություն տուող և նրանց իրագործումը ապահովեցնող։ Կրօնն ուրեմն մի տեսակ նախնական պարզ գիտություն է, որ անխուսափելիօրէն պիտի դադարէ ունենալ մարդկային մտածողության այդ նախնական շրջանում և նոյն իսկ օգտակար էլ է, բայց որը իսկական գիտության առաջ գալով հետզհետէ չքանում է։ Կրօնի գիտությունն էլ այդ պատճառով դառնում է այս դէպքում միայն մարդկային նախնական մտածողության զարգացման պատմության մի ուսումնասիրություն, իւր սկզբնաւորությունից սկսած մինչև դրական գիտություն դառնալն ու գիտական բարոյագիտությունը յառաջ բերելը։ Դրական գիտության պարտքն է ուշադրություն դարձնել ուրեմն կրօնի սկզբնաւորության, նրա սոցիալական գործունէության, առանց որի նա այնպիսի մեծ ազդեցություն ձեռք բերել չէր կարող,

և վերջապես նրա ոչնչացման՝ կազմալուծման վրայ։

Այս տեսութեան մէջ ամենից առաջ անկարելի է ընդունել այն նախադրեալը, որի վրայ կառուցուած է ամբողջ չէնքը։ Մարդ աղատութիւն պէտք է ունենայ կրօնի էութիւնն ըմբռնելու համար, իսկ այդ տեսութեան մէջ արդէն սկզբից և եթ յայտնի է, թէ ինչ է կրօնը։ Այս տեսութեան համար չկայ ուրիշ ոչ մի հոգևոր գործունէութիւն, բայց եթէ զուգորդող մտածողութիւնն և այդ մտածողութեան գործադրութիւնը մարդկային ցեղի ինքնապահպանութեան կամքի միջոցով։ Կրօնն էլ ուրեմն այդպիսի մի մտածողութիւն պիտի լինի, միայն սկզբնական մարդկային մտածողութիւնից յառաջ եկած, անձնաւորեալ պատկերացումների շրջանը դեռ չանցած և դեռ ևս չսովորած մարդկային նպատակները զանազանել նրանց նկատմամբ բոլորովին անտարբեր տիեզերքից։ Այս ըմբռնումը մերժելով և ընդունելով, որ անկարելի չէ առանձնայատուկ որակական հոգևոր ընդունակութիւնների ու բովանդակութիւնների գոյութիւնը, միջոց է տրւում ճանաչելու, որ կրօնը իւր ծագմամբ, զարգացմամբ ու կազմալուծմամբ միայն մի պատմական, անցողական պրոբլեմ չէ, այլ իւր ներքին բովանդակութեամբ և քաղաքակրթութեան նկատմամբ ունեցած նշանակութեամբ կարող է մշտական և իրական լինել։ Եթէ այդպէս է, չի կարելի ուրեմն առանց այլևայլութեան, առանց մանրամասն վերլուծութեան ենթարկելու իմանալ և ըմբռնել, թէ ի՛նչ է կրօնը իսկապէս։ Եւ այդ պատճառով էլ նրա էութիւնը կարելի է ճանաչել գլխաւորապէս իրենով, քննելով ու համեմատելով իւր իսկ վկայութիւնները իրեն մասին։ Հետախուզողի ձեռք ու ոտքը այստեղ արդէն կապուած չէ. նա սկզբից և եթ չգիտէ, թէ ինչ չէ կարող լինել կրօնը. նրան անյայտ է, թէ նա չէ կարող ամենևին այն լինել, ինչ որ ցոյց է տալիս։ Վերլուծութիւնը կապուած չէ մի արդէն պատրաստի հատատուն աշխարհայեացքի հետ, որի համաձայն և պէտք է կրօնի ըմբռնումը կարգաւորել, այլ նիւթից իրենից պէտք է տեղեկութիւն ստացուի իւր

էութեան մասին, և այդ միջոցով պէտք է պարզուի, թէ ինչ է այն ըստ իւր գիտակցութեան։

Այդ բանի պարզուելուց յետոյ է միայն գալիս երկրորդ հարցը՝ թէ ինչպէս է տեղաւորւում այս առանձնայատուկ էութիւնը միւս իրականութեան մէջ, արդեօք համաձայն է նրան և ինչ փոփոխութիւններ պիտի կրէ դեռ ևս։ Դլխաւորապէս պոզիտիւիզմի շնորհիւ հաւաքուած փաստերի ահագին կոյտը իսկական հետազօտութեան համար միայն նիւթ կարող է ծառայել և գլխաւոր հարցն է դառնում այժմ, թէ իսկապէս ո՞րն է կրօնականը այդ ընդհանուր անուամբ կրօն կոչուող խիստ խայտաբղէտ և զանազանակերպ երևոյթների մէջ, ի՞նչպէս պէտք է գլուխ նել դրա կրօնականը և ի՞նչպիսի նշանակութիւն է ստանում, զարգացման խորութիւն ու հետևանքներ յառաջ բերում այս կրօնականը իւր պատմական ծաւալման ընթացքում։ Ասպա նոր գալիս են միւս հարցերը՝ նրա բովանդակութեան ճշմարտութեան, զարգացման օրէնքների ու նպատակների մասին և վերջապէս նրա յարաբերութիւնը քաղաքակրթական միւս երևոյթների հետ։

Առհասարակ պէտք է հեռու մնալ այս կամ այն մետաֆիզիքական գաղափարը սկզբից և ևթ, առանց քննութեան, հաչակելու իբրև կրօնական ճշմարտութիւն, մանաւանդ որ մեր ժամանակում այդպիսի մետաֆիզիկան շատ ատեն և անտաբբեր կերպով է ընդունւում և գիտութիւնն աշխատում է գլխաւորապէս իրականը, թանձրացեալն ու փորձի ենթական չինել ուսումնասիրութեան նիւթ, այս դէպքում ուրեմն կրօնական երևոյթները։ Այդ է պատճառը, որ կրօնի փիլիսոփայութիւնը դարձել է այժմ կրօնի գիտութիւն, մետաֆիզիքայի ճիւղը՝ կրօնական գիտակցութեան իրողութիւնների անկախ ուսումնասիրութիւն, բարձրագոյն գիտութիւնը՝ մի նոր մանաւանդ գիտութիւն։ Պոզիտիւիզմն էլ իւր կողմից մեծ օգնութիւն է մատուցել այսպիսի դրութիւն յառաջ բերելուն, ցոյց տալով որ մետաֆիզիքական կրօնի փիլիսոփայութիւնը իսկապէս զօրեղ կենսունակութիւն ունեցող կրօնական գա-

զափարներուն նսեմացումն է միայն։ Այդպիսով երկու կողմից էլ ազատութիւն պիտի տրուի կրօնի դիտական հետախուզութեանը, որպէս զի հնարաւոր լինի պարզել, թէ ինչպիսի առանձնայատուկ օրակական հոգեկան կարողութեան արդիւնք է կրօնը և ինչպէս է պատկերանում այն իւր սեպհական դիտակցութեան ու կամքի մէջ։

I. ՊԱՐԶ ԵՒ ԴԻՏԱԿԱՆ ՉԱՐԴԱՑՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԿՐՕՆ

Այս հարցերի պատասխանը տալու համար ամենից առաջ հարկաւոր է մի այնպիսի անկախ հայեացք ձեռք բերել կրօնի վրայ, ուր դեռ ևս դիտական համեմատութիւնները ու բացատրութիւնները, զուգորդութիւնները ու հետևութիւնները դեռ չեն խաղում ամենևին և. ուր որ դեռ հնարաւոր է առարկային իրեն խօսեցնել։ Բայց այդպիսի դրութիւն ստեղծելն էլ շատ դժուար է, որովհետև ամենանախնական կրօնն էլ ճիշտ այն ձևով շաղկապուած է նախնական դիտական մտածողութեան հետ, ինչպէս որ իւրաքանչիւր կուլտուրական կրօն կապուած է իւր չրջանի բարձրագոյն կուլտուրայի մտածողութեան՝ փիլիսոփայութեան և տիեզերքի բացատրութեան հետ։ Թէև կրօնը կապակցուած է լինում նաև բարոյական, գեղարուեստական, իրաւական, քաղաքական և սոցիալական ըմբռնումների հետ, բայց այստեղ կրօնականը չոկելը սովորաբար շատ աւելի հեշտ է, քան թէ երբ կապուած են լինում Աստուծոյ գաղափարն ու տիեզերքի բացատրութիւնը։

Եթէ դիտութեան էութիւնն է զանազան ձևերով համեմատել, յարաբերել կամ զուգորդել և այդպիսով ընդհանուր գաղափարներ յառաջ բերել, որոնց միջոցով հնարաւոր է դառնում լուսաւորել և ճիշտ կերպով ըմբռնել առանձին երևոյթները, այն ժամանակ դիտութեան աղդեցութիւնից դեռ ևս ազատ կրօնի էութիւնը պէտք է լինի, որ նա նաև կերպով, առանց համեմատութիւնների

և յարաբերութիւնների հետևի կրօնական գաղափարի անմիջական ոգևորիչը։ Կրօնի անմիջական, նաիւ երևոյթները պէտք է ուրեմն այնտեղ որոնել, ուր դեռ ևս զարգացած չէ գիտութեան ճգտումը և չեն հետաքրքրում ընդհանուր կապակցութիւնները, այլ միայն այն չափով հետաքրքրութիւն կայ կեանքի ու մտածողութեան միւս երևոյթների նկատմամբ, որչափ անհրաժեշտ է այն՝ նրանց վրայ ազդեցութիւն գործելու և տիրապետելու համար. պէտք է մանաւանդ այնտեղ որոնել, ուր գոյութիւն ունի մի զօրեղ կրօնական զգացումն։ Կրօնական գաղափարների հակայական ստեղծագործութիւնը պէտք է յառաջ եկած լինի մի շատ զօրեղ նաիւ ներքին մղումից մեզ անծանօթ նախամարդկութեան մէջ. այդ պատճառով էլ դեռ ևս հնարաւոր է ընդունել պարզ կրօնական գաղափարներ այնտեղ, ուր այդ ճգտման վերջին ծնացորդները դեռ չեն անհետացել։ Այս բանին վկայ կարող են լինել իսկական նախնական վիճակի մէջ ծնած ազգերը և հնադէտների ու բանասէրների գիւտերի չնորհիւ մեզ մատչելի դարձած պատմութեան հնագոյն շրջանները։ Բայց այստեղ էլ շատ ղժդյշ պէտք է լինել անճնաւորող մտածողութիւնն ու առասպելը իսկական կրօնի հետ չշփոթելու և ամեն կրօնական ծէս ու սովորոյթ իբրև կրօն չբացատրելու համար։ Ամեն հասկացողութիւն անտեսանելի և իրականութեան վրայ ազդեցութիւն ունեցող ոյժերի մասին կրօնական չէ ըստ ինքեան։ Կրօնական նշանակութիւն է ստանում՝ այն միայն պաշտամունքի մէջ, իսկ պաշտամունք յառաջ է գալիս միայն այնտեղ, ուր այդ ոյժերը որևէ կերպով յայտնագործում են իրենց մարդկանց և այդպիսով պաշտամունքի առարկայ դառնում։ Որոշ իրողութիւններ և տպաւորութիւններ են պէտք, որպէս զի յառաջ գայ այն կրօնական հայեացքը, թէ այս ինչ կամ այն ինչ զօրութիւնը կրօնական նշանակութիւն ունի և կամենում է ժամանակաւոր կամ յարատև կրօնական յարաբերութեան մէջ մտնել մարդկանց հետ։

Ուրեմն լինչ չափով որ այս յայտնութեան հաւատը և նրա հետ կապուած պաշտամունքը զօրեղ, պարզ և անմիջական ներքին իրականութիւն են դառնում, այն չափով միայն կարելի է խօսել նաիւ կրօնի մասին և մենք մօտենում ենք նրան այնքան, որքան յոյս ունինք պաշտամունքը և նրա նախորդ ու հետևորդ զգացումները ըմբռնելու։ Պաշտամունքի, աղօթքի և արարողութիւնների մէջ է թագնուած պարզ կրօնական ըմբռնումը, եթէ նորա սովորական չենք դարձել և իբրև սովորոյթ չենք գործադրում։ Այդ պատճառով էլ կրօնի դուռ ազգագրական և մարդաբանական հետազօտութիւնը շատ մեծ չափով կարող է աչքը սրել, որովհետև այստեղ գիտական հետաքրքրութիւնն ու արուեստը դեռ շատ քիչ է զարգացած, թեև պէտք է միշտ զգուշութեամբ օգտուել նաիւ կրօնի համար նրա տուած ցուցմունքներից։ Առասպելական մտածողութիւնն էլ մի տեսակ գիտութիւն է, որ յաճախ կարող է և հետամուտ է գեղարուեստական երևակայութիւն (Phantasie) դառնալու, որ իւր երկու ճիւղաւորութիւններով էլ մեծ ազդեցութիւն է գործել կրօնի վրայ. բայց նրա կապակցութիւնը շատ էլ ամրակուռ չէ և այդ պատճառով էլ հեշտ է այստեղ պարզ կրօնական հասկացողութիւնների կազմակերպութիւնը։

Ապա պարզ կրօն գտնել կարելի է այն բոլոր մեծ, յատկապէս կրօնական անձնաւորութիւնների մէջ, որոնց մեծ մասամբ ժողովրդների այն դասերից են դուրս գալիս, որ դեռ ևս դուրս է գիտութեան ազդեցութեան շրջանից և որոնց ամբողջ կեանքն ու գործունէութիւնը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ բացարձակ ենթարկումն իրենց վրայ բոլորովին իշխող, անկասկածելի և անապացոյց կրօնական գաղափարի։ Դրա կրօնի հիմնադիրներն ու բարենորոգիչները, մարգարէները ու առաքեալները, քարոզիչներն ու միսիոնարները են, որոնք իրենց կրօնական ինքնագիտակցութեան մէջ շատ թէ քիչ գիտնականօրէն յառաջ գնացած կարող են լինել, բայց որոնք կրօնի մէջ ուշադրութեան են առնում միայն կրօնական գաղափարը, և

իրենց ինքնավստահության (Selbstgewissheit) համար ամենևին կարիք չեն զգում ընդհանուր ճշմարտությունների կամ իմացությունների։ Այստեղ էլ ի հարկե Աստուծոյ գաղափարը չատ անգամ նոյնն է, ինչ որ նախահայրերինը և դանուում է ժամանակի աշխարհայեացքի ընդհանուր չրջանակի մէջ, բայց գլխաւորը այստեղ ամեն անգամ Աստուծոյ կողմից յայտնուած յարաբերութիւնն է, յայտնութիւն, լուսաւորուելը, մի իրական աստուածային զօրութիւնից բռնուելը և իբրև դարա հետևանք՝ պաշտամունք, աղօթք, յարաբերութիւն, միութիւն աստուածային էակի հետ — մի խօսքով այնպիսի դրութիւններ, որոնք սերտ կերպով կապուած են առանձնայատուկ կրօնական զգացումների և տրամադրութիւնների հետ։ Ուստի սուբյեկտիվության համար նշանակութիւն ունին նաև զանազան կրօնական ընկերակցութիւնները և վերջապէս հետազօտողի անձնական ներքին փորձը և ինքնագիտութիւնը, երբ մանաւանդ նորա կապ չունին փիլիսոփայական մտածողութեան հետ, այլ ներկայանում են իբրև զուտ կրօնական զգացում, որի մէջ հետազօտողը աշխատում է հնարաւոր եղածի չափ խորը թափանցել։

Հետազօտութեան ամենամօտիկ և իսկական նիւթը այդ երևոյթներն են. եթէ նոցանից չհեռանանք, յայս կայ, որ կարողանանք քաղաքակրթութեան այս ճիւղի ընդարձակ և էական կողմերը ըմբռնել։ Բացարձակ պարզութեան (Naivität) մասին ի հարկէ խօսք լինել չէ կարող, բայց այնքան պարզութիւն կլինի, որ հնարաւոր կդառնայ հետազօտութեան ուշադրութիւնը կենդրոնացնել ամենաէականի և գլխաւոր երևոյթների վրայ։ Պէտք է զգոյշ լինել ոևէական այնպէս դատելուց՝ թէ որովհետև պարզ կրօնի միջոցով հնարաւոր է այդ երևոյթի հիմնական գծերը երեւան հանել, այդ պատճառով էլ պարզ կրօնը իսկական, մաքուր ու ճշմարտագոյն կրօնն է, հակառակ գիտութեան միջոցով մշակուած ենթարկուած կրօնի, որը այդպիսի դէպքում պիտի լինէր կեղծ, անճիշտ և օտար երևոյթների հետ խառնուած։ Ընդհակառակը պարզ կրօնն է, չնորհիւ գիտու-

թեան ազդեցութիւնից ազատ լինելուն, մեծ մասամբ միակողմանի, քաղաքակրթութիւնից զուրկ, նեղսիրտ, խառնակ և անհամաձայնութիւններով լիւ։ Բացառութիւն կազմում են այս դէպքում միայն չատ քիչ մեծ մարդիկ, որոնց մէջ իսկական պարզ կրօնականութեան հետ միացած է մի նոյնքան պարզ, մեծ, մաքուր և չիտակ հոգեկան ունակութիւն, առանց որ և է եսասիրութեան և անձնական իրաւասիրութեան։ Այդպիսիների համար գիտութիւնն ու իւր ձեռք բերած բարիքները օտար են բոլորովին և զուտ գիտական մտածողութիւնը նրանց հետ միանալ չէ կարող, բայց նոքա կրում են հանճարի կնիքը, որի համար Շիլլերն ասում է. «Քեզ գիտութիւնը ոչինչ սովորեցնել չէ կարող, նա թող քեզնից սովորի»։ Նոցա նման են այն աւելի փոքր հոգիները, որոնք պարզ ու միամիտ կերպով ենթարկւում են կրօնական մղմանը, և այդ պատճառով էլ մնացած կեանքը իւր երևոյթներով, որ չեն ըմբռնում, թողնում են իրենց Աստուծոյ կամքին ու խնամքին։ Բայց սոքա բացառութիւններ են և պարզ կրօնի մէջ ընդհանրապէս այդպէս չէ. այդ պատճառով էլ կարևոր ու անհրաժեշտ է գիտական զարգացումը՝ կարգ, հանգարտութիւն, համաձայնութիւն և համբերատարութիւն առաջ բերելու, միտքն ընդլայնելու և արտաքին աշխարհի վրայ էլ ուշադրութիւն հրաւիրելու՝ և կրօնը նրա երևոյթների հետ համաձայնեցնելու համար։ Վերջինը մանաւանդ կարևոր է նոյն իսկ ամենամաքուր և ամենամեծ կրօնական յայտնութիւնների համար, որպէս թի նրանք այդ յայտնութեամբ բռնուած դրգռուած ամբոխի չնորհիւ նեղսիրտ հերձուած և քաղաքակրթութեան թշնամի զօրութիւն չդառնան։ Քրիստոնէութիւնը իւր հաստչարհային ազդեցութիւնը ձեռք բերելց միայն միանալով հին յունա–հռովմէական քաղաքակրթութեան հետ, այն ինչ Կոպտերի և Եթովպացիների մէջ քրիստոնէութիւնը այլասերուեց բոլորովին։ Իսլամական կրօնը զարգացաւ պարսկական և յունական կրթութեան ազդեցութեան տակ և միայն տաճիկների չնորհիւ դարձաւ մի կոր-

ծանիչ հակակուլտուական զօրութիւն։ Ուրեմն պարզ և գիտութեան ազդեցութեամբ զարգացած կրօնների մէջ բաժանում դնելը նշանակութիւն ունի միայն կրօնի գիտութեան հիմքը դնելու համար, որպէս զի հնարաւոր լինի կրօնական կեանքի բնորոշ ու էական գծերը ըմբռնել ու որոշել և ոչ թէ մակերեսութային կերպով դատելով, կրօնական ազդեցութիւն անել կրօնի վրայ։ Կրօնը գիտականօրէն հետազօտելու նպատակն էլ անշուշտ կրօնի վրայ ազդեցութիւն անելն է, որովհետև այստեղ էլ կորիզն ու կեղևը որոշել պէտք է, և մանաւանդ անհրաժեշտ է կրօնական կեանքը կեանքի միւս երևոյթների հետ հաշտեցնել ու նրանց յարաբերութիւնը պարզել։

Մարդկային կուլտուրայի բոլոր ստեղծագործութիւններից ամէնից ուշ յառաջ է եկել գիտութիւնը. միւսները նախ զօրեղ ուժերի ստեղծագործութիւններ են՝ գիտութիւնից շատ առաջ հանդէս եկած։ Բայց վերջ ի վերջոյ գիտութիւնն ասպարէզ է գալիս, որովհետև անհրաժեշտ է այն, որովհետև անհնար է նախ չեզոքութեան մէջ մնալ և վերջապէս որովհետև պէտք է միացնել և որոշ փոխադարձ համաձայնութեան մէջ դնել մարդկային կուլտուրայի տարբեր բովանդակութիւնները։ Կեանքի բոլոր երևոյթների առաջդութիւնն ու էնէրգիան յառաջ է գալիս նախ այժերից և նրանց ստեղծագործութիւնների շնորհիւ և առանց այդ ուժերի նորոգութեան նոքա դոյութիւն պահել չեն կարող, բայց գիտութիւնը բերում է կարգաւորութիւն, որոշութիւն, խաղաղութիւն, ընդհանուր կապ և փոխադարձ արդիւնաւորութիւն։ Զանազան ուժերի գիտական կարգաւորութիւնը միմեանց հետ ունեցած յարաբերութեան նկատմամբ նոյնչափ կարևոր է, որչափ այդ այժերի յառաջ բերելը նախ կերպով։ Այդ պատճառով գիտութիւնը ամէնից յառաջ պիտի սովորի զանազանել իրեն նախ ուժերից ու նրանց ստեղծագործութիւններից, բայց դրանից յետոյ պէտք է ամենայն եռանդով ու չիտակութեամբ արդէն պատրաստի կազմակերպութիւնների վրայ ազդել աշխատէ։ Որ այդ ազդեցու-

թիւնը անփոփոխ չի թողնում նրանց, հասկանալի է ինքն ըստ ինքեան։ Գիտութիւնը կրօնի մէջ էլ այն արուեստը չէ, որ կարող է մուշտակը լուանալ, առանց նրան ջրտելու։ Գիտութեան ազդեցութեան տակ մտած կրօնը ուրիշ կդառնայ և պէտք է որ ուրիշ դառնայ։ Այստեղից է յառաջ գալիս նաև կրօնի ու գիտութեան մէջ եղած անխուսափելի ծանր պայքարը, այստեղից է պարզ ու զարգացած կրօնի և երկուսի մի միջնորդի տարբերութիւնը։ Գլխաւոր խնդիրն այն է, որ կռիւը այնպէս վերջացնենք, որ ոչ կրօնի առանձնայատուկ և բնական զօրութիւնը ոչնչանայ և ոչ էլ գիտական համաձայնութեան ու կարգաւորութեան, այլ և համերաշխութեան բարիքը մէջտեղից վերանայ։

II. ՁԱՆԱԶԱՆ ՓՈՐՁԵՐ ԿՐՕՆԸ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ.

Այդ է պատճառը, որ կրօնը գիտական մշակման ու աղդեցութեան ենթարկելու փորձը այնքան հին է, որքան կուլտուրական աշխարհն ընդհանրապէս։ Ամենահին ժամանակներից սկսած մարդիկ աշխատել են գիտաւորեալ կերպով միացնել միմիանց դէմ ելնող զանազան պաշտամունքներն ու աստուածութիւնները և կապել ին կրօնական գաղափարը հնար եղածի և կարողութեան չափ հնացած ծանօթութիւնների հետ։

Ա. Առաջին տեղն է բռնում այստեղ մեր այժմեան պատմական տեղեկութիւնների համաձայն Հնդկաստանի, Բաբելոնի և Եգիպտոսի քահանաների տեղծած մտացածութիւնը։ Զանազան անկախ կամ քաղաքական նուաճուածների չնորհիւ ի մի գումարած Աստուծոյ պատկերներն ու պաշտամունքները միացուում են և այդպիսով յառաջ է գալիս մի պանթէոն, որի մէջ առանձին առանձին աստուածութիւնները աղդակցական ու ցեղակցական

կապերով կապում են միմեանց հետ և ներկայանում են իբրև սերունդ մի նախաստուծոյ։ Աստուածների ծագման վարդապետութիւնը միութիւն է յառաջ բերում, միևնոյն ժամանակ համադրւում են պաշտամունքի առասպելները, զանազան այլաբանական բացատրութիւններ են ստանում և այդպիսով ստեղծւում է մի տեսակ աստուածաբանութիւն, որն ի հարկէ միայն քահանաների և գիտունների սեպհականութիւնն է մնում։ Սակայն այստեղից ժողովրդականը աւելի յառաջ է գնում, դառնում է հայեցողական, ժողովրդական առասպելը բոլորովին այլաբանութեան բացատրող մի միաստուածութիւն։ Առանձին աստուածութիւնները դառնում են ընդհանրապէս աստուածային էակի երևոյթները, տարբեր անուններ և յայտնութեան կերպեր միևնոյն աստուածութեան։ Ժողովրդական բազմաստուածութիւնը չի վերանում, բայց նրա վրայ սաւառնում է քահանայական բացատրութիւնը և մինչև անգամ երբեմն փորձ էլ է լինում այդ ուղղութեամբ մի միաստուածական պաշտամունք յառաջ բերել, որ բոլոր աստուածութիւնների նախահիմն ու միութիւնը մի սիմբոլի միջոցով պաշտում է և ուր մի Աստուածը բոլոր միւս աստուածներին իւր մէջ է պարունակում։ Ապա այդ կրօնական գաղափարի հետ միացնում են նաև ժամանակի աշխարհայեացքը, ընդհանուր միութիւն և կապակցութիւն յառաջ բերելու համար այն հակասութիւններն ու հակառակութիւնները վերացնելու, որ կարող են ելնել այս կողմից կրօնական գաղափարի դէմ։ Թէոգոնիայից կամաց կամաց անցնում են կոսմոգոնիայի՝ տիեզերքի սկզբնաւորութեան ուսմանը, որը պատկերանում է իբրև արդիւնք աստուածների գործունէութեան և ապացոյց նոցա իշխանութեան իրականութեան բոլոր երևոյթների մէջ։ Յառաջ է գալիս մի առասպելական տիեզերաբանութիւն՝ ուսումն վերին աստուածային և ստորին մարդկային աշխարհների, նրանց բացարձակ ու լիակատար համաձայնութիւնը իրար հետ, վերին աշխարհի իրողութիւնների կրկնութիւնը ստորին աշխարհում, աստղաբաշխութիւնն ու սիմեհուա-

տիքական գուշակութիւնը (Mantik)։ *Այն հակայական տգիտութիւնը, որ գլխաւորապէս բաբելոնական դիտութիւն է ձեռք բերել այդ տեսակէտից հին աշխարհի վրայ, այսօր աւելի և աւելի պարզւում է։ Ցոյների մասհայեցողութիւնն էլ նոյն ճանապարհով է ընթանում, միայն այստեղ այն քահանաների ձեռքին չէ, այլ անկախ մասծողների և գրագէտներից։*

Բ. կրօնները իրար հետ համաձայնեցնելու մի ուրիշ ձև է սինկրետիզմուս կոչուածը, որ աշխատում է զանազան կրօնների տարբերութիւնները ու հակառակութիւնները համաձայնեցնել ու մի միութիւն ստեղծել։ Այս ձևը յառաջ է գալիս աւելի անգամ այնտեղ, ուր վերջանում են տարբեր ազգութիւնների մէջ եղած պատնէշները և մի ընդհանուր կուլտուրական միութիւն է սպարէզ գալիս։ Այստեղ տարբեր ազգութիւնների զանազան աստուածութիւնները համարւում են միայն տարբեր անուններ միևնոյն աստուածութեան համար։ Մեծ չանք է գործ դրւում մի ազգի աստուածներին մի ուրիշի աստուածների, նրա առասպելների հետ նոյնացնելու համար. բոլորը ըմբռնւում է իբրև միևնոյն կրօնը, միայն տարբեր լեզուներով և աստուածների տարբեր անուններով։ Սինկրետիզմի ամենալաւ օրինակն է հելլենականութիւն կոչուածը և նրա չնորհիւ յունական ու հռովմէական աստուածութիւնների խառնուրդը, որին հետևեց նաև միւս նուաճած ու չնուաճած ազգերի աստուածների նոյնացումը յունա-հռովմէական աստուածների հետ։

Այդ նոյնացմանը ընականաբար պիտի հետևէր նրանց ընդհանուրի հիմքը գտնելու ձգտումը և ապա անհրաժեշտ պիտի դառնար նաև նրանց կապը պարզել տիեզերական մասհայեցողութեան հետ։ Այդ բանը տեղի ունեցաւ ամենամեծ չափով ազգերի և կուլտուրաների մեծ խառնուրդի ժամանակ հռովմէական պետութեան մէջ։ Գնոստիքականութիւնը մի այդպիսի փորձ է զանազան պաշտամունքներն ու աստուածութիւնները միացնելու և մի ընդհանուր տիեզերական միութիւն ստեղծելու թէոգոնիայի և

կոմոդոնիայի միջոցով։ Առանց որևէ պատմական քննադատության օգտւում էր նա զանազան առասպելներից և հատատում նրանց ու ֆանտաստիքական հայեցողությամբ գործ էր դնում ստոիկեան և պլատոնական փիլիսոփայութիւնը իւր նպատակների համար։ Այդպիսով նա մի նախակարապետ էր այն փորձերի, որ ԺԹ. դարում աւելի պարզ պատմական ըմբռնմամբ և խիստ մետաֆիզիքական ժտածողութեամբ Հեգելն ու Շելլինգը ձեռնարկեցին։

Դ. Այս բոլոր դէպքերում կրօնի գիտութեան առարկան կրօնական կեանքի արդէն պատրաստի երևոյթներն են՝ առասպել, պաշտամունք և այլն։ Մտածողութեան սառական այստեղ կենդանի ներքին կրօնական իրողութիւնը չէ։ Վերջինս կատարւում է այն սիստեմների մէջ, որոնք զբաղւում են դիտաւորապէս ներքին աշխարհի երևոյթները դիտելով ու նկարագրելով, կրօնական տրամադրութիւնները վերլուծելով և այդպիսիք յատուկ բերելով։ Հնդկական միստիկան այստեղ առաջին տեղն է բռնում։ Առասպելը և պաշտամունքը դադարում է կոնկրետ լինելուց և սկսւում են առանձնապէս շեշտուել կրօնական տրամադրութեան սկզբնաւորութիւնն ու աղբեցութիւնը, որի բացարձակ նուիրումը առ աստուածայինը իւր բոլոր խորութեամբ նկարագրութեան նիւթ է դառնում։ Սա կրօնի առաջին հոգեբանական վերլուծութիւնն է, որի մէջ քնանական բոլոր թանձրացեալ երևոյթները վերանում են, պատմական կապակցութիւնը ոչնչանում է և կրօնը հանդէս է գալիս իբրև մի բացարձակ, ամեն տեղ միևնոյն և ժամանակի ազդեցութեան չենթարկուող երևոյթ։ Բայց այդպիսի հոգեբանութիւնը մի ամուր հիմք պիտի ունենայ ընդհանուր աշխարհայեացքի մէջ, և այդ պատճառով էլ հանդէս է գալիս մի ծայրայեղ պանթէիստական բնազանցական աշխարհայեացք։ Միայն աստուածայինն է իրական. կրօնական անձնուիրութեամբ ոչնչանում է ժամանակաւոր և զգայական աշխարհի երևոյթը։ Մի նոյնպիսի զարգացումն սկսւում է նաև յունական միստիկայի շնոր-

հիւ, որ իւր կատարելագործութիւնն է գտնում Պատուոյ փիլիսոփայութեան և նոր պատուականութեան մէջ։

Դ. Մի այլ տեսութիւն է կրօնի մասին իլլուզիոնիստականը, որ նոյնպէս հոգեբանական վերլուծութեամբ է զբաղւում, բայց որի նախադրեալները բոլորովին տարբեր են. կրօնը այստեղ չէ նկատւում իբրև մի իրական ճշմարտութիւն։ Այս տեսութիւնը յառաջ է եկել չնորհիւ յունական քազաքակրթութեան մէջ զարգացած մեխանիստական բնազանցութեան, որի մէջ տեղ չունի ամենևին աստուածների մասին եղած ուսմունքը։ Այստեղ վերլուծութեան առարկան միստիքական զգացմունքներն ու զգայուճները չեն, այլ կրօնական աշխարհայեացքը, գործնական պաշտամունքը և երկիւղի ու յուսոյ զգիտները։ Կրօնը հանդէս է գալիս այստեղ իբրև արդիւնք ոչ գիտական երևակայութեան, երկիւղի և յուսոյ, իբրև մի քազաքական տեսակէտից նպատակայարմար ստեղծագործութիւն ու չէնք։ Կրօնական տեսութիւնների արդիւնքը պիտի լինի ազատել մարդկանց զգայական կեանքից, անհանգստութիւններից ու հակասութիւններից։ Առաջին անգամ մեծ ուժով աստպարէզ եկաւ այս տեսութիւնը Եպիկուրի դպրոցի մէջ և Եւհեմերոսի անուամբ, որը բացատրեց կրօնական առասպելները, Եւհեմերականութիւն կոչուեցաւ։ Այս տեսութիւնը կրկին հանդէս եկաւ վերածնութեան շրջանում և առանձնապէս զարգացաւ ներկայիս մատերիալիստական և պոզիտիվիստական փիլիսոփայութեան մէջ։

Ե. Մեծ տեսութիւններից վերջինը սուպրանատուրալիզմն է կամ յայտնութեան վարդապետութեանը։ Հիմնական կերպով զարգացել է այն հրէութեան մէջ և աւելի յառաջ գնացել չնորհիւ քրիստոնէութեան և իսլամի։ Ինչ չափով նոյն բանը կարելի է պարսկական կրօնի կամ բուդդայականութեան մէջ դանել, դժուար է ասել։ Յամենայն դէպս հրէութեան մէջ մի բոլորովին առանձնայատուկ զարգացումն է ունեցել այն։ Իսրայէլի կրօնը միակ ժողովրդական, մատհայեցողութիւնից առաջ չեկած

միաստուածութիւնն է։ Նա մի բարոյական միաստուածութիւն է, որի վերջին հիմքը աստուածային բարոյական կամքի միութիւնն ու անկախութիւնն է, որը բոլորովին հակաբազմաստուածեան մի կրօնական ժողովրդական այժ է։ Այդ պատճառով էլ նրա ճշմարտութիւնները համարւում են ընդհանուրի համար պարտաւորական. նա մի աստուածային յայտնութիւն է, որի մօտ բոլոր միւս յայտնութիւնները աստիճան ու կեղծիք են դառնում։ Սուրբ գիրքը, որի մէջ նկարագրուած է այդ աստուածային կամքը, դառնում է միակ ճշմարիտ և միակ սուրբ աղբիւրը ճանաչողութեան. իսկ ընտրեալ իսրայէլացւոց ազգի պատմութիւնը մի բոլորովին առանձնայատուկ յայտնութիւնների ու հրաշքների պատմութիւն, որի մօտ բոլոր միւս ազգերի հրաշքները առասպել կամ դիւական անուանիք են։ Յառաջ է գալիս մի ամեն ինչ բովանդակող պատմութեան փիլիսոփայութիւն. Աստուծոյ կամքը տիեզերքի նկատմամբ իր սուրբ բարոյական պատուիրանի կատարումն է. մարդկութեան ամենամեծ մասը մոլորուել է, միայն Իսրայէլի ժողովուրդն է մնացել, որին վիճակուած է իր ընտրութեան չնորհիւ ճշմարտութիւնը պահպանել և առաջնորդ դառնալ մոլորուած մարդկութեանը ղղման ու դարձի բերելու համար։

Այս տեսութիւնը յետագայում մեծ դարկ ստացաւ չնորհիւ քրիստոնեաների դիտական աստուածաբանութեան և կապուեց հին աշխարհի տիեզերաբանութեան և կրօնական փիլիսոփայութեան հետ։ Յայտնութիւնը աւելի է քան միայն յայտնութիւն. նա աշխարհի սկզբից գործող և Քրիստոսի մէջ կատարելութիւն գտած փրկութեան նախապատրաստութիւնն է. իսկ փրկութիւնը Աստուծոյ լիակատար ճանաչողութիւնն է, Աստուծոյ հետ միացում, բացարձակ վստահութիւն յաւիտենական երջանկութեան վրայ, ոչնչացումն և թողութիւն մեղքերի։ Այս փրկութեան վարդապետութիւնը ապա միանում է յունական վերջին շրջանի փիլիսոփայութեան հետ։ Հոգին բղխում է աստուածութիւնից և ընկնում մեղքի մէջ և այդպիսով

մնում է իւր բնական զօրութեան ու բանականութեան յուսով. նա ձգտում է նորից դէպի աստուածութիւնը և այդ փրկութեան ճանապարհի վրայ նախապատրաստող դեր են կատարում նախահայրերն ու Իսրայէլի մէջ եղած յայտնութիւնը, մինչև որ աստուածային ամբողջ բանականութիւնը Քրիստոսի մարդեղութեամբ յայտնագործւում է և եկեղեցու ու նրա խորհուրդների հիմնադրութեամբ առիթ ու պատճառ է դառնում մարդկանց աստուածայնելու։ Կրօնի գիտութեան այս տեսութեան հիմնական գաղափարները հետևեալներն են. մարդկութիւնը բաժանւում է երկու մասի՝ ժառանգական մեղքի մէջ մնացած և փրկուած. հեթանոսական գիտութեան մէջ էլ պէտք է ընդունել մանակի յայտնութիւն. կատարեալ յայտնութիւնը երևացել է Աստուածամարդու մէջ. եկեղեցին մի կազմակերպուած օրգան է՝ բանականութիւնը իւր կատարելութեան հասցնելու և մարդկութիւնը փրկելու համար։

Այս գաղափարների միջոցով քրիստոնէութիւնը այնպիսի հսկայական ազդեցութիւն ձեռք բերեց համաշխարհային պատմութեան մէջ, որ մինչև այսօր էլ զգալի է։ Բայց կրօնական կենդրոնական ճշմարտութիւնների իսկական վճռական ապացոյցները ի հարկէ մնում էին փրկութեան պատմութեան հրաչքները, որոնց միջոցով միայն կարելի էր ճանաչել Աստուծոյ անմիջական յայտնութիւնը և գործունէութիւնը. մնացած բոլորը մարդկային արտադրութիւն է, ուրեմն ամենայալոց դէպքում՝ միջնորդական կերպով աստուածայինն, մեղքի չնորհիւ մթագնած ճանաչողութիւն։

(Վերջը միւս անգամ).

Երուանդ վարդապետ.

Ս. Էջմիածնի տպարանում լոյս են տեսել եւ վաճառւում են

		Ռ.	Կ.
1.	Ժամագիրք մէջադիր (կազմած)	2	—
2.	Ժամագիրք գրպանի (կազմած)	1	50
3.	Մեղուաբուծութիւն Գ. Ղազարեան . . .	—	50
4.	Դաւիթ Հարքացի. Գ. Տ. Մկրտչեան . . .	—	50
5.	Ֆարրարի Քրիստոնէական արշալոյսին թարգմանեց Մխիթար վարդ.	2	50
6.	Հայկականք Գ. Տ. Մկրտչեան	—	50
7.	Աստուածուն թէ՞ Մամոնային. Թարգ. Մամբրէ վարդ.	—	3
8.	Հայերը Ռուսաստանում. Մխիթար վարդ. . .	—	80
9.	Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին. համագրութեամբ Ս. Տիգրանեանի . . .	—	40
10.	Մարդուս չա՞տ հող է հարկաւոր Թարգ. Վրթանէս քհ. Մարգարեան	—	5
11.	Հազար ու մի խաղ. Կոմիտաս վ. և Մ. Աբեղեան Ա. յինանեակ	—	15
12.	Նոյնը Բ. յինանեակ	—	20
13.	Ի՞նչ է ճշմարտութիւնը. Թարգ. Մամբրէ վարդ. .	—	10
14.	Բարի սերմեր Թարգմ. Մամբրէ վարդ. . .	—	10
15.	Էջմիածնի ծոցի օրացոյց 1907 թուականի . .	—	20
16.	Ծուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան . .	2	—
17.	Գեղեր. պատմութիւն Բիւզանդական կայսրների Թարգ. Մեսրոպ վարդապետ	1	—
18.	Խոսրովիկ թարգմանիչ և եկեղեցութիւնք, Գարեգին վարդ. Յովսէփեան	1	20
19.	Հայոց նոր վկաները, Մանանդեան և Աճառեան, գիտական	3	—
20.	Նոյնը ժողովրդական Ա. հատոր . . .	—	50
21.	» » Բ. հատոր . . .	—	50
22.	Համառօտ տեսութիւն Հայրապետական Աթոռի մասին. Ծուսիկ եպիս. Տ. Մարգարեան . . .	—	30
23.	Ջէմս բռայս. Կրօնը և եկեղեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներում. Թ. Ե. Ա. վ. Մ. . . .	—	25
24.	Տօնատոմար եկեղեցի ժողովածուի առաջին գիրքը՝ Կրէյցերի Սօնատը, Կրէյցերի Սօնատի վերջաբանը, Կանանց և Սէր Ե. Ա. վ. Մ.	—	60

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լոյս է տեսել և վաճառւում է

Սրբոյն Իրենիոսի (Երանոսի) հետևողին առաքելոց

ՅՈՅՑՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՆ

Նորագիւտ հայերէն թարգմանութիւն նախնեաց. հրատարակեցին և դերմաներէնի վերածեցին

Լից. Դր. Կարապետ Վարդապետ

և

Լից. Դր. Երուանդ Վարդապետ

Լայպցիգ. 1907. VIII+137 էջ. Գինն է 3 րուբլի.

Դիմել էջմիածին՝ Երուանդ Վարդապետին.